

ՅՈՒՇԱԳԻՐ

ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՆՈՐԸՆԾԱՆԵՐՈՒՆ...

J'ESSAIE AVEC DES MOTS USUÉS A TROUVER QUELQUE CHOSSI DU NEUF
NATHALIE SARAUTE

Լիբանանի «Լ'Օրիան- Լը ժուռ» թերթի 1995 թուականի համարին մեջ լոյս տեսած կարճամտ հարցազրույցի մը մեջ երեւցած է 95ամեայ ֆրանսացի գրագիտուհի Նաթալի Սարոտի վերի փորձառութիւնը, որ թարգմանի՝

«Մաշած բառերով կը փորձեմ նոր բաներ յայտնաբերել»:

Գրագիտուհին, անշուշտ, 95 տարեկանին չէ, որ սկսած է «մաշած բառեր»ով նոր բաներ յայտնաբերելու յափշտակութեան, այլ՝ ասպարեզին մեջ նետած առաջին քայլերուն հետ եւ այդ միջոցներուն դիմելով սկսած ու աւարտած է իր բոլոր գործերը, որոնց հաղորդած ներքին լոյսերուն, կրակներուն ու շարժումներուն շնորհիւ անշուշտ, Նոր Վեպի դպրոցին տեսաբանները զինք հռչակեցին շարժումին կարկառուն դեմքերէն մէկը:

Ի միջի այլոց յիշեցնել պետք է, որ մշակոյթի տեր ժողովուրդներուն մեջ չկայ մէկը, որուն բառարանները կազմուած չըլլան «մաշած բառեր»ով, որոնց դիմելով անկրկնելի գանձեր ստեղծեցին բացառիկ խառնուածքով աշխարհ եկած բախտաւորները:

Մեր պարագային, Մաշտոցի գիրերուն հրաշագործութեան ժամանակ, ուրիշներու պէս նաեւ մեր լեզուն չունի նոր երեւոյթներն ու գիտերը բացայայտող բառեր, յայտնագործուած չէին, որ ունենար, օրինակ, չունէինք հեռաձայն, հեռագիր, համակարգիչ օդահէն ու տասնեակ ուրիշ բառեր, ըսենք յիսուն հատ, ոչ-աւելի քան հարիւր: Միւսները, հազարները, բիւրերը կային եւ ամենուն կողմէ գործածուած ու մաշած ըլլալով հանդերձ, իբրեւ անգործածելի առարկայ երբեք մէկ անկիւնը նետուած չեն, ընդհակառակն, նոր յայտնուած խառնուածքի մը ներքին քուրաններուն մեջ ջրդեղուելով ապրած են նոր գարթօնքներ ու մասնակցած հրաշքներու արարչագործութեան:

Ասոր հակառակ փաստերուն ալ հանդիպած են մարդիկ, ու հանդիպած բոլոր գրականութեանց մեջ, անարիւն կուտակումներու, որոնք օր մը ծափահարուած են նոյնիսկ, բայց յաջորդ սերունդները վերջ դրած են այդ թիրիմացութիւններուն:

Այս գոյգ իրադրութիւնները հաշուի առնելով, գրական փորձառութիւնը կ'ըսէ, որ բառերը երկու վայր ունին, ամենուն մատչելի բառարանները եւ սակաւ ընտրեալներուն եռեւեփող հոգին: Առաջիններուն բնակիչները ամենուն շրթներուն մեջ են եւ ամենուն թուղթերուն վրայ, ուր առանձին կշռոյթներով չեն բաբախեր, մինչ երկրորդին պարագային անհատական կնիքով մը կը գատորոշուին ու նոր հունչով ու կեանքով կ'ողողեն թուղթերն ու կարօտակեզ հոգիները:

Արտաշէս Պապոյեան, «Պարոյր Սեւակի Զափածոյի բանաստեղծութիւնը» անուն աշխատասիրութեան մեջ, իր կարգին, կը հաստատէ մեր բանաձեւելի փորձած այս ճշմարտութիւնը, գրելով.

«Նրա չափածոյում հանդիպող հնաբոյր բառերն ու ձեւերը կարծեք ոգի են առնում ու շնչում առողջ ու լիաթոք եւ յաճախ այնպէս են մերում խօսքի ամբողջական հիւսուածքին, որ մի տեսակ քողարկում է դրանց հնութիւնը եւ այն տպաւորութիւնն է ստացում, որ ասես դրանք երբեք մեռած չեն եղել եւ նոյնիսկ շարքային ընթերցողի համար երբեմն շատ սովորական են թուում, հասկանալի ու մատչելի» (էջ 141):

Բառերը, հինը թէ հնագոյնները, առողջ ու լիաթոք կը շնչեն անշուշտ այն պարագային, երբ գանոնք գործածողներուն ներքին հասարակածին մեջ կ'այլակերպուին, կը ստանան, կրակ ու կշռոյթ ու հնչեղութիւն, այլապէս կը մնան մեռեալ կետերու վրայ մեռեալներ:

Որեւէ ուժ, երկնային թէ երկրային որեւէ զօրութիւն ձրի-

րեն չէ ընծայուած ու չ'ընծայուիր ա՛նգամ ամենէն օժտուածին: Օժտուածները իրենք են, որ անձամբ կը ներշնչեն իրենք զիրենք, հերոսական աշխատանքով եւ այդ կամաւոր նահատակութեան վերջ կը դնեն միայն այն ատեն, երբ յղացման տեսիլքը համապատասխան պատկերի մը մեջ առարկայանայ:

Տաղանդաւորներէն իւրաքանչիւրը այս պայմաններէն անցուցած է ու կ'անցնէ բառերը, այսինքն՝ բառարաններու ցուրտ դամբարաններէն առնելով եղածին պէս չի նետեր գանոնք անմեղ թուղթին, այլ իր հոգիէն բովերէն կրակ կամ մտքին խորերէն լոյսեր կը հաղորդէ անոնց, շեշտեր, շողեր, շարժումներ, յոյզեր:

Գրականութեան երեկուան ու այսօրուան ուսուցիչներն ու քննադատները այս յոյժ կենսական բաները կամ ասոնց մերձ ուրիշներ կրկնած են յաճախ ու գրողները անձանօթ չեն այս կենսանորոգ օրինաչափութիւններուն, բայց անոնք, գրողներէն ոմանք, այս օրուան հրապարակին վրայ եղածներուն շատերը, երբեմն այնպիսի գրութիւններ կը ներկայացնեն ընթերցողին, որ կարծեք հոգեկան բարեխառնութիւն չունին եւ բառերը բառարաններէն քաղուած են եւ ոչ թէ թրծուած ու անհատականացած են ներքին ձուլարաններուն մեջ:

Մէկուն բերնին սովորական բառը ինչ անուշ կը հնչէ, ինչպէս է իրականութիւնը Եղիշէ Զարեանի հանրայայտնի «Ես իմ անուշ»ի մեջ, ուր մարդ կը սկսի իր սիրածները առաւել սաստկութեամբ սիրել, բայց սիրելու այդ գործողութիւնը դժուար թէ մարդ վարակէ, «Լենինօրէն» շքեղ, «ստալինօրէն անշեղ» Աշոտ Գրաշիի շրթներուն, երբ բառարաններն անգամ ամբողջ անյոյգ բառեր քով քովի կը դնեն:

«Կոմունիզմի շքեղ պատի մարմար քարն էմ սիրում»

Միայն այս քարը չէ, որ «սիրում է» Աշոտ Գրաշի, այլ քարացած նոյնանման ուրիշ անկանգնելի բաներ եւս:

Անցնինք:

Ուրիշներու կարգին, գրողական մեծ, հաւաստի եւ հետեւաբար օրինակելի փորձառութիւններ արձանագրած են նաեւ մեր «մեծապայծառ» դեմքերէն ոմանք, որոնց մէկ-երկուքին խորհուրդները պիտի ուզէինք անգամ մը եւս յիշեցնել բացառաբար գրականութեան մեր նորընծաներուն, խնդրելով, որ լրջօրէն կարդան եւ նոյն զգօսութեամբ հետեւին մեծագործներէն երկուքին, Յակոբ Օշականի ու Եղիշէ Զարեանի հետեւեալ փորձառութիւններուն:

«Մտքես չէ անցած,- կ'ըսէ Օշական «Համապատկեր»ի տասներորդ հատորին մեջ,- բառ մը փոխել որեւէ գրութենէ, բայց երեսուներկու անգամ թուղթ եմ պատռած գտնելու համար սա պարզուկ նախադասութիւնը. «Դուռը բացուեցաւ», որով կը սկսի «Ծակ-պտուկը», (էջ 110):

Ահա եւ բանաստեղծութեան մասին Զարեանի բանաստեղծական յանկուցիչ յորդորը.

Ի սկզբանէ եր բանը, եւ բանն եր ճիգ ու ջանք:

Եւ ջանքին առընթեր եր - երգը:

Օշականի եւ Զարեանի ստեղծագործ փորձառութիւններուն պէս փորձառութիւններ շատ կան գրականութեանց պատմութեան մեջ: Այս կապակցութեամբ, գերմանացի Նիցշէն, ֆրանսացի Մաքս Ժաքոպը, ռուս Եսենին եւ անուանի ուրիշներ իրենց ետին ձգած են բաւական օրինակներ, որոնց հետ դիւրին է ծանօթութիւն հաստատել: Դժուարը միւսն է, երկարատեւ երկունքի յանձնառութիւնը:

Ուրի՞շ:

Ապրող գործերու համար գրականութիւնը ուրիշ ճամբայ չունի...

ԿԵԱՆՔԸ ԵՒ ՀՈԳԻՍ

Եղուարդ Պոյաճեանի արխիւին մէջ կան «Յետ գրութիւն» անունով վէպի մը ծաւալուն ատաղձը, անաւարտ բանաստեղծութիւններ, նամականիի նմոյշներ, եւ այլն: Անոնց շարքին կան եւ օրագրային էջեր, որոնց ամէնէն ծաւալունը գրուած է 1949ին, Զեսապ, ուր Պոյաճեան հրաւիրուած էր իբրեւ ուսուցիչ:

Ի դէպ, գրագետը այդ հայ գիւղին մէջ ստեղծագործեց իր պատուածքներուն ամէնէն երկարը եւ շնչառութեամբ ամէնէն ուժեղը՝ «Ջորեպան Գալուտ»: Զեսապի մէջ գրի առնուած երկարաշունչ միւս գործը այս է, շուրջ քսան էջոց օրագիր մը, որ ընթացիկ առումով օրագիր մը չէ, հոգեգիր մըն է՝ եթէ կարելի է այդպէս ըսել:

Եղուարդ Պոյաճեան, արձակի մէջ թէ բանաստեղծական յղացումներուն ընթացքին, յաճախ ուրիշ մոլորակի մը մէջ փոխադրուած հոգիի մը տպաւորութիւնը ձգող խառնուածք էր, ներքին թէ անդրմոլորակային հորիզոններուն խուզարկութեան ահագին ժամանակ յատկացուցած գրագետ-բանաստեղծ եւ նոյն պատճառներով անշուշտ, այս աշխարհի մարդոց ու բարքերուն հետ երբեք չկրցաւ վարել միանուագ կենցաղ մը:

Այդ առումով խիստ հետաքրքրական գործ է ստորեւ մեր հրատարակել սկսած գործը, որ ինչպէս ըսինք քիչ վերը, ընթացիկ օրագրութենէն աւելի հոգեգրութիւն է սկիզբէն մինչեւ վերջ...



ԵՂՈՒԱՐԴ ՊՕՅԱԺԵԱՆ

1949, Դեկտեմբեր 9
Զեսապ

Թուղթի սա ճերմակին ես կը յանձնեմ իրականութիւններ: Չեմ յանձներ լեզու: Չեմ յանձներ ոճ: Կը ջանամ դնել հոգեկան պահեր եւ ոչ թէ ընթացիկ գեղեցկութիւն. եւ ոչ թէ բառ, դարձուածք ու արուեստի կեղծիք: Յիմա՞ր մըն է ապրած այս էջերը, տեւական երազատե՞ս մը, պակասամիտ ա՞նձ մը, թէ բանաստեղծի ու սուրբի գերզգայուն խմորով տղայ մը՝ չե՛մ գիտեր: Աւելի ճիշդ՝ ես գիտե՛մ, բայց Աշխարհը, բայց ոգիները, բայց ճակատագիրը, բայց Աստուած ինձի պէ՞ս գիտեն գիս:

Իմ հոգիս գատ աշխարհագրութիւն մըն է, գատ պատմութիւն մը, գատ առասպել մը: Կրօնքի մը եւ գեղեցկութեան մը առանձին մէկ օղակն է ան, գուցէ միակ օղակը, թերեւս եթէ լաւ նայուի՝ շղթայ մը ըլլայ ան:

Յոգիս խորհուրդ է ու խորութիւն: Սեղմած եմ գայն մտածումներով, ու անկէ թափած է զօրութիւն, առեղծուած ու մեծ ջրվեժներու հեռաւոր երաժշտութիւն մը: Ու երբ դպած եմ իր կեղեւին՝ լսած եմ զարհուրելի անդունդի մը ձայնը, խօսքը, բարբառը: Քամա՛ծ եմ յաճախ հոգիս, ու անկէ դուրս վազած հեղուկն էր, մշուշ եւ բազմազան մթութիւն պարունակող տգիտութի՛ն: Ու երբ քամուած է ան, տեսած եմ, որ էականը հաւատքն է եւ ոչ թէ վեճը. վասնզի երբ հոգիս ուռի՛ կը վերածուի շուտով վեճի մը Աստծոյ հետ: Ան աւելի է միշտ, քան ինչ որ կ'ըսեմ, քան ինչ որ գիտեմ:

Կը պատկանի հոգիս դժբախտ տղու մը: Մտած է աղքատ միսերու մէջ, աղքատ ոսկորներու մէջ. կը պառկի տկար ջիղերու տակ, ու սիրտս իր տժգոյն ժամացոյցն է՝ որ խանգարուած՝ մերթ կը մնայ ետ, մերթ կ'երթայ առաջ: Կը լոզնայ արիւնովս, որ քիչ է, որ անբաւարար: Իմ մարմինս նե՛ղ է հոգիս համար. անապահով պայմաններէ շրջապատուած

վատառողջ տեղ մըն է: Դժուար բոյնն եմ ես խորութեան ու երկնքի այդ թռչունին, չքաւոր սեղանն եմ յաւիտենութեան այդ մեծաշուք բազմականին: Բազմածախս հիւր մըն է ան, ես ինձի չեմ, ու ես առա՛տ չեմ մարմնով: Ան կ'ուտէ ուղեղս, կ'ուտէ ինչ որ տեսողութիւն կայ իմ մէջ եւ ինչ որ լսողութիւն եւ ինչ որ կեանքի բան. ան չի՛ կշտանար, ու ես առատ չեմ առողջութեամբ, ու ես նուազ եմ զօրութեամբ: Ան կ'արե ժամացոյցը, որ սիրտս է ու կը վիճի Աստծոյ հետ արուած ժամացոյցի մը առջեւ կեցած եւ ուրեմն եղծուած ժամանակի մը մէջէն: Յոգիս ծանր բան մըն է իմ մէջ. կապարէն, դաժան կտուցէն ու կրակէն աւելի՛ բան մը:

Կը պատկանի հոգիս թշուառ ձեռքերու, որոնց երկուքն ալ ձախ-ձեռք են իրենց գործունէութեան իմաստով: Իջած է ոտքերու մէջ՝ որոնք մեծագոյն ճամբան կը փնտռեն՝ երբ կեանքին երթալու ամենաչնչին արահետն իսկ գլացած է իրենց: Որոնք շփոթի մը մէջ կ'ընեն իրենց երեսունհինգ տարուան տեղքայլը: Որոնք մութի վրայ կը կոխեն, որոնց գետինը տիղմ է առհասարակ: Ես ո՛ւր պիտի տանիմ այս հոգին, որ պահանջկոտ է, որ բծախնդիր է ու մեծ: Ահեղ, անիմանալի՛ այս ցանկութիւնը ես ո՛ւր պիտի տանիմ: Ոտքերս մահուան հոտը կ'առնեն ու գերեզմանի մը շշուկը առին միշտ, մինչ հոգիս՝ անհուն առեղծուած՝ անվախճան մարտերու բանակատեղիներ կը յարդարէ կրունկներուս մէջ՝ ընդդէմ ամէն կերպ մահացումի: Կ'ըսե՛

- Մահը ի՞ժ մըն է. պիտի կոխենք անոր գլխուն, ճգմենք ու անցնինք: - Կ'ըսե՛

- Պիտի պատռենք անոր բոլոր բիբերը մեզի համար. պիտի ընենք կոյր, խեղճ, նկուն, ծիծաղելի՛: - Կ'ըսե՛

- Ես կը մասնակցի՛մ Յաւիտենութեան ասպարեզին վրայ բացուած այս հոյակապ մրցումին: Ու այս խեղճ կրունկներով, ու մեծ ճամբու դեռ անվարժ այս կրունկներով՝ որոնք թշնամի մահուան հոտ առին ու գերեզմանի շշուկ: - Կ'աւելցնե՛

- Մե՛ծ է այս խաղը Յաւիտենութեան դաշտին վրայ աստուածային է եւ սքանչելի՛. եւ մահը զօրաւոր է ու հոգին ահարկու: Աստծոյ իրաւարարութեամբ կատարուող Մարդուն ու Մահուան հսկայական այս մրցումը տիեզերական

ամենն վիթխարի մրցումներն է, գերագոյն սփորն է ան գոյութեան եւ չգոյութեան: Թրիպիւնները լեցուն են հրեշտակներով ու սատանաներով՝ վա՛յ պարտուողին: Անհուն է գիւր մրցանակին ու անհաշիւ՝ պարգեւը առաջնութեան: Կ'իջնեմ, Աստուա՛ծ, հողի սա փխրուն կրունկներով՝ դաշտը խորհրդաւոր պայքարին:

Վստահ է հոգիս իր յաղթութեան: Ան օր մը ըսաւ՝

- Կը մեկնի մահը ժխտական զօրութեանց մէկ լրումէն ու Յաւիտենութիւնը կը կրծէ տակաւ անոր ուժը, եռանդը, կամքը: Հակառակն է, որ կը պատահի հոգիներուն, դրական ուժին եւ ուրեմն ճշմարտութեան յարաճուն զօրութիւնն են անոնք՝ եթէ ուզեն: Ու ես ուզա՛ծ եմ ատիկա, ու ես ուզած եմ ատիկա՛ զարտուղի՛ նախասիրութեամբ մը, նոր ու խոտո՛ր ճաշակով մը, ինքնատիպ բանով մը, որ ուրիշներուն հաշիւը չէ՛, որ ուրիշներուն տրամաբանութիւնը չէ՛, որ ձայն մըն է, որ այլանդակ կամք մըն է, անսովոր խորութիւն մը՝ բռնկած պահանջներու:

Ու թէեւ ես գրագետ եմ՝ բայց գրականութիւն չեն այս էջերը: Ո՛չ վեպ են անոնք, ո՛չ բանաստեղծութիւն, ոչ ալ նոյնիսկ կենսագրութիւն: Տեսիլքներ եւ հոգիի պահեր են, ուր կրնայ խառնուած ըլլալ ամէն ինչ: Ո՛չ կարգ կայ այստեղ, ո՛չ գրական որեւէ դասաւորում: Գրեթէ ինծի համար են սա բոլոր տողերը՝ հարիւր առ հարիւր համեմատութեամբ մը: Չիս կը զբաղցնէ հոս ամէն բան, եթէ պետք ըլլայ: Այլ անելի քան ամէն ինչ՝ կը զբաղեցնեն զիս, հոգիս, տիեզերքներն ու Աստուած:

Ես իմաստասիրութիւն մը չունիմ առանձին, այնպէս՝ ինչպէս որ ընդունուած է այդ բառը գիտական հին ու արդիական սահմանումներով:

Հաւատք մըն եմ ես, տեսիլք մը ու անհուն շողարձակումներէ բաղադրուած քառս մը: Ձայն մըն ես: Դեռ անշուշտ շշուկ մը. վերին շշուկ մը. ծայրագոյն խորհուրդէ մը ինծի եկած, ծայրագոյն ու խորախոր գաղտնիքէ մը եկած: Չեմ գիտեր նպատակն ու ճակատագիրը ինքզինք հոգիս միակ խարիսխը ըրած այդ մագնիսական շշուկին: Բայց կարելորդ, ո՛վ այս ժամանակը պղտորող մարդիկ, ո՛վ տիեզերական սրբագոյն միջոցները աղտեղութեամբ լեցնող արարածներ՝ ես չեմ ուզեր, որ այդ շշուկը մեռնի, չքանայ, փախի ինձմէ, մնայ ամուլ, չոր, առանց իր ճակատագրին մէջ տեւականօրէն աճելու: Կ'ուզեմ, որ ան նուաճէ բան մը, նուաճէ ինքզինք, դրոշմով խորապէս ինքնիր վրայ ու կեանքին, ու մահուան, ու լայնագոյն հաւատքի մը վրայ: Ու նշաններէն մէկը ըլլայ Յաւիտենութեան, հրակիզող ցուցիչ մը Աստուծոյ գութին եւ զօրութեան: Կ'ուզեմ, որ այդ շշուկը ճակատագրով նոր ու հզօրագոյն Ձայնի մը: Կ'ուզեմ այդ Ձայնը ըլլալ: Ու կ'ուզեմ, որ այդ Ձայնը ըլլաս, ո՛վ եղբայր Մարդկութիւն, ո՛վ թշուառ Մարդկութիւն, ո՛վ աղտոտ Մարդկութիւն: Կ'ըսեմ:-

Աղբ ես դուն: Որդնտա՛ծ, ճանճերով ու գարշահոտութեամբ լեցուն աղբ ես դուն եւ անարժան սա խորունկ կեանքին թեկնածուն ըլլալու: Աղբ ես եւ մթութիւն:

Ու մորթո՞ց ցուրտ է. թանձր է եւ խո՛ւլ: Նկարուած են այդ մորթին վրայ կոյր աչքեր, խաւարի գօտիներ: Աղբ է այդ մորթը, դառն, բոլորովին լեղի: Կը կազմէ ան տգիտութեան եւ չարիքի արհաւիրագին ովկիանոսի մը մակերեսը: Փշոտ է քու մորթո՞ք, ու մեղքին վերջին ծանրութիւնն է ան: Այդ մորթը կշռոյթ չունի. ոչ մէկ եղանակ գիտէ, ոչ մէկ երգ կը ճանչնայ: Կաշի՛ մըն է. տիղմերու մէջ քաշկռտուող եղերական խոզի մը կաշին, որ չէ իմացած ո՛չ մէկ հեքիաթ, որ կ'ապրի երազէն հեռու, իր ստեղծած ճահիճին ու քարքարուտին մէջ, որուն իրականութիւն անունը կու տայ, ամենասոսկալի տխմարու-

թեամբ մը:

Մարդկային մորթը, ով անմիտ Մարդկութիւն, այդպէս չ'ըլլար: Դեւին՝ գործիք, ու մխրճուած՝ ճիւղային անասնութեան մը մէջ: Ինչո՞ւ մազ կը բուսնի հոն եւ ոչ թէ խիղճ, եւ ոչ թէ գութ, եւ ոչ թէ գիտակցութիւն: Ինչո՞ւ ամլացած ես, անհունչ ես եւ անարձագանգ: Կարմիր արձանագրութիւն մը կայ անոր վրայ. ու կայ անոր վրայ ցեխին մահաշուք կենսագրութիւնը: Անասնացած ու դարաւոր, ու վաղնջական աղբի մը վեպը կայ հոն, որուն դուն պատմութիւն կ'ըսես՝ քանի որ տգետ ես, տխմար ու վատ: Եւ եղեռնագործ: Եւ ապաբարոյ: Եւ շուն:

Ես կարդացի քու մորթիդ վրայ տգրուկի մը արիւնտ վատութիւնը: Զու այբուբենիդ տառերը կազմուած տեսայ ատելութենէ, նախանձէ, ստրկութենէ, սողնութենէ եւ ասոնց շուրջ պտուտկող բաներէ: Եւ իմ ընթերցումս չէ վերջացած, այլ կ'ըլլայ ան անելի զարհուրագին բան մը, անելի քստմնելի բան մը:

Դուն գիտուն չես ո՛վ մարդու մորթ, ո՛վ մարդու ուղեղ, ո՛վ մարդու ներաշխարհ: Զու ունեցած բոլոր բաներդ ծուռ, քու բոլոր հաշիւներդ սխալ, քու բոլոր նկատումներդ՝ դատապարտելի: Ինչ որ ըրիր, ինչ որ կ'ընես կիրք է միայն, մաղձ եւ յաւակնոտութիւն: Այս ճամբով դուն կոչուած ես ոչինչ նուաճելու, ոչինչի յաղթելու, ոչ մէկ տեղ հասնելու: Դուն կոչուած ես փճանալու, կործանելու ինքզինքդ. ըլլալու՝ տիեզերական անհուն կարգաւորութեան մէջ՝ պղծութեան եւ մոխիրի թշուառ կղզի մը: Եւ մինչ ամէն ինչ պիտի ապրի, դուն պիտի կոչուիս, հէ՛ք մարդկութեան, Մահուան յաւիտենական կղզին, որուն շուրջ պատուհասները պիտի շաչեն եւ որուն վրայ բոլոր ամպերը պիտի դիզուին, եւ որուն վրայ դժոխքը պիտի փլի: Պիտի ապրին ու տեսն բոլորը, ու դուն պիտի ըլլաս գերեզման, լռութիւն եւ աղետ: Ինքզինքի՞դ աղետը: Ինքզինքի՞դ ողբերգութիւնը: Ինքզինքի՞դ թոյնը: Չէ՞ որ դուն փտածութիւն ես եւ գարշելի հոտ: Չէ՞ որ դուն յամառ ճախաւերութիւն ես եւ անկանգնելի ստորնութիւն:

Ես Ձայն մըն եմ: Ձայն մը՝ ինկած ժամանակներու մէջ. բիրտ, ինկած տարածութիւններու վրայ՝ - անելի՛ քան բիրտ: Անհաւատութեան դարեր կան իմ ետիս: Կարծես յաւիտենութիւններ, ու ներկայ մը կայ ոտքերուս տակ՝ լայրծուն, մութ, պաղ:

Ձայն մըն եմ խորութեան մէջ, յուսահատութեան կայքերու վրայ: Բանտարկուած ձայն մը: Որուն շուրջ գոյացած է ծծումբ: Որուն ունկնդիրն են խլութիւններ: Այդ խլութիւնները թանձր են անոր քով, թունաւոր եւ յարձակողական: Խուլ պատ մը կայ իմ շուրջ:

Խուլ է իմ բարեկամս: Խուլ է իմ թշնամիս: Կայքերը խուլ են ու ճամբաները խուլ: Ճահիճ, խլութիւն: Համբ է ամէն տեղ այս կեանքը եւ ինծի համար իր կարգադրութիւնները՝ բոլորն ալ խոտոր, շեղ, շիլ ու շփոթ: Ան չժպտեցաւ ինծի բնաւ, այլ իր ամբողջ ըրածը, այսքան տարի, ծամածռութիւն եղաւ միայն:

Ոգիները, բարի՛ ոգիները լուռ են, յամառ, անողորմ: Կարծես թէ իրենք են բուն խուլերը: Իրենց հետ եմ միշտ եւ անոնք անտեսանելի են ինծի ոչնչութեան չափ: Գիտեմ որ կան, գիտեմ, որ կ'ապրին, գիտեմ, որ քովս են: Անոնց շատերն ու զօրաւորները մէջս են շարունակ: Այլ կարծես ծոյլ են, այլ կարծես յոգնած, այլ կարծես դժգոհ: Ո՛րչափ պիտի մնան այդպէս: Որչափ պիտի սպասեն իրենց այդ թմրութեան վիճակէն դուրս գալուս համար: Ես տարիքս կ'ամռնեմ ահա երեսունհինգ տարեկան կ'ըլլամ քանի մը ամիսէն: Ինչո՞ւ անգութ ես այդքան. ո՛վ ըսած է իրենց ըլլալ այդքան անողորմ, դանդաղաշարժ, երկայնամիտ. ո՛վ յորդորած է բարի ոգիները իմ փորձութեանս: Մանր սատանաներու կեր եղաւ ցարդ կեանքս: Անոնք եղան արթնամիտ, ճարտար, արագաշարժ: Յարձակեցան բարոյականիս վրայ, ու բարո-

յականս եղաւ յաճախ ցեցէ կերուած գարշելի լաթ մը. կրծեցին հոգիս ու զայն վերածեցին մաշած դրօշակի մը: Անհամար մանրէներու պէս սատանաները կը թափառին մարմնիս բջիջներուն մէջ ու կը ցանեն անոնց վրայ իրենց ցանկութեան ու պծականի ձուերը: Կը դնեն լեզուիս վրայ դժգոհութեան եղերական բառեր, արհաւիրագին ու սառնեղէն բացատրութիւններ: Կը վառեն ներսս ժխտումին քառասուն կրակները: Կը դնեն նայուածքիս ետին ատելութեան եւ նախանձի այն տուփ մը լուցկին, որ հազիւ մինչեւ գերեզման կը վերջանայ: Կը մթերեն մէջս մռայլ իրադարձութիւններու համար մերժումին բոլոր վտանգաւոր հեղուկները, - աղի ջուր, նաւթ ու քացախ: Նուաճած են զիս ու կ'արշաւեն մէջս, ու կը շատնան, ու կը վիտան մէջս: Ականջիս տակ կը գետնեղէն բամբասանք, ստութիւն, պզտիկ ու մեծ, մեծ ու ամեհի անարդարութիւններ. ականջներուս տակ կը հնչեցնեն դեռ՝ տրտում, ցաւագին, մռայլ յիշողութիւններ. կը կրկնեն, կը կրկնեն միշտ՝ թէ այսինչը գործեց ինձի այս չարիքը, եւ այսինչը՝ ա՛յն թէ ես անիրաւուեցայ, անտեսուեցայ, մերժուեցայ, հեռացուեցայ, մեկուսացուեցայ, թէ զիս մարդիկ մանրացուցին, ըրին մարդ արարածէ պզտիկ կտոր մը, ճղճիմ, խեղճ, արգահատելի ու նոյնիսկ չարգահատուած մէկը: Կ'ըսեն, չեն յոգնիր՝

- Փո՛քր մարդիկ քեզ փոքրացուցին, ըրին իրենց պէս եւ իջեցուցին քեզ իրենցմէ վար, ամէն ինչով՝ իրենցմէ շա՛տ վար: Եւ զիս թաթախուն ընելով դառնութեան ու զայրոյթի ահագնաբարձ նաւթի մը մէջ՝ կը վառեն զիս սոսկալի բոցի մը պէս, ու շուրջս դառնալով, եւ այցելելով հոգիիս ամէն խորը՝

- Քու փրկութիւնդ մենք ենք, անթիւ, անհամար, աննըշմար սատանաներս: Դուն կը վերականգնես ինքզինքդ մեզմով, մեր օժանդակութեամբ: Ու մենք կ'ուզենք ատիկա. կը տեսնանք ատիկա. պիտի ընենք ատիկա:

- Դուն կը յաջողիս, դուն կը փառաւորուիս, դուն կը բարձրանաս՝

«Երբ մարմնիդ մէջ հալեցնես ինչ որ կարծր է, ինչ որ տոկուն, ինչ որ ջիղ է ու մա՛նաւանդ ոսկոր.

«Երբ աչքերուդ մէջ կարենաս դնել խորամանկութիւն, քաղցրութիւն, խաւար ակունքներէ բխող հնազանդութեան լոյս մը.

«Երբ թոքերուդ աշխարհին սորվեցնես տգիտութիւն ու մեղր դնես շրթներուդ. օժես բառերուդ կեղեւը փայլով եւ անուշահոտութեամբ.

«Երբ սրտիդ խորանները փակես, հեռանաս ամէն բագինէ, ամէն սրբատեղիէ: Երբ սրտիդ բոլոր անցքերը գոցես ցեխով.

«Երբ ամէն արթննալու դուն քու խիղճն ու անոր ստուերներն, ու անկէ մնացած յիշողութիւնները լափես զայրալիր գազանի մը պէս:

Կը յաջողիս, մանրացած, չքացած, անեացա՛ծ իսկ էակ՝ Ստելով՝ զերօ ժամէն մինչեւ ժամը քսանչորս, ամէն շաբաթ, ամէն ամիս, ամէ՛ն տարի: Մինչեւ մահ:

Կեղծելով՝ ճարտարօրէն, հետեւողականօրէն, մանրագին նրբութեամբ: Որ ճշմարտութիւնը շուարի, շփոթի, չհասկնայ՝ ի՞նչը լաւ է, թե՞ դուն, ի՞նչը ճիշդ է, թե՞ դուն, ի՞նչը է Աստուծոյ հայելին, թե՞ դուն: Կեղծելով: Բայց միշտ, բայց բացարձակապէս ամէնուն: Սիրոյ ժամանակ եւ ատելութեան ժամանակ. երբ կը հայհոյես ու երբ կ'աղօթես, երբ կը պահանջես ու երբ կը պաղատիս: Նկատե՛ եւ ընդունե՛ ընդմիշտ՝ որ պիտի ապրիս. ու հետեւաբար ապրողը զինանշան չունենար: Ո՛չ կին ունի ապրողը, ո՛չ հայրենիք, ո՛չ զաւակ, ո՛չ կրօնք եւ ոչ աստուած: Ապրողը կեանք մը ունի դիմացը ու թշնամիներ, եւ զագրելի ոտիներ, իրեն ոչ մէկ ատեն չներող խստութիւններ, տաժանութիւն, անողորմութիւն: Այսինքն՝ վերք ու մահ ունի դիմացը եւ շքեղ կեանք մը: Մեռելներն ու մեռելի չափ անկար մարդիկը ունին բարոյական, ունին եկեղեցի, ունին ընտանիք, ունին հայրենիք եւ ունին աստուած: Իսկ ասոնց մէջ եւ դուն, իսկ ասոնց մէջէն պէտք է ելլե՛ս դուն,

պէտք է ժայթքիս մութին ու խեղճութեան այդ աշխարհէն: Պէտք է բիսիս, պոռթկաս, առատանաս:

Ու կը յաջողիս սողալու պայմանով:

- Սողա՛լ, որովհետեւ պէտք է յառաջանալ կեանքին մէջ. դիմել դէպի հո՛ն՝, ուր անպայման մեղր կայ, կայ միս ու կարագ, կայ սանդուխ մը դէպի վեր եւ աթոռ մը քիչ անդին: Ա՛խ, տխմար ես դուն ու սնամիտ, այդ քիչ անդիի աթոռը. մարդիկ, մարդկութիւնը ամբողջ, կը շարժի դէպի քիչ-անդիի աթոռը.

- «Սողա՛լ՝

Որովհետեւ գեղեցիկ կեանքը պէտք է ճզմել, եւ ուտել ճզմուած կեանք, ճմլուած կեանք. այդ է հաճոյքը, ատոր կ'ըսեն կամք, ու այդ է բուն հանճարը:

- «Սողա՛լ՝

Որովհետեւ ոչ թէ ոտքով, այլ քարով, ստամոքսով պէտք է գծէ իւրաքանչիւր մարդ իր ճամբան: Աշխարհիս մակերեսը կ'ուզէ իր վրայ հետքեր ստամոքսային շարժի եւ ոչ թէ ուղիղ քալուածքներու: Ճարտար եղիր ու թափանցամիտ: Լա՛ւ նայէ պատմութեան, զննէ անոր յատակը, չե՛ս տեսներ՝

Պատմութեան մէջ ոտքեր չեն քալած. սո՛ւտ է: Ոչ մէկ հետք: Թաւալուած են պատմութեան հողին վրայ ստամոքսներ. հաշիւով ուռած եւ հետեւաբար չափազանց ծանր՝ անցած են այդ ստամոքսները, ձեան ահարկու հիւսերու պէս իջած զառիթափներէ, անցած անապատներէ, գետեզերքներէ, կամուրջներէ: Ելած են քարայրներէ եւ անիմանալի, եւ հանճարեղ համբերութեամբ մը ըրած իրենց դարերու ճամբան, չորս ոտքով քալող գազաններուն սոսկում, զարմանք ու զայրոյթ պատճառելով: Դարերը քաղած են բոլոր խելացի ստամոքսները եւ պարպած սա քսաներորդ դարու մայրաքաղաքներուն մէջ. դրած են զիրենք ելեկտրական լոյսերու տակ, դրած խորը՝ նիւթի գիտութեան, նիւթի պաշտամունքին:

- «Յնազանդե՛ սողալուն, հնազանդե՛ նենգութեան:

Որովհետեւ նիւթը մեծ բան մըն է, իրական բան մըն է, զարհուրելի՛ բան մըն է: Ու քաղցր է իր այդ յատկութիւններով: Նայե՛ նիւթը աթոռ է, ռումբ է եւ ոսկի: Առատածե՛ռն է. կու տայ դիրք, կը շինէ համարում, կը ստեղծէ վարկ: Կը քանդէ շուրջդ ամէն ուժ, ամէն թիրիմացութիւն, կ'ընէ քեզ մաքուր. կը շողաս, կը մեծնաս, կ'ըլլայ մարմինդ բարգաւաճ. կը լեցուիս տաք ճարպով. ուղեղդ կը փայլի, շուրջդ ժպիտ, յարգանք եւ բազմաթիւ խոնարհութիւններ կը հաւաքուին: Չես ըլլար նկուն, տխրեղձ՝ ինչպէս հիմա: Այլ կը մօտենան ճառագայթիդ. կը հայցեն քեզմէ խօսք, խրատ, խորհուրդ: Կ'ուզեն որ խօսիս ու լռութիւնդ կ'ըլլայ իրենց ամէնուն պատկառելի: Անոնց մորթերը կը դողան ու կ'իմանան քեզ. զգայուն կ'ըլլան այդ մորթերը այն ատեն. կը շիկնին. կ'ունենան զղջումի նման բաներ, գութի նման բաներ, քեզ գնահատելու պէս բաներ, ու քեզ ծափահարելու պէս հաճոյք մը: Ա՛խ, եթէ ձգես համբուրեն քեզ, ի՛նչ ուրախ կ'ըլլան, ի՛նչ երջանիկ եւ որքա՛ն պատուրւած:

- «Մերժէ ներսեդ մարդիկը, մարդկութիւնը: Սողա՛ ու գնա՛, վստահ, որ միլիոններ կը սողան ետեւեդ:

«Մեր բոլոր սատանաներուս, խոշոր ըլլանք, թէ աննշան, իմաստուն հրամանն է քեզի՝

Տափակ եղիր, տափարակ եւ գորշ: Ատելութիւնը թող յստակ ըլլայ քեզի համար, եւ յետոյ ամէն ինչ տարտամ, անգոյն, յեղեղուկ: Երկիրը այսպէ՛ս կ'ուզէ: - Մութ եւ հորիզոնականութիւն: Այս է իր կամքը, ու մենք երկրին կամքն ենք: Ձայնն ենք սկսող մարդկութեան ու առողջ շիջերու մէջ փաթեւած պիտի տանինք մարդկութիւնը իր վախճանին: Մարդկութիւնը ապրած է քարայրի մէջ, կ'ապրի այսօր եւս աւելի ընդարձակ քարայրի մը մէջ, որ իր ստամոքսն է եւ ուր պիտի մնայ մինչեւ իր վախճանը: Ծռէ ու համբուրէ մեզ, դուն տխրեղձ, դուն խաբուած շշուկ:

Ես տեսիլք եմ եւ ջիղ: Թող բոլոր կոկորդիները, մարդու

եւ աներեւոյթ դէպքի, պոռան, աղաղակե՛ն վրաս: Թող թքնէն դէմքիս իրենց խաւարը, իրենց ատելութիւնն ու աղտը: Ես հաւատքն եմ: Անհամոզելին եմ: Չոհն եմ: Իրականութիւնն եմ փրկութեանս, փրկութիւններու: Ջիղերովս պիտի կարեմ իրականութիւնը երագին, նեարդ առ նեարդ պիտի հիւսուիմ ճշմարտութեան ու հեքիաթին հետ:

Սուտ է ամէն սատանայ, ու վատ է ամէն մարդ:

Կ'ուզեմ, որ ամէն մարդ կարենայ իր մարմինը ընել առագաստ եւ հոգին սրբութեան անհուն քամի. կ'ուզեմ, որ մարդուն ոսկորը ըլլայ ուղղահայեաց կայմ կեանքի վարար ջուրերուն վրայ. սպիտակ կայմ՝ որ հոգիի անհուն քամիին հետ կը մղէ առագաստները գոյութեան մաքուր ակունքին:

Շշուկը կ'ըսէ.-

- Տեղ մը արդարութիւն կայ ու հոն տեսիլք մը կ'երեւի: Սիրտ մը կը փողփողի, իմացականութիւն մը կը խտխտայ, եւ խիղճ մը արե՛ւ- արե՛ւ դէպի յաւիտենութիւն կ'ելլէ:

Ճաղկկներու կշռոյթ մը կայ՝ դեռ ոչ ոք չի գիտեր: Պար մը կայ, անդին երկնակամարներէն, ու սիւթը ինքզինք ուրանալով, ինքզինք հերքելով, ինքզինք մերժելով, ու թափելով ինքզինք բոլոր ստորին բաներուն վրայ՝ կը սլանայ ետեւէն այդ խորունկ, այդ անհրաժեշտ, այդ անդրտիեզերական պարին: Ու բոյր կայ պարէն անդին ու ճշմարտութիւնը կայ այդ բոլորին վրայ: Եւ ճշմարտութիւնը անկիւն մը չէ, աստիճան մը չէ, գիծ մը չէ: Գաղափարի երթ մըն է ան, ոգիի մը տիեզերածաւալ կրակը, ողջութիւնը, փայլը:

Թող գարշանքնե՛ր կուտակեն բոլոր այդպէս կամեցողները՝ իրենց լեզուէն մինչեւ սիրտը լսողութեանս. ա՛լ հոգ չէ: Կրնամ մեռնիլ. մթերք ունիմ անսպառ մաքրութեան եւ ունիմ ուժը ճշմարտութեան հսկայական տեսիլքին:

Ճշմարտութիւնը հեղեղ է անծայրածիր գաղափարի: Պար է ան, քաղցրագոյն բուրմունք, գերագոյն հեշտանք: Աստծոյ ըմպելիքն է, պայքար, խաղաղութիւն եւ բազմատենդ ընթացք:

Պետք է ուղիղ ըլլալ: Քալել ոտքո՛վ, ճգմել տափակութիւնը, վատութիւնը, խարդախութիւնը: Քանդել քար առ քար ամէն կեղծիք, ամէն սուտ բան, ամէն շողոքորթութիւն: Կործանել՝

Ինչ որ շիտակ չէ, ինչ որ անխղճութիւն է, ինչ որ ես եւ անձնական հաշիւ:

Խորտակել՝

Բաներ, որոնց անցած է ժամանակը, բաներ, որոնց համար անհրաժեշտ չէ՛ տեսիլը, նորէն գոյանալը, նորէն տիրապետելը:

Քսակ չկայ, աթոռ չկայ եւ ուղիղ մարդուն համար՝ ճարպ չկայ: Պետք է ըսել չենք ուզեր. կը մերժենք: Մեր հոգիները արի են, ու մեր կամքերը ամուր: Սքանչելի ենք՝ երբ կը ճգմենք դաւադիր մարդկութեան բոլոր փտութիւնները, երբ կրակի կու տանք սա դիզուած բոլոր աղտոտ նկարները, աղբակոյտի վերածուած սա ստապատում գրոյցները:

Պետք է ըսել, - կ'ըսէ շշուկը, - որ կ'ուզէ ինքնիր մեծ Ձայնը ըլլալ.-

Մենք շատախօս չենք, ու կ'ատենք շաղակրատ մարդիկը, որոնք սողացին հոս-հոն, եւ գոռոզ են հիմա՝ երբ դիրին ու փուտ բառեր կը թափեն հանրութեան առջեւ:

Մենք կ'ատենք այդ շատախօսներուն իրանը, ուր խոնարհումներու հետեւանքով ոսկոր չմնաց. ամէն բառի մէջ թոյն դրին, սեւութիւն դրին. բոլոր բառերն ու բոլոր ձայները պարպեցին տակաւ իրենց բնական ծուծէն: Թող իրենց մասն իրենց բոլոր անիմաստ բառերը, իրենց բոլոր ծպտուած նախադասութիւնները: Մենք ոճ ուզեցինք կեանքէն եւ խորութիւն, իմաստութիւն, մարդկային հանճար: Ուզեցինք, որ մարդկային լեզուն լուսեղէն հորիզոններ ունենայ երբ սկսի խօսիլ. ուզեցինք, որ ամէն բառ ըլլայ արեգակ՝ ծագելով ճշմարտութենէն ու մարելով ճշմարտութեան մէջ: Ժահրե՛ր ուզեցինք, միթէ թունաւոր շաքարեղէններ՝ ուզեց երիտասարդ մարդկութիւնը: Կ'ատենք նաեւ ինչ որ թաց ժպիտ է, ինչ որ ծածուկ ակնարկութիւն, ինչ որ մեղկութիւն է եւ ինչ որ

թմրութիւն: Մենք հաշիշ չենք ուզեր եւ կը զգուիք վարագոյրներու դրութենէն:

- «Ճշմարտութիւնը կ'ուզենք:

Եւ ան ձեր յեղեղած իրականութիւնը չէ. ան ճիշդ ձեր անարգած երագն է, իտեալը, բանաստեղծութիւնը, գերագոյնին հաւատքը:

Ու հետն ենք, ու կը սիրենք ճշմարտախօսը.

Թող ըլլայ նոյնիսկ շատաբան. երկար խօսի: Որչափ շատ աստղ՝ այնչափ հիանալի երկինք. եւ որչափ խօսի ճշմարտախօսը, իմաստին երկինքները այնքան աւելի կ'աստղագարդուին: Ճշմարտախօսը լոյս կ'աւելցնէ խաւարին վրայ եւ անոր պարբերութիւնները մեկական Ծիրկաթին են՝ կեանքէն դէպի մահ ու անկէ Յաւիտենութիւն երկարող:

Թող մէջս տարիներու իրենց սանձարձակ կեանքը վարեն տկարութեան բոլոր տափակութիւնները, թող սատանաները, մեծ ու պզտիկ՝ ջիղերուս զարնէն մկրատ, ու դնեն իրենց ակռաներուն խարտոցը ոսկորներուս վրայ. թող բռնեն նաեւ եութեանս պատկերին առջեւ մուտք հայելի. թող գրգռեն մանաւանդ ասկէ վերջ եւս ինծի դէմ կեանքը, բախտը, փորձութիւններն ու մահը: Ամէն ինչ չէ ասիկա, ու վերջնական կորուստս պիտի չարձանագրուի ատով: Պիտի ըլլամ յօտուած այգի մը. եւ ջիղերս օր մը աւելի պիտի զօրանան ու պիտի տան աւելի առատ պտուղ:

Ուղղահայեաց եւ հորիզոնական կեանքի պայքար մըն է ի վերջոյ եղածը. սատանաները կ'ուզեն, որ հորիզոնական ըլլամ ու դիրութեան ետեւէ, իսկ աստուածայինը կ'արգիլէ ատիկա: Ան շշուկ մըն է, որ Ձայն պիտի ըլլայ եւ տեսիլք մըն է, որ պիտի դառնայ շուտով իրականութիւն: Իսկ աստուածային շշուկը կ'ըսէ՝

- «Ուղղահայեաց եղիր. բարձր, խորունկ, դժուարին արմատ ունեցիր հողին մէջ ու կապոյտ երկինքներուն խորը թռիչք. բիրեղացիր եւ թափառէ ու երջանիկ պիտի ըլլաս. նուաճումներդ թող ըլլան անծիր, անպարագիծ, որովհետեւ ամէն յաղթանակ պէտք է ճշմարտութիւնը ունենայ իրեն որպէս խորք եւ ընդարձակութիւն:

Չեմ քամուած դեռ որչափ որ անհրաժեշտ է այս էջերուս վրայ: Մոռացումը կը տանի ինձմէ շատ բան, լաւագոյն մտածումներ, հոգեկան լաւագոյն պատկերացումներ: Ընդհատեմին հնարաւորութիւն չեմ ունենար նոթագրելու եութեանս մէջէն բխող զգացումները եւ անոնք քիչ վերջ կը կորսուին: Ի՛նչ ճշմարտութիւններ կորսնցուցած եմ ես այսպէս: Այս էջերուս բաւական նման էջեր ունիմ տետրակներուս կամ առանձին թուղթերու վրայ ցանցուած, զորս մտադիր եմ հետզհետէ, նոյնիսկ ոչէլման կարգաւորութեամբ մը, մեկտեղելու հոս: Որով՝ կարելիութեան սահմանին մէջ, կը փափաքիս հոգեկան գործունեութեանս մէկ շտեմարանը ընել այս, ու եթէ պէտք է դեռ ուրիշ տետրակներ: Որեւէ ատեն ու որեւէ բանի համար կը զգամ, որ այդ շտեմարանը կրնայ օգտակար ըլլալ ինծի: Յետեւաբար, կայ հոս առաւելազոյն չափով աղօթք, հաւատք, աստուածային միսթիսիզմ, որ ինծի աւելի է, քան ամէն իրականութիւն, ամէն արուեստ: Դեռ մանկութեան շրջանէն մեծցած եմ ես տակաւ դէպի ամէն ինչ, որ աստուածային է եւ անջնջելի, մեծցած եմ դէպի մեծը, դէպի վիթխարին, դէպի անհունը: Մեծցած՝ դէպի Ազատութիւնը, դէպի Աստուած: Ծամբուս ընթացքին միշտ ձախողութիւն գրեթէ, միշտ փորձանք, փորձութիւն, մեղք, զղջում, կշռոյթ: Այրած է հոգիս: Ինկած, նուաճուած, ու վերսկսած միշտ ալ իր պայքարը: Յետեւանքը այս բոլորին այն՝ որ ես պաշտամունքը ունենամ պայքարին, սակայն ճշմարտութեան պայքարին: Չկայ անձիս մէջ կետ մը, ուր մտած չըլլայ ազնուական ներքին պայքարը. միշտ փլուզում ու միշտ հակակշռումի ճիգ ինձմէ ներս: Պայքարը եղած է այսօր գոյութեանս գերագոյն տարրերէն մին:

ԵՂ. ՊՕՅԱՃԵԱՆ

(Շար. 1)

ԿԱՐՕ ԱՐՄԵՆԵԱՆ

~ գուրգուրայ մեր ամեն մեկ քայլափոխին
 մարդեր պետք են որ մեզ իրենցը ընեն առանց երբեք
 տատամսելու
 ծունկի եկած մարդեր պետք են որ մեզմով գտնեն
 կորուսեալը որ մնացած էր ափին
 երբ մակընթաց շուրերեն դուրս կը ցցուէին գլուխներ ու
 թւեր անյուսօրէն
 տարբաղադրուած
 հաւատուրաց մարդեր պետք են որպէսզի վերստին
 հաւատան

մեր ծնունդին

ՎԿԱՅԱՐԱՆ

հոն
 աւագին վրայ մենք նորէն համատեղեցինք բեկորները
 մենք նորէն կցեցինք իրարու վանկերը կողկողագին
 մենք նորէն յայտնագործեցինք բջիջները հարազատ
 մենք նորէն գտանք շրթները ազագուն՝ քիթերը կորովի

ճակատները հպարտ
 մենք ծայրէ ծայր վերստին կերտեցինք մարմինը

որ ոչ եւս էր

Նկարները զորս կը կախենք մեր պատերէն մեր դիմագծերն
 են որ կը տարրալուծեն
 լռելեայն
 մեր յայտնուող՝ չքացող նշոյլներն են
 պատին վրայ
 իրիկունէ իրիկուն

մենք ի զուր կը փնտռենք մեր հետքերը

աչքերու մէջ
 որոնք այսպէս կը նային
 խուփ շրթներով

երազները որոնք այսպէս սնուցին մեր զօրքերը
 մուրօն մէջ
 որոնք կրնան ամեն գիշեր յաճախել՝ մեզ տանիլ դռնէ դուռ
 մեզ խզած են մեր ինչքերէն
 մենք մոռցած ենք թէ ի՞նչ էինք
 մենք սփռուած ենք աշխարհով մէկ
 մենք զրկուած ենք ճանաչողութեան եզրերէն
 մենք յանգած ենք անըսկիզբին

մայր մը պետք է
 որ մեզ վերստին առնէ իր արգանդին մէջ
 - վերստին աշխարհ բերէ
 հայր մը պետք է
 որ քաջութիւն ներշնչէ

Նկարները զորս կախած ենք պատերէն կ'ապրին այսպէս
 միջոցին մէջ
 առանց երբեք տեղի տալու
 անոնք մեր երեւակայութեան մասնիկներն են
 որոնք կրցած են վերապրիլ
 անոնք կրցած են արհամարհել տոկալ վերստին յայտնուիլ
 անոնք եկած են իրարու մեր տուններէն ու այգիներէն
 խմբովին ու ընտանի
 անոնք վերագտած են մեր հետքերը
 անոնք շարուած են պատին վրայ նոյն անսխալ
 տեսողութեամբ
 ինքնավստահ ու բարի
 ճիշտ այնպէս ինչպէս երէկ
 ըսել կ'ուզեմ հազարամեայ տնօրինութեամբ
 քով-քովի
 որպէս մէկ ու անսասան ու անպարտելի գերդաստան
 առանց երբեք զիջելու
 առանց երբեք ընկրկելու
 անփոփոխ ու վերջնական

~ անոնք են որ
 անվհատ

իրենց թախծոտ ու անապական դէմքերով

մեր անհատնում կրկներելոյթը

կը յօրինեն ամեն օր

ԼԵՌ ԿԱՄՍԱՐԻ ՅԱՐՍԻ՝ ԱԴՌՈՐԵԱՆ ՕՖԵԼԵԱՅԻ ՅՈՒՇԵՐԸ...

Սիրելի...

Ուղարկում եմ մօրս՝ Ադուրեան Օֆելեայի յուշերը Լեռ Կամսարի մասին:

Մայրս արդեն 84 տարեկան է, եւ երկար ու ձիգ տարիներ ապրել է երգիծաբանի հետ: Չգիտեմ կամսարագիտութիւնը ինչպէս կ'ընթանայ՝ կամ կ'ընթանայ, թէ ոչ, այնուամենայնիւ փաստերն արժէքաւոր են եւ ենթակայ տպագիր պահպանման: Նայեք, եթէ հարկ էք համարում, տպագրեք «Ազդակ-գրական»ում:

Սիրով՝ Վանուհի

- Եթէ գրող լինէիր եւ յուշեր գրէիր իմ մասին՝ կ'անմահանայիր, - դիմելով ինձ ծիծաղելով կատակեց մէկ օր Լեռ Կամսարը:

Անմահանալու մարմաջը չէ, որ այսօր գրիչ եմ վերցրնում: Նրա ժամանակակիցներից մնացել եմ ես միայն, եւ անարդարացի կը լինէր չպատմել այն ամենը, որ դեռ մնացել են յիշողութեանս մէջ: Գրողին ճանաչել եմ Յայրենական պատերազմի վերջերին եւ ապրել նրա հետ մինչեւ իր մահը:

Շատ եմ ափսոսում, որ ժամանակին օր աւուր չեմ արձանագրել նրա ողիսականը, բայց երեք երեխայ, սկեսրայր եւ սկեսուր ինձ մոռ կնոջ կարգավիճակը այնպիսին է՝ այն էլ այդքան դժուարութիւնների մէջ, որ հազիւ թէ ես ժամանակ գտնէի այդ անելու:

1944ի ամրանը Մեծ Մագրա գիւղում յայտնուեց մի նոր մարդ՝ ով տարբերում էր իր հագուկապով եւ պահուածքով: Միջահասակ, թաւ յօնքերով, մի փոքր ծաղկատար դեմքով այդ մարդը միշտ միայնակ, լուռ եւ խոհուն, գլխաբաց ման էր գալիս դաշտերում՝ իր վրայ հրաւիրելով զարմացած գիւղացիների ուշադրութիւնը:

- Օղուկ, եւ սպիտակ կիտելով, գլուխը բաց մարդուն կայեա, Էնիզ շատ մեծ մարդ է: Էնոր գրուածքներէն ափդ անցնին, կարդայ, շատ ճիշտ բաներ կը գրէ, շատ ուժեղ գրող է - ասաց մի օր հայրս: Նա ինչ իմանար, որ շատ չանցած ես լինելու էի այդ ուժեղ գրողի բոլոր տառապանքների եւ վիատումների վկան եւ այդ դժբախտ ընտանիքի ցաւը կրողը...

Ամրանը յաջորդեց Աշունը: Ես պէտք է դպրոց գնայի: Գիւղում չկար 8-10րդ դասարանները եւ աշակերտութիւնը պէտք է գնար Բասարգեչար (Վարդենիս) շրջկենտրոն միջակարգ ուսումը աւարտելու:

Ամեն առաւօտ դասի գնալուց՝ ճանապարհի մի եզրով ես էի քայլում, միւսով հօրս ցոյց տուած տարօրինակ մարդը՝ Լեռ Կամսարը:

Յետագայ ծանօթութիւնից պարզ դարձաւ, որ նա քաղաքական աքսորեալ է եւ աշխատում է Տորֆ արտադրութիւնում որպէս մեղուապահ: Երկուսս էլ նոյն ժամին էինք դուրս գալիս Մագրայից՝ նա Տորֆ գնալու համար, ես՝ Բասարգեչարի դպրոցը: Յամարեա՛ միասին գնում էինք, միասին վերադառնում: Ճանապարհը այնքան ամայի էր, որ կարծես կենտրոնական ճանապարհը դուրս գալուց թէ՛ ես, թէ՛ նա ոտքերս կախ էինք զգում իրար հանդիպելու համար:

- Ո՛ւմ աղջիկն ես, որտեղի՞ց էք գաղթել, քանի՞ երեխայ էք, - հետաքրքրուեց մշտական ուղեկիցս:

- Ադուրեանց Միսակի՛ հայրս Բասենի Գոմաձոր գիւղից է գաղթել, մայրս՝ Յեթթիբատից: Երկուսն էլ գաղթի ժամանակ կորցրել էին իրենց երեխաներին եւ հարազատներին եւ միայնակ մնալով բախտները իրար էին կապել, ունենալով վեց երեխայ, որից մնացել ենք չորսս՝ երեք քոյր եւ մէկ եղբայր:

Չրուցելը, ի հարկէ կը կարճացներ մեր ճանապարհը, բայց ուղեկիցս խօսողներից չէր: Ճանապարհին պատահում էին սայլեր, ձիու ֆուրգոններ, երբեմն էլ մեքենաներ, որոնք կանգնում եւ յարգալից հրաւիրում էին այդ տարօրինակ մարդուն նստել, բայց նա գերադասում էր ոտքով կտրել այդ 9 կի-

լոմետր ճանապարհը եւ առանձնապէս խօսակցի կարիք էլ չէր զգում՝ քանի որ ինքն իր մտքերի հետ էր առանձնացած: Երբեմն էլ կարող էր նայել մարդուն եւ չտեսնել նրան՝ այնքան, որ մտքերը սաւառնում էին հեռուներում:

Բասարգեչարում ապրող վանեցի մեղուապահ Գրիգոր Ղարիբեանը, որը ինձ մոռ էր նաեւ Մագրայի մեղուանոցը, մէկ օր խնդրում է Լեռ Կամսարին այցելել իր ծանօթ գաղթական Միսակ Ադուրեանին եւ տաքոցներ տալ նրա 7 փեթակներին:

Դեռ հեռուից ես նկատեցի իմ ճանապարհի գլխաբաց ընկերոջը: Ինձ տեսնելով որպէս ծանօթ ժպտաց եւ հարցրեց.

- Կարո՞ղ է իմանաս Միսակի տունը, ով մեղուներ ունի:

Ուրախ պատասխանեցի, որ Միսակն իմ հայրն է եւ առաջնորդեցի մեր տուն:

Քանի որ մեր տան մեծ «տղան» եւ էի, իմ ուղեկցութեամբ մտաւ մեղուանոց եւ իմ օգնութեամբ արեց ամբողջ աշխատանքը, չմոռանալով խօսակցութեան ընթացքում գայթակղել ինձ մեղուաբուծութեան կարելորդութեամբ եւ օգտակարութեամբ:

Անցան օրեր: Մտերմութիւնն իմ ընտանիքի հետ աւելի զգացնել էր տալիս: Շուտով իր անձնական փեթակներն էլ տեղափոխեց մեր բակը: Շատ յաճախ գիշերում էր մեր հիւրընկալ ընտանիքում: Բոլորս ակնածանքով էինք ինձ մոռնում նրան՝ նրա հետ կիսում մեր ունեցածը: Ամառները նրա ընտանիքն էր գալիս՝ կինը եւ երեք երեխաները՝ Աշոտը, Նաթանը եւ Նորան:

1947 թ. ես դարձայ այդ հանելուկ մարդու հարսը՝ նշանուելով նրա որդի Աշոտի հետ:

Որպէսզի ցոյց տամ, թէ ինչ հոգատար հարս եմ, գնացի նրա Տորֆի տունը, որ մաքրեմ եւ ճաշ պատրաստեմ:

Երբ մտայ այդ նախկին բաղնիք կացարանը՝ քարացայ: Այնքան փոքր էր, որ մի մահճակալ էր տեղաւորում: Մի քանի պարագաներ դրուած էին պատուհանի գոգին՝ եթէ դա պատուհան կարելի էր անուանել: Որպէսզի մէկը մտնէր այդ սենեակ կոչուածը՝ ներսի մարդը պէտք է դուրս գար: Փաստօրէն մաքրելու առանձնապէս տարածութիւն էլ չկար: Որոշեցի շորուա եփել: Գտայ մի քանի կարտոֆիլ, վերմիշել, սոխ: Ճաշին գոյն տալու համար հարեւանից կարմիր պղպեղ խնդրեցի:


Լեռ Կամսարն երբ ըմբռնեց իմ «գլուխ-գործոցը», յանկարծ հարցրեց.

- Այս կարմրութիւնը ինչպէ՞ս ես ստացել: Իմանալով, որ հարեւանից եմ վերցրել, մի փոքր լռեց, ապա աւելացրեց.

- Բալիկ ջան, կարողացիր բաւարարուել միայն քո ունեցածով, երբեք այլեւս ուրիշից բան չխնդրես, լա՛ւ:

Եւ իրօք, իր ամբողջ կեանքում, ինչի պակասութիւն էլ ունեցաւ, երբեք ձեռքը ուրիշին չմեկնեց՝ ապրեց ինքնաբաւ եւ հպարտ:

Չնայած քչախօս էր, բայց կարող էր ժամերով գիւղացիների հետ զրուցել, երբ իր կարիքն էին զգում: Խօսում էր ամեն թեմայի շուրջ, խորհուրդներ էր տալիս բոյսերի մշակման, տուն կառուցելու վերաբերեալ: Մի գիւղացի անընդհատ գանգատում էր տան խոնաւութիւնից: Լեռ Կամսարը գնաց, նայեց տունը, տեսաւ, որ հող է լցրել պատի տակ, որ տաք լինի: Սարի լանջից հոսող ջուրը ծծում էր այդ հողակոյտի մէջ



Օֆիկ Ադուրեան, Բասարգեչար, 1950

եւ տունը խոնաւացում: Լեռ Կամսարը ամբողջ հողը հանել տուեց եւ սենեակը չորացաւ:

Յուրտ ժամանակ գրում էր անկողնում, իսկ արեւոտ օրերին՝ թիկնած խոտի դեզերին: Ձմրանը հացը չէ, բայց թաւաքամանը շորով փաթաթելով դնում էր բարձի տակ, որ չսառչի: Ես անասելի խղճում էի նրան:

Տորֆում նրան 400 քմ հողակտոր էին տուել, որ կարտոֆիլ աճեցնի: Կարտոֆիլը քանդելու ժամանակ ես օգնութեան փութացի: Նա քանդում էր, ես հաւաքում էի: Երկու օրում հաւաքեցինք բերքը, նա գնաց սայլ բերեց, գիւղացիների օգնութեամբ բարձեցինք:

Կարտոֆիլ փորելը էլի մի կերպ գլուխ բերեց, բայց լծկաններին չէր կարողանում կառավարել այդ խեղճ խտելի-գենտը: Աչառները խամ էին եւ այս ու այն կողմ էին փախչում: Երբ առաքան հասաւ Տորֆի տներին՝ երկու տուն չմնացած մինչեւ մեր տունը՝ եզները խրտնեցին, վազքով գնացին եւ շուռ տուեցին բակում վառուող վառարանը, որի վրայ մի գիւղացի կին ճաշ էր պատրաստում: Գիւղացիները հագիւ սաստեցին լծկաններին: Ես առաջին անգամ էի տեսնում սկետրոջս այդքան այլալուծ եւ վշտահար: Ամօթից եւ այն մտքից, որ ինչ-որ մէկին վնաս է տուել՝ չէր կարողանում ուշքի գալ եւ չգիտեր ինչպէս մեղանչել: Տեսնելով նրան այդպէս անօգնական՝ շատ ցաւ ապրեցի նրա տառապանքների համար, որոնք սակայն կարծես թէ վերջ չունեին:

1948 թ. Յոկտեմբերին ամուսնացայ եւ ամուսինս ինձ տարաւ Երեւան: Չնայած Լեռ Կամսարին արգելուած էր մայրաքաղաքում լինել, բայց նա եւս եկաւ՝ ուզում էր լինել իր նոր համալրուած ընտանիքի հետ: Երկուսս էլ Երեւանում ապրելու համապատասխան փաստաթղթերը չունէինք: Ամուսնութեան արձանագրութիւնը դեռ պատրաստ չէր, եւ ես ու Լեռ Կամսարը փախստականի կարգավիճակում էինք: Երբ դուռը ծեծում էին, մենք իրար հերթ չտալով թաքնուում էինք ցախանոցում: Մէկ ամիս այդպէս բարեյաջող թաքնուելով, յոյս առաջացաւ, որ ձմրանը կարելի է այս կերպ թաքնուելով մնալ Երեւանում, բայց անա՛ղ:

Մի օր երկու անձնաւորութիւն ուշ գիշերով մտան մեր տուն: Մէկը թաղային Սերգոյեանն էր՝ միլիցիայի համազգեստով, միւսը քաղաքացիական հագուստով մէկը:

- Օրէնքը խախտել էք, ընկեր Թովմասեան, Ձեզ յայտնի է չէ, որ քաղաքում բնակուելու թոյլտուութիւն չունեք: Ձեզ պետք է ձերբակալենք:

Իմ ամուսնութեան փաստաթղթերն արդէն վաւերացել էին, եւ ինձ ոչինչ չէր սպառնում, բայց Լեռ Կամսարը քաթանի գոյն ստացաւ: Ընտանիքը սպասման մէջ քարացել էր:

- Աւագ որդուս նոր եմ պսակել, - սկսեց նա: - Մի՞թէ մարդուն տրուած այդ փոքրիկ իրաւունքն էլ է զլացում ինձ: Ինչո՞ւ չեմ կարող ընտանիքիս հետ միասին վայելել այդ հաճոյքը: Արդեօք ի՞նչ եմ արել այս պետութեանը, որ այսպէս հալածում է ինձ եւ զրկում փոքրիկ ուրախութիւններից: Ինչո՞վ եմ այդքան վտանգաւոր եւ սարսափելի, որ վախենում է իմ ներկայութիւնից եւ վնդում է ինձ իմ տանից: Ասացէ՛ք, մի՞թէ կը կործանուի սովետական մեր պետութիւնը, եթէ ես ոչ թէ սառցակալեմ Յայաստանի հիւսիսում, այլ՝ լինեմ հարազատներիս հետ...

Մարդկային նշոյլներ յայտնուեցին միլիցիայի դեմքին.

- Լաւ, էլ չենք բարդացնում իրավիճակը: Ստորագրեք վտարման օրդերը եւ 24 ժամում թողեք քաղաքը:

Առաւօտ կանուխ համբուրելով մեզ բոլորիս մեկնեց: Ձմեռը խստաշունչ էր, Սեւանը սառել էր, նաւերը չէին աշխատում, եւ բաւական դժուարութիւններով հասաւ Տորֆի իր չջեռուցող փչակը ծուարելու եւ մենակ տառապելու եւ մեղանչելու իր չգործած յանցանքների համար: Հաւաքած կարտոֆիլը սառցէ կտորներ էր դարձել՝ դուրս թափեց տանից եւ ձեռքերը տաքացնելով բերանի գոլորշիով վերցրեց գրիչը.

«Երեւակայեցեք, այս բոլորից յետոյ ես չեմ թքում սովետական կառավարութեան երեսին, որովհետեւ տեղուանքը ցուրտ է, եւ թուքս կարող էր սառած մնալ նրա երեսին...»:

1949 թ. ամրանը որպէսզի սկետրայրս մենակ չմնայ, եւ

բացի դրանից, մէկ սենեակը դատարկուի եւ վարձով տրուի՝ ընտանիքի կարիքները մի փոքր թեթեւացնելու համար, ես ու Աշոտը որոշեցինք մեկնել Տորֆ եւ այնտեղ աշխատանքի տեղաւորուել: Տորֆում որպէս բարելաւում փոխեցին սենեակը, որն էլի շատ փոքր էր: Լեռ Կամսարը քնում էր միակ մահճակալին, իսկ ես ամուսնուս հետ՝ գետնին: Ունէինք սեղան եւ երեք աթոռ: Նախորդ պայմաններից դա բաւականաչափ լաւ էր: Սկզբում աշխատեցի որպէս հաշուետար, յետոյ մանկապարտեզի վարիչ: Որդին բանուորութիւն էր անում:

Երգիծաբանից բացի, Տորֆում կային եւս չորս բախտակից աքսորեալներ՝ երեքը հայ, մէկը ռուս: Հայերից մէկի ազգանունը Կարմրամօրուքեան էր: Ռուսի մասին շատ ուշ իմացանք, որ աքսորական է: Սկսուեց բռնադատման երկրորդ ալիքը: Ամէն առաւօտ լսում էինք, որ «Չորնի վոռնը*» գիշերը աքսորեալներից մէկին նորից տարել է: Միւսները մղձաւանջի մէջ սպասում էին իրենց հերթին: Լեռ Կամսարի համար հաց չորացրեցինք, տաք հագուստ մի կերպ գլուխ բերեցինք: Բանտի ներքնակը, երկաթե բաժակը եւ աքսորական ճամպուկը կազմ պատրաստ էին՝ վերջին խառնաշփոթին մոռացութեան չմատնուելու համար: Երբ մեքենայի հռնդին էր լսում, կամ միլիցիա էր երեւում գիւղում, անմիջապէս գիւղխորհուրդ էի շտապում՝ իմանալու համար գալու նպատակները: Վեց ամսուայ ընթացքում հերթով կրկնակի աքսորի ենթարկուեցին միւս երեք ազատ աքսորականները: Վերջինը ռուսն էր: Ի դէպ, այդ ժամանակ միայն իմացուեց, որ նա եւս բռնադատուած է: Ուներ կին եւ երեխայ, որը ծնուել էր Տորֆում: Նրան տանելուց յետոյ ընտանիքը Ռուսաստան մեկնեց:

Ի զարմանս մեզ, Լեռ Կամսարին չտարան: Բայց սպասման ան ու սարսափը դեռ երկար հետապնդում էր նրան...

1950 թ. ծնուեց իմ անդրանիկ Վանիկ որդին: Մեզ նոր կացարան տուեցին Կանլի կոչուող ազրայեճանական գիւղում: Պատերազմի ժամանակ ազրայեճանցիները գաղթել էին այդ գիւղից եւ ազատ տներ կային: Համեմատած նախորդ կացարանին՝ սա մեծ բնակարան էր: Մի սենեակը տորֆ էինք լցնում եւ ամբողջ ձմեռ վառում: Տորֆի տակ թաքցնում էինք Լեռ Կամսարի արդէն գրուած տետրերը: Ընթացիկ տետրը պահում էինք Վանիկիս բարուրի մէջ:

Մի առաւօտ միջանցքում դրուած կրկնակօշիկների մէջ գրուած թղթի մանրացուած կտորներ գտանք: Լեռ Կամսարն անով հասկացաւ, որ մկները իր տետրերն են անել: Ամբողջ օրը դատարկեցինք երեք սայլ վառելատորֆը, որ տակից հանենք գոնէ քիչ թէ շատ պահպանուած ձեռագրերը, որոնք ես տեղափոխեցի հօրս ցորենի ամբարը թաքցնելու համար:

Լեռ Կամսարն այդ դէպքից վշտացած մէկ շաբաթից անել ո՛չ կերաւ, ո՛չ խմեց: Սգաւոր որդեկորոյս մօր պէս շրջում էր գիւղում:

1935 թ. Չեկայի խուզարկած եւ բռնագրաւած ձեռագրերից յետոյ երգիծաբանը երբեք իր գրուածքները տանը չէր պահում: Բայց ինչպէս պարզուեց, դա նոյնպէս ապահով չէր: Օրինակ, որոշ մասը ոչնչացաւ 46 թ. Երեւանի հեղեղի ժամանակ, երբ գրականութիւնը թաքցրել էին մառանում թաղուած կանաչ կճուճի մէջ: Մագրայում ապրած ժամանակ, երբ պահում էր փեթակի կափարիչի տակ՝ գիւղի տղաները գողացան՝ ի հարկէ յետոյ իրենց ծնողները սարսափահար վերադարձրեցին այդ հակապետական յօրինուածքները: Մկները նոյնպէս բռնապետութեան կողմնակից էին եւ օգնում էին ոչնչացնել դրանք:

Դառն են, շատ դառն են իմ յիշողութիւնները Լեռ Կամսարի ապրած եւ չապրած տարիների մասին: Փորձում եմ ինչ-որ լուսաւոր կամ յուսադրող բան գտնել պատմելու համար, չի ստացւում: Նրա կեանքը տառապանքի անհատնում շղթայ էր, որ պետք է վերջանար, երբ կ'աւարտուէր նրա կեանքը: Այսպէս ասելն էլ սխալ է, քանի որ նրա մահուանից յետոյ էլ պատմութիւնը բարանը ջուր էր առել մինչեւ բաղձալի անկա-

*Յանցաւորների տեղափոխող մեքենայ:



Լեռ Կամսարի հարս Օֆիկ Ադուրեանը, որդու՝ Վանիկի հետ, Տորֆ, 1951 թ. Երգիծաբանը աքսորում այս երեխայի բարուրում էր պահում իր ձեռագիրը, երբ դրսից կասկածելի ձայներ էր լսում:

խուրթիներ... «Ես ծնունդի ինչպես բոլորն են ծնում, բայց չապրեցի ինչպես բոլորն են ապրում», ասում էր նա: Շատ էր ցաւում, որ իր պատճառով տառապում է նաեւ ընտանիքը: Երբ որդիս թոթովեց իր առաջին խօսքերը՝ «Ճժել, դուլ բացէ՛ք», նա ուրախանալու փոխարէն սրտի դառը կսկիծով ասաց.

- Ինչու ես նորմալ միջավայրում չապրեի, որ թոռանս մայրենին էլ համապատասխան լինէր: Մէկ ուրիշ անգամ, երբ թոռան հետ խաղում էր թուրքի տան դէպի

եւ սննդամթերքը: Զաղաքականներիս մէջ կային երկու յաղթանդամ վրացիներ՝ մէկը բժիշկ, միւսը ինժիներ: Պայմանաւորուեցինք հակահարուած տալ: Երբ եկան քրեականները՝ շրջան կազմեցինք, վրացիները մէջտեղում, մենք շուրջբոլորը եւ սկսուեց արհեստագործութիւնը՝ Աւարայրի ճակատամարտը՝ ֆիզիքապէս ջախջախուեցինք, բայց բարոյական յաղթանակից յետոյ, մեզ հանգիստ թողեցին:

«Լագերային վարչութիւնը կերակրում էր միայն նրանց, ովքեր կատարում էին օրական նորման՝ ծառի կեղեւից գործելով 7 հատ տրեխ՝ երեք զոյգ եւ մէկ հատ: Ես երբեք չորսից անէլ չէի կարողանում գործել եւ կը դատապարտուէի սովամահութեան եթէ օգնութեան չգար իմ հայրենակից Յակոբ Զամալեանը: Ամբողջ աքսորի ընթացքում նա շատ է ինձ տիրութիւն արել: Զանի որ ֆիզիքապէս ուժեղ էր եւ ամրակազմ՝ շուտով նրան տարան կարտոֆիլի պահեստը դատարկելու: Մէկ-երկու կարտոֆիլ էր գողանում եւ բերում ինձ, որն ազահաբար ցեխոտ եւ հում անմիջապէս կուլ էի տալիս:

«Չարմանում եմ, որ կենդանի եմ մնացել: «Պատկերացնում ես, որ 1939 թ. նոյեմբերին երբ ինձ ազատեցին, վիճակս անելի սոսկալի դարձաւ, քանի որ գետերը սառել էին եւ լաստանաւերը չէին աշխատում, իսկ ոտքով ձմռանը ամիսներով տայգան կտրել շրջկենտրոն հասնելու համար անիրականանալի էր՝ եթէ գայլերը չուզէին ինձ ուտել վտիտ լինելուս համար, ապա սառցակալելը՝ միշտ կարու կար: Եւ ես ինքնակամ երկու անգամ վերադարձայ լագեր, բայց երկու անգամ էլ ինձ դուրս չապրեցին: Լաւ էր մի նաւ գտնուեց մօտակայքում, որն լռուել էր սառցակալած գետում եւ ես այնտեղ մինչեւ ուշ գարուն պահակ աշխատեցի մինչեւ լաստանաւերը սկսեցին աշխատել:

«Ահա այսպիսի օրերի ընկեր է եղել իմ այս ճամպուկը...»:

1951 թ. Օգոստոսին երգիծաբանը շատ խիստ ընդհարուեց Տորֆի կոմունիստ դիրեկտոր Յայկազ Յովհաննիսեանի հետ: Դիրեկտորը մեղր էր պահանջել իր սեփական կարիքների համար: Լեռ Կամսարը մերժել էր, ասելով, որ դա համայնական մեղր է: Դիրեկտորը կիսով չափ կտրել էր գրողի աշխատավարձը: Որպէս հակահարուած վերջինս «Սովետական Յայաստան» ուղարկեց «Կէս մարդ ֆելիետոնը»:

1952 թ. գրողը պետական մեղուանցի համար մոմաթերթեր էր ստացել, իսկ յաջորդ օրը պետք է գնար Մազրա իր սեփական մեղուանցը կարգի գցելու համար: Դիրեկտորը, կարծելով, որ Լեռ Կամսարն իր սեփական մեղուանցի համար կը վերցնի համայնական մոմաթերթերը, ճանապարհին մարդ էր կանգնացրել, որ խուզարկեն գրողին եւ բռնեն:

Առաւօտեան, երբ գրողը ուղեւորուեց դէպի Մազրա, մէկ ժամ էլ չէր անցել, որ գայրացած ու վիրաւորուած ետ դարձաւ, ասելով.

- Պատկերացնում ես գող կոմունիստները ինձ էլ իրենց պէս կարծելով բռնել են եւ ճանապարհին խուզարկել, ի հարկէ ոչինչ չգտնելով:

Պայքարը դիրեկտորի եւ գրողի մէջ գնալով թէժանում էր: Ուղարկուած ֆելիետոնի պատճառով Կենտկոմը, ճանապարհածախս ուղարկելով, Լեռ Կամսարին հրաւիրեց Երեւան:

Մայրաքաղաքից յուսադրուած եւ ոգեւորուած (նոյնիսկ ջահելացել էր) վերադառնալով յայտարարեց.

- Վերջ մեր տառապանքներին... ինչե՛ր, դեռ ինչե՛ր են լինելու... Պատրաստուէ՛ք՝ Երեւան ենք վերադառնում: Իմ գրական իրաւունքները վերականգնուած են: Ծիշտ են ասում՝ չկայ բարիք առանց չարիքի:

1952 թ. Սեպտեմբերին մենք արդէն Երեւանում էինք: Աւարտուեց հեռու եւ մօտիկ սիբիրականը եւ սկսուեց երեւանեան դժոխքը...

Բանտում եւ գաղութում գրողին պետութիւնն էր կերակրում, աքսորում՝ գլուխը մի կերպ պահում էր մեղուապահութեամբ, իսկ Երեւանում, ինչպէս յետոյ պարզուեց՝ կեանքի բոլոր ճանապարհները փակ էին նրա համար...

Կենտկոմը, որ իբր բանաւոր հաւաստիացմամբ վերա-

տակ, երեխան ընկաւ փշերի վրայ եւ արհնւլուայ եղաւ:

- Ես ի՞նչ գործ ունեմ թուրքի այս պատի տակ եւ ինչո՞ւ է իմ երեխան մեծանում այս պայմաններում, - վիրաւորուած նետեց նա եւ ամբողջ օրը տուն չեկաւ, յուսահատ թափառելով հանդերում:

Երբ շատ էր նեղսրտում, անմիջապէս նետում էր իրեն բնութեան գիրկը: Թափառելուց յոգնած, մի փոքր խաղաղած վերադառնում էր միշտ մատների արանքում բռնած վայրի մեխակներ: Այդ պատկերը շատ յաճախ էր կրկնում:

Ինձ միշտ զարմացնում էր նրա լաւատեսութիւնը: Երբեք յոյսը չէր կտրում, ասում էր.

- Իմ ամենալաւ բժիշկը ժամանակն է: Կը գայ ժամանակ ինձ կը հասկանան եւ կը գնահատեն:

Մէկ օր պտոյտից վերադառնալով տեսաւ, որ հիմնաւոր մաքրութիւն եմ արել եւ որպէս անպետքութիւն դուրս եմ չապրտել նրա հնամաշ, սեւացած, փայտէ ճամպուկը: Եկաւ, վերցրեց, գուրգուրանքով մաքրեց ու ասաց.

- Այսպիսի բան այլեւս չանես: Եթէ լեզու ունենար գիտե՞ս ինչեր կը պատմեր իմ տառապալից կեանքի մասին: Նա իմ սիբիրական ընկերն է՝ ընկերների հետ այդպէս չեն վարուում:

Եւ չնայած երբեք չէր սիրում խօսել գաղութի իր կեանքից, անելացրեց.

- Գիտե՞ս քանի կիլոմետր եմ կտրել նրա հետ ձիւնախեղդ տայգայում: Վերմակիս հետ մէջքիս կապուած էր: Յագածս կօշիկների մէջ մեխեր կային, ոտքս արհնաքամում էր: Շուտով արհնը սառոյց դարձաւ ոտնամանուս եւ ես դադարեցի ցաւ զգալ: Երբ ուժասպառ հասանք նշանակակետին, տեսայ, որ ճանապարհի խիտ ծառերի ճիւղերն ամբողջ վերմակիս բուրդը բզիկ-բզիկ էին արել եւ թողել միայն մթելը: Ոտնամանները կարողացայ հանել միայն մէջի սառուցը հալուելուց յետոյ: Է՛հ, պատմելու բաներ չեն, աղջիկս:

«Յաւկուր էի դարձել անընդհատ սպիտակ ձեանը նայելուց, ոչինչ չէի տեսնում: Տեղափոխեցին հիւանդանոց, որտեղ իմ բախտից հայ բժշկուհի կար եւ նա իմ կեանքը փրկեց բուժելով եւ կերակրելով: Ինչքան հնարաւոր էր երկար պահեց ինձ հիւանդանոցում:

«Մեզ պահում էին քրեական յանցագործների հետ միասին, որոնք պարբերաբար մեզ նուաստացնում էին, խլում մեր վրայի հագուստը, գողանում տանից ուղարկուած փողը

* Երեխաներ, դուռը բացեք:

կանգնել էր նրա գրելու իրաւունքը, հաւանաբար պատուիրել էր մամուլին չտալ այլախոհ երգիծաբանին: Այսինքն՝ նրանք ուզում էին միայն կոծկել Տորֆի կոմունիստ դիրեկտորի արածները, որ աւելի մեծ տարածում չունենայ: Ընդամենը թայֆայականութիւն: Դուրս էր գալիս, որ գրողին այլեւս չեն խանգարի գրել, բայց տպագրուելու մասին թող մոռանայ:

Ամիսներով խեղճ սկետրայրս պտտում էր բոլոր խմբագրութիւնները՝ անօգուտ:

Դիմեց թոշակաւորուելու համար՝ անօգուտ:

Նամակ-դիմումներ յղեց հեռու եւ մօտ Կենտկոմների բոլոր քարտուղարներին՝ անօգուտ:

Ընտանիքը սովի ճիրաններում էր: Ամուսինս մեկնեց Ռուսաստան աշխատանք փնտռելու, կրտսեր եղբայրը եւ քոյրը ուսանողներ էին, ես կորցրել էի Տորֆի աշխատանքս, սկետրայրս՝ նոյնպէս: Միակ կերակրող ձեռքը սկետուրիս էր, որն ստիպ-ւած պահակութիւն էր անում, որ մի կերպ ապրենք:

Դժոխքը երեւի հենց այսպէս էլ լինում է: Օրական մեկ անգամ էինք վառարանը վառում, երբ դասերից յետոյ գալիս էին մեր ուսանողները: Ուտում էինք ցամաք հաց՝ երբեմն սոխի հետ, եթէ լինում էր: Սկետրոջս նեարդերը տեղի էին տալիս:

- Շուրջ ք... քո գրչի ծայրին, որ միայն վնաս բերեց մեզ: Ինձանից լաւը չես՝ գնա՛ դու էլ պահակութիւն արա, - նետում էր նա Լեռ Կամսարի ետեւից, մոռանալով սակայն, որ Վանում եւ Առաջին հանրապետութեան ժամանակ բոլորը ակնածանքով մատնացոյց էին անում իրեն եւ ետեւից ասում. «Լեռ Կամսարի կինն է»:

Այս դարդի հետ էլ ես երկրորդ երեխային էի սպասում:

- Աղջիկ, խեղճ ես, մեզ մի աւելորդ բերա՞ն է պակասում, ազատուիր դրանից, - նեղսրտում էր սկետուրս:

Բժշկական համալսարանում սովորող տալս բերեց պահանջուող դեղերը:

Չգիտեմ որտեղից Լեռ Կամսարն իմացաւ այդ մասին եւ շանթ ու կայծակ դարձաւ:

- Մարդասպաններ, լրդճո՛ւկ մարդասպաններ, ապա մի փորձէք երեխային սպաննել, տեսէք ես ձեզ ի՞նչ կ'անեմ:

Փառքը շատ, Աստուած, յանկարծ կայծակ հեռագիր ստացայ եւ գումար ամուսնուցս, որ որդուս հետ մեկնեմ իր մօտ՝ Ռոստով: Այնտեղ էլ ծնուեց Վանուհի դուստրս, ով յետագայում ինքը պիտի կեանք տար իրեն կեանք պարգեւած պապի ձեռագրերին: Չարմանալի բան չկայ՝ նախախնամութիւն է: Կեանքում ամեն ինչ փոխադարձուում է: Լաւին՝ լաւ, վատին՝ վատ...

Վերջապէս, վերջապէս 1953 թ. աշխարհն ազատուեց մեծագոյն բռնակալ Ստալինից: Իմ ընտանիքը վերադարձաւ Երեւան:

1954ին Լեռ Կամսարը պաշտօնապէս համաներում ստացաւ իր չգործած մեղքերի համար: Յաճախ էի տեսնում, որ գրասեղանից վերցնում էր ուղարկուած պաշտօնական գրութիւնը, ակնոցը երկու մատով բռնած աչքին կարդում էր եւ խօսում ինքն իր հետ:

- Ա՛խր, ի՞նչս արդարացրին՝ չգործած յանցա՞նքս, 20 տարուայ բեղմնաւոր կեանքս, առողջութի՞ւնս, թե՞ ընտանիքիս քայքայուելը: Ի՞նչն են արդարացնում...

Սակայն հրատարակչութիւնների եւ խմբագրութիւնների դռները դեռեւս փակ էին գրողի առջեւ: Ամեն առաւօտ նա գնում էր Թումանեան-Նալբանդեան խաչմերուկ՝ ուր փակցում էին թերթերը, որ տեսնի մի բան տպե՛լ են յանձնուած ֆելիետոններից: Թերթ գնելու փող չունէր: Վերադառնում էր գլխահակ եւ տխուր: Պարբերաբար փորձում էր տեսակցել երկիրը ղեկավարող կոմունիստների հետ իր դիմումներով: Փոխնորդ չունէր եւ որպէսզի մի փոքր ներկայանալի լինէր ես գիշերը գաղտնի լուանում եւ արդուկում էի այդ միակ հագուստը: Եթէ բռնուում էի՝ սկսւում էր պատերազմը ինձ հետ:

- Դրանք ովքեր են, որ ես դրանց համար յարգարուեմ: Դրանք մարդ չեն՝ կոմունիստներ են: Ոչինչ շատ չեն ձգի, շուտով դրանց վերջը կը գայ եւ ես ոչ թէ մեկ, այլ տասնմեկ կոս-

տիւմ կ'ունենամ: Շատ չէ, Աստուած, որ տաս տարի կեանքս երկարացնէր՝ դրանց քոքը կտրուած կը տեսնէի:

Իր աքսորական ընկեր Քամալեանի հետ միշտ վիճում էին, թէ առաջ իրենց Վա՞նը կ'ազատագրուի, թե՞ բոլշեւիկեան բռնատիրութիւնը կը տապալուի:

Աւա՛ղ, ազատութիւնը այդպէս էլ չվայելեց Լեռ Կամսարը՝ ապրեց սկզբում թուրքական, ապա բոլշեւիկեան բռնապետութիւններում:

Վերջին տարիներին շատ ինքնամփոփ էր դարձել, չէր ուզում որեւէ տեղ գնալ՝ առաւել եւս գրողների միութիւն, որ չհանդիպի միւս գրողների հետ: Միշտ ինքն իր հետ էր եւ ընտանիքի: Եթէ փողոցում իր չսիրած մարդկանց էր հանդիպում, անսայման ճանապարհը փոխում էր, մանաւանդ այն մարդկանց, որոնք դեր էին խաղացել իր բանտարկութեան հարցում: Յագուստի վրայ բոլորովին ուշադրութիւն չէր դարձնում:

- Կարելորդ լիքը միջուկն է, կեղեւը կարելորդ չէ:

Նկատողութիւնը միշտ այնպէս էր անում, որ չվիրաւորւէինք եւ ծիծաղէինք:

- Օֆիկ ջան, այ տնաշէն, ա՛խր, շատ խոնարհ հարս ես, միայն ներքեւ ես նայում եւ բնականաբար մաքրում միայն յատակը: Միւս տղայիս համար հպարտ հարս եմ բերելու, որ գլուխը վեր պահի եւ առաստաղի սարդոստայններն էլ նկատի:

Աշխատում էր առաւօտեան մինչեւ ժամը 11ը: Ո՛չ մեկը իրաւունք չունէր նրան խանգարելու: Չէր սիրում, երբ տանեցիները մտնում էին իր գրոցները: Կինը սովորութիւն ուներ գաղտնի ընթերցել ձեռագրերը: Երբ բռնուում էր, մեղաւոր ծիծաղում էր եւ ասում.

- Ի՞նչ կը լինի որ: Զեզ չեն տպում, որ միւսները կարդան: Թող ես լինեմ քո միակ ընթերցողը... Ինչո՞ւ գրում եւ խորճում ես, որ մարդ չտեսնի...

«Նամակներ ռուսաց թագաւորներին» (Միկոյեան, Մալենկով, Բուլգանին) ուղարկելով, վերջապէս երկարատեւ լռութիւնից յետոյ 1959 թ. լոյս տեսաւ «Գրաբար մարդիկը»: Չնայած տանը անհրաժեշտ կահ-կարասիներից ոչինչ չունէինք, բայց առաջին հոնորարով Լեռ Կամսարը գնեց այդքան շատ երազած դաշնամուրը եւ ջութակը: Երբ աշխատանքից յոգնում էր՝ նուագում էր եւ երգում՝ հիմնականում Կոմիտաս: Ձայնը մեղմ էր եւ թաւիչ:

Երկար պայքարից յետոյ նաեւ թոշակաւորուեց եւ կենցաղը դարձաւ տանելի: Միայն տունն էր ցախանոց յիշեցնում: Կեանքի աւարտին պետութիւնը երկսենեականոց բնակարան տուեց նրան, բայց նա չհասցրեց մեջն ապրել:

ՄԵՐ ՏՈՒՆԸ

Այն տունը, որտեղ ապրում էինք, Լեռ Կամսարը նուէր էր ստացել Սարգիս Լուկաշինից: Դա թուրքի կամ պարսիկի լքեալ տուն էր: Այդ խորհրդային պաշտօնեան շատ բարձր էր գնահատում երգիծաբանին եւ միշտ սատար էր կանգնում նրան, մինչեւ որ բոլշեւիկները նրա գլուխն էլ կերան: Մի անգամ ես «Գրական թերթ»ում կարդացի Ալազանի յուշերը Լուկաշինի մասին, որտեղ շեշտել էր, որ Լուկաշինը հանդիպումների ժամանակ բազմիցս ասել է. «Գրէք, ինչպէս Լեռ Կամսարն է գրում՝ այդ դէպքում ես առարկութիւն չեմ ունենայ»:

Որպէս երախտագիտութիւն, երգիծաբանը իր «Ազգային այբբենարանը» նուիրել էր Լուկաշինի պատուին:

1958-60 թթ., երբ այդ գրքերից յանձնում էինք բուկինիստ խանութներին վաճառքի, պարտադրում էին տիտղոսաթերթը պատռել, որ ժողովրդի թշնամի Լուկաշինի անունը մարդ չկարդայ:

Տունը սկզբում շատ մեծ այգի է ունեցել՝ հող ասել է, շատ սենեակներ եւ բալախանայով երկու սարայ*¹: Լեռ Կամսարը նորոգել էր տան մի մասը, տախտակամածել եւ դարձը-րել աշխատասենեակ եւ ապրելու համար եւս մի քանի սենեակներ: Այգու մեծ մասը յետագայում զոհ գնաց՝ փո-

*Յախանոց:

դոցը լայնացնելու համար: Փողոցը սկզբում կոչում էր Եփրեմ խան, յետոյ՝ Ալաերդեան, ապա երկար ժամանակ Լենինի փողոց, վերջում էլ, յոյս ունեմ՝ մշտական վերանունուեց մեծն բանաստեղծ Թումանյանի անունով:

Տանը կից կառուցուեց սահմանապահների շէնքը՝ ուր բնակուեցին ռուս սահմանապահները: Այդ շէնքի կառուցման համար օգտագործուեց այգու համարեա՝ ամբողջ մասը: Մնացած փոքր այգին էլ զոհ գնաց 1946 թ., երեւանեան ջրիեղէղին, որն ակերեց այգու քարե պարիսպը՝ քշել տանելով քարերը: Հողը դարձաւ համայնական եւ ծպտուն էլ չէինք կարող հանել, քանի որ ձայնագուրկ հակայեղափոխական էինք եւ ազգի թշնամի: Ամբողջ տունը աստիճանաբար բաժան-բաժան արուեց եւ յանձնուեց բոլշեւիզմի նուիրեալ գաղափարակիցներին:

1954 թ. համաներումից յետոյ, երբ վերադարձաւ Լեռ Կամսարը, այդ տանից մեզ մնացել էր 54 ք.մ. տարածութիւն: Տան դիմաց երգիծաբանը տնկեց իր նշանաւոր թթենին, որը մինչեւ այժմ էլ կայ, եւ հիմնեց մի գողտրիկ պարտեզ:

1960 թ. ծնուեց իմ երրորդ երեխան՝ Արմէնը: Այդ ծնունդը մեծ ուրախութիւն պարգեւեց Լեռ Կամսարին:

- Անունը Արմէն դրեք, որ մեծանայ եւ երբ չեմ լինի կ'ասեք Արամ, - ասաց նա, - նա իմ շարունակութիւնն է:

Այդ թոռան հանդէպ ուներ առանձնակի սեր եւ հոգատարութիւն: Երբ երեխան հիւանդանում էր՝ գիշերը լուսացնում էր նրա սնարի մօտ:

- Ես կանգնած եմ եռոտանու վրայ՝ երեք ոտք՝ առաջինը գրիչս է, երկրորդը՝ Արմէնը, երրորդը՝ մեղուներս: Որ մէկը տակիցս քաշեք, ես գլխիվայր կ'ընկնեմ, - ասում էր նա:

Մէկ օր «Ոգնի» խմբագրութիւնից շատ զայրացած էր վերադարձել: Անընդհատ քայլում էր սենեակում եւ գլխաւոր խմբագիր Գիգիի հասցէին լուտանքներ թափում՝ ֆելիետոնները մկրատելուն համար:

- «Ոգնի»ն ինձ մորթում է, նոր մի բան տպում: Ես ինչպէս ստորագրեմ այդ գործերի տակ:

Այսքան էլ վախկոտ կը լինի մարդ, նա մա՛րդ չի, մա՛րդ չի, կնի՛կ է, վախկոտ կնի՛կ:

Չորս տարեկան Արմէնս, որ սենեակում խաղ էր անում, զարմացած հարցրեց.

- Պապիկ, բա կնիկը մա՛րդ չի:

Լեռ Կամսարը կարկամեց, դադարեցրեց ետ ու առաջ գնալը, ապա արագ մօտեցաւ եւ գրկեց Արմէնին:

- Վա՛յ, ես քո հոգուն մեռնեմ, դու քո փոքրիկ հալով ինչպիսի տեղին եւ արժանի նկատողութիւն արեցիր, մեծերից խելացի ես, - ասաց նա ամաչելով:

Յաճախ մեզ էր ուղարկում խմբագրութիւն ասելով.

- Դուք գնացեք, որ տեսնեն, որ բացի լաւ գրելուց հրաշալի ժառանգներ ունեն: Բայց միշտ արժանապատիւ կը պահեք ձեզ, ինչպէս ես եմ պահում: Երբեք չխեղճանաք՝ տպում են՝ թող տպեն առանց ծուլատելու: Չեն տպում՝ թող անմիջապէս վերադարձնեն:

Խմբագրութիւն եւ ռադիօ յանձնուած նիւթերը կարդալու համար շատ կարճ ժամանակ էր տալիս: Եթէ ժամանակը լրանալուց չէին հասցնում կարդալ, անմիջապէս ետ էր վերցնում: Յաճախ, երբ ինձ էր ուղարկում նիւթը ետ բերելու՝ խաբում էի ասելով, որ խմբագիրը տեղում չէ, որ վերջինս ժամանակ ունենայ կարդալու:

Յիշում եմ, 1962 թ. քաղսովետը նիստ գումարեց եւ որոշեց, որ վերջապէս Լեռ Կամսարին եւ իր կնոջը երկսենեակաւոնց բնակարան տան: Նոյն թուականին մահացաւ կեսուրս, եւ յանձնաժողովը քանի որ ըստ օրէնքի չէր կարող մէկ հոգուն երկսենեակաւոնց տալ, մեզ հրաւիրեց ելք գտնելու: Լեռ Կամսարը կնոջ մահից յետոյ շատ էր կոտորուել՝ ինքը չգնաց, այլ ինձ ուղարկեց ասելով.

- Գնա, ասա՝ Լեռ Կամսարն ասում է՝ այնքան ձգձգեցիք բնակարանի յատկացումը, որ կինս մահացաւ: Շատ չէ՛ մի քիչ էլ ձգեք, ես չեմ լինի, եւ բնականաբար, բնակարանի կարիք այլեւս չի լինի:

Նոյնութեամբ կրկնեցի պատուիրուած խօսքերը, որոնք



Օֆիկ Ադուրեան, Երեւան, 1978 թ.

շատ ազդեցին յանձնաժողովի վրայ եւ որոշում կայացրեցին այնուամենայնիւ տալ այդ երկսենեակաւոնցը՝ գրանցելով գրողի կրտսեր որդուն, որպէսզի բնակարանային օրէնսդրութիւնը չխախտուի: Բայց Լեռ Կամսարին այլեւս պետք չէր այդ բնակարանը: Նա մահկանացուն կնքեց Դիոգիլեստի իր տակառում:

Երգիծաբանը մահացաւ 1965 թ. նոյեմբերի 22ին:

Նոյեմբերի սկզբին սովորական գրիպով պառկած էր: Օրեր էին մնացել «Մարդը տանու շորերով» գրքի ծնունդին: Աւագ որդի Աշոտը տպարանից կարողացել էր դուրս բերել մի գիրք: Կարդաց Լեռ Կամսարն եւ յայտարարեց.

- Վերջապէս, այսքան երկար տալ - առնելուց յետոյ, Խաչիկ Պողոսեանը հասկացաւ ինձ: Գոհ էր եւ աստիճանաբար ապաքինում էր:

Բայց չար բախտը հետապնդում էր գրողին:

Խաչիկ Պողոսեանը ազդանշանային օրինակը ձեռքին, այցելեց Լեռ Կամսարին եւ գուժեց.

- Վարպետ, գիրքը կալանքի տակ է: Պատճառը «Թատրոնի դիրեկտորը» ֆելիտոնն է: Շատ եւք փորձել մի ելք գտնել՝ արդէն տպուած գրքից մի կերպ հանել այդ չարաբաստիկ էջերը, բայց հնարաւորութիւն չկայ: Կենտկոմը այդ տեսքով արգելում է գրքի վաճառքը:

- Խաչիկ, մի բան արեք, մի ելք գտեք, ես անձամբ կը գնամ այդ դիրեկտորի մօտ եւ կը խնդրեմ, որ նա լինի այն միակ սովետական պաշտօնեան, որի վրայ ես որպէս երգիծաբան կարողանամ ծիծաղել: Վերջին հաշուով ես նրան չեմ ճանաչում, ինձ «Ոգնի»ն է պատուիրել գրել՝ տալով փաստերը, - ասում էր տարաբախտ երգիծաբանը՝ չմոռանալով Խաչիկի բերած գիրքը ընծայագրել խմբագրին:

Ոչինչ հնարաւոր չէղաւ անելու:

Նոյեմբերի 10ին երգիծաբանի վշտերից բարակած սիրտը կաթուածահար եղաւ: Ո՛չ քուն ուներ, ո՛չ դադար:

- Կանչեք Ադօ Ադոյեանին, - անընդհատ պատուիրում էր նա, յոյս ունենալով, որ «Լենինեան ուղի» ամսագրի խմբագիրը, որն իր ընկերն էր եւ Կենտկոմի անդամ, մի բան կ'անի: Ժամը մէկ հարցնում էր.

- Ադոն չեկա՞ր...

Ադօ Ադոյեանը պատճառաբանելով, որ անընդհատ միջոցառումներ եւ ժողովներ ունի՝ եկաւ միայն մի քանի օր անց: Եկաւ ու լսելով գրքի պատմութիւնը սկսեց յուսադրել.

- Դա լուծուելիք խնդիր է, Լեռ ջան, ամէն ինչ լաւ կը լինի, մի մտածիր: Չգիտե՞ս, որ տաշած քարը գետին չի մնայ, այն էլ մարմարը: Զո ամէն մի գրուածք մարգարիտ է՝ բոլորբոլորը լոյս կը տեսնեն, այ կը տեսնես:

Ընտանիքը արեց անհնարինը երգիծաբանին ոտքի հանելու համար, բայց ապարդիւն՝ Լեռ Կամսարը պարտուած եւ դառնացած հեռանում էր:

- Շատ կ'ուզենայի թաղուել իմ տնկած թթի ծառի տակ

եւ որպէս շիրմաքար մեղուի փեթակ դրուեր վրաս, որ այդ ազնիւ միջատներն անընդհատ բզզային վրաս, - ասաց նա իր որդիներին: - Բայց գիտեմ, որ դա հնարաւոր է: Կը թաղէք կնոջս կողքին, գաղտնի, մի քանի մարդկանցով եւ անպայման բերանքսիվայր կը դնէք, որ այս կառավարութեան երեսը չտեսնեմ: Ինչքան էլ դժուարութիւն ունենաք, գրողների միութիւնից եւ պետութիւնից օգնութիւն չընդունէք, ես ինձ շատ վիրաւորուած կը զգամ եւ կը համարեմ, որ ինձ արժանի ժառանգ չեմ ունեցել:

«Ես մարդ ծնուել եմ, մարդավարի ապրել եմ եւ որպէս մարդ էլ կ'ուզենամ հեռանալ այս աշխարհից...»:

1965 թ. Նոյեմբերի 22ի երեկոյեան Լեռ Կամսարը կնքեց իր մահկանացուն: Չնայած Ադո Ադոյեանի հաւաստիացումներին, պետական յուղարկաւորութիւն չեղաւ: Երբ օգնութեան գումարը բերեցին գրողների միութիւնից եւ կառավարութիւնից, ժառանգները յայտարարեցին.

- Ամբողջ կեանքը հալածեցիք եւ տանջեցիք մեր հորը՝ մենք թքել ենք յետմահու ձեր օգնութեան վրայ:

Թաղումը բազմամարդ էր՝ եկել էր ողջ մտաւորականութիւնը, բայց հասարակ ժողովուրդն աւելի շատ էր, քանի որ մահացողը իրենց ոտնահարուած իրաւունքների պաշտպանն էր...

Գրողների միութեան նախագահ Էդ. Թօփչեանը չկար: Շիրիմի վրայ խօսեց Վաղարշակ Նորենցը: Նա ասաց.

- Լեռ Կամսարը մինչեւ վերջ ծիծաղեց եւ ծիծաղեցրեց մեզ: Զիմա էլ կարծես դագաղի միջից ծիծաղում է մեր վրայ... (Իրօք դէմքի վրայ յաւերժացել էր քմծիծաղը):

Յիշարժան էին «Ոգնու» խմբագրի տեղակալ Բաբկէն Շահումեանի խօսքերը.

- Մեր կորուստը շատ մեծ է, - ասաց նա, - բայց ներկաներից ոչ մէկը դա դեռ չի գիտակցում: Կ'անցնի որոշ ժամանակ եւ ապագայ սերունդը նոր միայն կը հասկանայ այս կորստի անսահման մեծութիւնը...

ԻՆՉՊԻՍԻ՞ ՄԱՐԴ ԷՐ ԼԵՐ ԿԱՄՍԱՐԸ

Առանց մտածելու այս հարցի պատասխանն է՝ ազնիւ, անասելի ազնիւ: Ազնիւ եւ ճշմարտապաշտ: Ուզում էր միշտ օգտակար լինել մարդկանց՝ պաշտպանել հասարակ մարդու ոտնահարուած իրաւունքները: Բարի էր, բայց Աստուած չաւեր, որ բարկանար: Սիրում էր նոյնիսկ իրեն վնասելով ուրիշին բարութիւն անել: Իրենց ամբողջ ընտանիքն էր այդպիսին: Ինչքան ասես դիմացինի կարիքները կը հոգային, բայց, անհրաժեշտութեան դեպքում, երբեք ուրիշից բան չէին խնդրի: Եթէ մէկից մի բան ստանային, անհնարին է, որ չփոխհատուցէին:

Արտաքինից շատ հանգիստ մարդ էր թուում Լեռ Կամսարը, բայց ներքուստ շատ անհանգիստ էր եւ ըմբոստ: Սիրում էր բնութիւնը: Գիւղում իրեն աւելի լաւ էր զգում, քան քաղաքում:

Դիրահաւատ էր վերին աստիճանի եւ միամիտ, որը նրան շատ էր վնասում: Քանի որ ինքը երբեք չէր ստում, կարծում էր, որ միւսներն էլ չեն խաբի:

- Եթէ մարդն ասում է, պէտք է հաւատալ նրան, - միշտ ընդդիմանում էր ինձ:

Երբ պարզուում էր, որ խաբել են իրեն, շատ էր վիրաւորում, մա՛նաւանդ, որ դա անում էին պատասխանատու պաշտօնեաները: Ամէն անգամ, երբ դիմում էր նրանց եւ ասում էի.

- Ա՛յ պապ, մի՛ գնա- խաբում են քեզ: Ի՞ գուր տեղը յետոյ գայրանում ես:

- Զէնց էլ պիտի գնամ, որ տեսնեմ մարդկութիւնը ինչքան է ցածրացել, որքան է զրկուել արժանապատուութիւնից:

Գրում էր միայն առաւօտեան, բայց ամբողջ օրուայ ընթացքում միտքը մտազբաղ էր՝ մտքում ստեղծագործում էր: Մի անգամ ճաշի ժամանակ, երբ բոլորս լուռ ճաշում էինք, յանկարծ բարձր բացագանչեց.

- Գտա՛յ, գտա՛յ, - եւ վազեց դեպի գրասեղանը եւ ինչ-որ նշում արեց: Բոլորիս զարմացած հայեացքների ներքոյ վերադարձաւ ու շարունակեց.

- Վա՛յ լօ, քանի օր էր այդ միտքը կորցրել էի, այսօր միայն յաջողուեց գտնել:

Երեխայի պէս ուրախացել էր:

Անաչառ էր վերին աստիճանի: Երբ որեւէ գիրք էին տալիս կարծիք յայտնելու համար՝ անկեղծ ասում էր ինչ որ զգում է: Քրիստափոր Թափալցեանի «Պատերազմ»ի վերջին հատորը շատ էր հաւանել եւ իր խմբագիր Խաչիկ Պողոսեանի մօտ բաւականին մեծարեց հեղինակին:

- Վարպէ՛տ, ականջներիս չեմ հաւատում, - ասաց Պողոսեանը, - այդ դուք չէիք, ոչ սաստիկ քննադատել էիք նրան:

- Ի՞նչ կայ զարմանալու: Լաւի ժամանակ՝ լաւ: Վատի ժամանակ՝ վատ:

Վերջին հեղինակը ով հիացրել էր իրեն՝ Պարոյր Սեւակն էր: Ռուս գրողներից շատ էր հաւանում Պաստեռնակին եւ Շոլոխովին:

Երբ թարգմանաբար լոյս տեսաւ Սարոյեան՝ ուղղակի հիացած էր, ասելով.

- Միայն ազատութեան դեպքում այսպիսի գրականութիւն կը ստեղծուի:

Այս բոլորը նրա կեանքի վերջին տարիների մասին է խօսքս: Շատ հաւանեց նաեւ Վահրամ Փափագեանի յուշերը, միայն նեղսրտեց, որ անհարկի դաշնակցութեանը վիրաւորել է:

Գրքերից առաւել նա բաց չէր թողնում օրուայ մամուլը եւ «Ազատութիւն» ռադիոկայանը՝ աշխարհի անցուդարձից տեղեակ լինելու համար:

Լեռ Կամսարը դառնում էր վրիժառու, երբ ուժեղը ճնշում էր թոյլին: Միշտ թոյլի կողմն էր բռնում: Երկու դեպք եմ յիշում, որ մինչեւ անգամ յարձակուեց այն ծնողների վրայ, երբ նրանք ծեծում էին իրենց երեխաներին եւ կանխելով սպառնաց նոյնիսկ դատի տալ՝ անսահման զարմանք պատճառելով վերջիններից:

Սկզբունքային էր վերին աստիճանի եւ հզօր կամք ուներ: Ոչ մի բան չէր կարող կոտորել նրան, նոյնիսկ իր ընտանիքի վտանգուած լինելը: Երբ պարբերաբար գաղտնի օրգանները առաջարկում էին մատնութեամբ զբաղուել, փոխարէնը առաջարկելով բարեկեցութիւն եւ ազատ կեանք՝ մերժում էր:

Չեմ յիշում Դաշնակցութեան ո՞ր յոբելեանի առիթով «Ոգնու» խմբագրի տեղակալ Բաբկէն Շահումեանը, որին շատ էր սիրում Լեռ Կամսարը, եկաւ եւ վախուորած, քանի որ երգիծաբանը իր նիւթերը ծուլատելու պատճառով հրաժարել էր համագործակցութիւնից, խնդրեց Դաշնակցութեան դէմ մի բան գրել.

- Վարպէտ ջան, գրէք մի բան՝ շատ կարեւոր ամենակ է:

Կառավարութիւնը ձեզանից սպասելիքներ ունի եւ մեծ հոնորար կը լինի:

- Ես դիմացից եմ հարուածում՝ թիկունքից խփել չգիտեմ: Դաշնակցութեան դէմ գրում էի, երբ նրանք իշխանութիւն էին: Զիմա գրում եմ կոմունիստների դէմ, քանի որ արժանի են... Եւ արդէն ասել եմ չէ՞, Բաբկէն, որ Գիգիի համար ես մի տող էլ չեմ գրի, ինչքան էլ ընտանիքս սովի, - ասաց նա բարկացած:

- Իսկ թոյլ կը տաք «Ազգային այբբենարանից» օգտուելք, - չէր նահանջում Բաբկէն Շահումեանը, շատ համոզելուց յետոյ:

- Ձեր գիտնալիքն է, ինչ ուզում եք արեք: Խեղճ Դաշնակցութիւնը, ի՞նչ անի, որ ձեր ճիրաններից ազատուի: Արիւն չթափուելու համար ինքնակամ հեռացաւ իշխանութիւնից, էլի չպրծաւ: Թո՛ւ, կոմունիստների անամօթ երեսին...

Չկարծէք ընտանիքը չէր սիրում՝ հոգատար հայր էր, սիրող պապիկ: Թոռներին աւելի շատ էր սիրում: Ասում էր. «Երեխան շահն է, իսկ թոռը շահի շահն է, որն աւելի քաղցր է»:

Նրա ամենամեծ առաքինութիւնը իր գոհաբերութիւնն էր յանուն ճշմարտութեան եւ յանուն մարդուն...

ՕՖԵԼԻԱ ԱՂՈՒՐԵԱՆ

2011 թ.

ՍԵՂԱ ԳՐԻԳՈՐԵԱՆ

ՀԱՅՈՒՎԻՏԻՒ ՏՔ

ՕՐԱԳՐԵՆ

ԱՆԹԻԼԻԱՍ
2011

«Հայուհիի մը օրագրեն» խորագիրին ազդեցութեան տակ ընթերցողը, առաջին տպաւորութեամբ, կը կարծէ օրագիրներու հատոր մը պիտի բացուի իր առջեւ, բայց այդպէս չէ իրականութիւնը, այլ այնպէս է, որ ապրումներն ու մտածումները իրենց առաջին բխումով յանձնուած են թուղթին ու ստացուած է գրական տարբեր բնոյթի էջեր, յաջորդաբար պատմուածք, տպաւորապաշտ էջ, օրագրութիւն թէ նամակային պոռթկում, որոնց ատաղձը օրագրային վաւերականութիւն մը ունի, ապրուած ըլլալու հաւաստիք մը, ծննդավայրին մէջ պատահած դէպքեր ըլլան անոնք, հայրենի երկինքին տակ թէ անդրովկիանոսեան ափերուն: Այդ վայրերուն մէջ օրօրուած է հեղինակին մանկութիւնը, ձեւաւորուած է անհատականութիւնը ու իբրեւ տարագիր հոգի նուիրուած է իր եւրօթեան հիմնական խարիսխին տառապագին որոնման:

Սեղա Գրիգորեան բարեբախտաբար, ցուցական մեկնակետէն գերծ է, իրեն զարնուած ազգային ու մարդկային բացառիկ պահերուն բացառիկ զգայնութիւնները իրենք անյետաձգելի ուժգնութեամբ մը ստիպած են, որ անցնի սեղանին առջեւ:

Գրիգորեան տեսած է տարբեր աշխարհներ, տարբեր մարդեր, բախած է տարբեր մտայնութիւններու, ականատես եղած է իրար խաչաձեւող հակասութիւններու, հանդիսատես եղած է հոս արգիլուած ու հոն սանձարձակ ապրումներու, բայց թուղթին յանձնած է միայն այն փորձառութիւնները, որոնք շարժած են իր ջիղերը, մերուած են հոգեբանական դրութիւններուն կամ մերժուած անոնցմէ, որոնք ապրուած են ու բառի վերածուելու կարօտէ մը բռնուած:

Գրականութեան պատմութեան մէջ ապրուած էջերուն հիմնական պատճառները ասոնք եղած են, առարկաներուն բռնկած կարօտներ եւ հեղինակներուն ընտրական բնագործ: Այսինքն՝ «Հիմնականը մանրից» զանազանելու գիտութիւնը, որուն սովէն, բարեբախտաբար, չեն տառապիր Սեղա Գրիգորեանի էջերէն շատերը:

Այս համառօտ խօսքին մէջ, մենք պիտի ուզեինք **«Հայուհիի մը օրագրեն»** առանձնացնել երկու պարագայ, հայաստանեան իրականութենէն վերցուած անկախութեան ապրումին հրամայականը եւ հողին նոյնքան ուժգին խորհուրդը, որոնք սեւեռուած են պատմուածքներու շարքին մէջ:

Մեր հայրենիքին ծանր տարիներն են, 90ական թուականները: Մութ տարիներ են, ցուրտ տարիներ, հերթի ու խուճապի մատնուած բնակիչներու իրարանցում, շուկայական յարա-

բերութիւններու բուռն շրջան, երբ ժողովուրդին մէկ խաւը, առանց աշխատելու օրը իրիկուն ընելու ու քանի մը կեդրոններէ ամսական առնելով ձրի ապրած խորհրդային ձրիակերները, անկախութենէն դժգոհ, փորձուեցան կարօտով յիշել հացով ու գինիով յարաբերաբար տանելի սովետի վերջին ժամանակաշրջանը, բայց ստամոքսային փիլիսոփայութեան հարկատու այդ ստրկամտութեան դէմ ծառացան անկախութեամբ հպարտ ընտիր տիպարներ: Սեղա Գրիգորեան որսացած է այս վերջիններէն ոմանց խորագրած ապրումները, ուր սովորական հոգեբով տարուած, յառաջացեալ տարիքով, հիւանդ, կարօտներով խոցուած սովորական հերոսուհին յանկարծ կը մտնէ քաղաքական կալուածին մէջ ու կը պարզէ նոյնպէս ապրուած լաւատեսութիւն մը Հայաստանի ներկայի ու ապագայի նկատմամբ. **«...Եւ ով որ փորձեր հակաճառել իրեն, մեծ հաւատքով կը պատասխանէր. «Յերիք ա որ անկախ ենք, պետութիւն ունենք, պա, ուզում ես առյաւելտ կախեա՞լ մնանք ռուսներից»:**

Ներկայացուցչական նոյն տիպարը եւ անկախութեան միւս կողմնակիցները ամենուն ու ամենուրեք ըսին, արմատ նետեցին իրենց համոզումներուն մէջ եւ պոռացին. «Կախեա՛լ՝ ոչ, բարեկա՛մ միշտ:

Սեղա Գրիգորեան, Հայաստանի թէ ողջ հայութեան ջախջախիչ տոկոսին ապրումները անձնաւորած հայաստանցի այս համարում առթող կին տիպարին պէս ունի դարաբաղցի նոյնքան հետաքրքրական տիպար մը, զոր կարելի է նկատել մեր հողապաշտ ժողովուրդին մէկ ներկայացուցիչը: Մարտակերտի մէկ գիւղէն մագապուրծ ճողոպրած ուսուցիչ մը, Յովհաննէս, կնոջ ու աղջնակին հետ ապաստանած է Երեւանի Օ թաղամասը եւ բահով ու բրիչով կը քանդէ իրենց խրճիթին առջեւ տարածուող կուպրը, անկէ կ'անջատէ հողը, որուն ընդերքին կ'ուռճացնէ ընտանիքին պէտք եղած հողածնունդ բարիքները:

Պատմուածքին հեղինակը, Գրիգորեան, քաղաքի մէջ ծնած, քաղաքներու մէջ հոգի եւ ոսկոր կազմած հոգի, ի դէմս դարաբաղցի ուսուցիչ Յովհաննէսին՝ շնչաւորած է հողապաշտ մեր ժողովուրդին մէկ տիպարը: Այսպէս՝

«Գիւղացի մարդ, իր սեփական փորձով գիտեր, որ հողին տուածը ուրիշ ոչ մէկ բան կրնար տալ: Յովհաննէսին համար օրհնութիւն էր հողը, իսկ հիմա, բան մըն ալ աւելի՛, սա անկէնդան կուպրին ընդմէջէն անիկա յարութիւն կու տար իր Ղարաբաղին» (էջ 40):

Պարզ է երկու տիպարներուն խորհուրդը, Անկախութեան քուէարկող ու հողին երկրպագող հոգիները իրենք պահեցին մեր անփոխարինելին, Հայաստանը եւ մեր եւրօթեան մայր գիծերը:

Հատորին միւս էջերը, մտածումները, ապրումները որքան ալ սրտի մօտ ըլլան ու ընթերցողին երեւակայութիւնը շոյեն, այս կին տիպարին անկախութեան ապրումը եւ ուսուցիչին հողային հաւատամքը, մեր տպաւորութեամբ, աւելի ուժգին կը դրոշմուին յիշողութիւններու մէջ:

Ըսինք, որ Սեղա Գրիգորեանի **«Հայուհիի մը օրագրեն»** անուն հատորը լեցուած է տարբեր սեռի գրութիւններով, պատմուածք, տպաւորապաշտ սեւեռումներ, օրագրութիւններ, նամակներ, հրապարակագրական կարգաւորներ, եւ այլն, որոնք գրուած են այնպէս, ինչպէս առաջին տպաւորութեամբ յուզած են հեղինակին ջիղերը ու սրած երեւակայութիւնը, վստահելով ըսուածին անկեղծութեան ու գործածած լեզուին տաք որակին: Նոյն պատճառով հատորը իրճուանք ներշնչող ուժ մը ունի, ինչպէս նաեւ համոզում առաջացնող բազում հաստատումներ ու դիտողութիւններ, որոնք հաղորդական իրենց բնոյթով կը կաշառեն մեր ճակատագրով հետաքրքիր ամեն ընթերցող:

Այս իրականութեան դիմաց, զարմանալի է, որ գիրքին բազմաթիւ էջերուն հետ միշտ յաճախեց մեզի շուրջ քառասուն տարի առաջ մեր յիշողութեան կառչած Լեւոն Թոլստոյի մէկ հաստատումը, սա.

«Վերջին ժամանակներում, ես չեմ կարողանում գեղեցկագիտական գործեր կարդալ ու գրել հին ոճով, բնութեան նկարագրութիւններով: Ուղղակի ամօթ եմ զգում: Պետք է գտնել ինչ-որ նոր բան, նոր ձեւ: Եւ մտածում եմ մեր գործի մասին: Յետոյ հարցրի ինքս ինձ, այդ ի՞նչ է: Ոչ պատմուածք է, ոչ բանաստեղծութիւն, ոչ վէպ, իսկ ի՞նչ է: Հէնց այն ինչ անհրաժեշտ է» («Սովետական գրականութիւն» 1969, թիւ էջ 11, 127):

Պ. Ս.

Յարգելի Արմեն,

Ուրախ եմ՝ իմացայ ձեր անունը եւ որ տեւական ժամանակ թարգմանում եք «Արխիպելագը» եւ համահնչում եմ ձեր հայեացքները: Շնորհակալ եմ: Յաջողութիւն եմ ցանկանում թարգմանութիւնն աւարտելու գործում:

:...: Ամենայն բարիք ձեզ եւ ամենայն ցանկութիւններս Հայաստանին՝ արհաւիրքներից ելնելու նրա ճանապարհին («Գուլակ Արշիպիլագ»):

Ալ. Սուլժենիցին

31-10-91

... Երբ Հայաստան եկանք, ո՛չ յուշարձան կար, ոչ էլ Ապրիլ 24ը ժողովրդի գիտակցութեան մէջ: Արտասահմանի հայ գաղութներում այդ օրը նշում էինք ամեն տարի: Հայաստանում, սովետական Հայաստանում մեր բերաններն էլ փակուեցին: Նացիոնալիզմ է: Հակասովետական է, վտանգաւոր: Բերանդ փակիր, որ չաքսորեն քեզ: Մէկուկէսերկու միլիոն է զոհուել, հայրենիք ենք կորցրել, դրա մասին խօսելը նացիոնալիզմ է... («Ծիշող կեանքն է», Երեւան, 2001, էջ 207):

Կարպիս Սուրենեան

Հայը գիրք կարդալով դասեր է քաղել մեր պատմութիւնից, մեր աւանդներից: Ռաֆֆու վեպերը ազգասիրութեան դասագիրք են եղել հայի համար: Յիշենք այն փաստը, որ հայ մարտիկը՝ Ուրֆայի հերոսամարտի ժամանակ՝ մեծ վիպասանի «Կայծեր»ը զենլի հետ միասին գնացել է դեպքերը...: Ազգային աւանդներից հեռանալը մահ է ամենքի համար, որը ազգային ոգի է կոչում: Գիրք կարդալը հայի համար ոչ թէ զբաղմունք է եղել, այլ՝ ուսուցում, դաստիարակում, վերջապէս՝ հայրենասիրութիւն, իսկ այսօր, տէխնիկայի եւ օտար ազդեցութիւնների այս դարում, երբ խաթարուած է ազգայինը՝ մեզ դարձեալ կարող է փրկել գիրքը («Գրական թերթ», 2003, թիւ 1):

Էդուարդ Աւագեան

Ե՛ւ թուփը, ե՛ւ առուակը, ե՛ւ ողջ տարածութիւնն իրենց տեղերում էին: Ոչինչ չէր պակասել: Սակայն մի դետալ աւելացել էր: Որը նախկինում հաստատ չկար: Չէր եղել: Աղջիկ էր: Հոփիւր ապշեց: Ո՛չ այն պատճառով, որ աղջիկ չէր տեսել: Յաճախ էր պատահել որ... մի խօսքով: Բայց այսպիսի աղջիկ: Ապշանքն այնքան մեծ էր, որ հոփիւր մտքում, իրենից անկախ, մրմնջաց. «Այս աղջիկը, այս ի՛նչ հրաշք է («Գրական թերթ», 2004, թիւ 27):

Ռաֆայել Նահապետեան

Մարդը ուզում է ազատուել իր ցաւերից. դա նրան յաջողում է, երբ մերձաւորին է ազատում նրա ցաւերից: Տէրը քեզ ինչպե՞ս ների, երբ դուն Նրան չես հաւատում: Դա չի կայանում նոյնիսկ երկրային չափանիշներով: Եթէ մեր երկրագունդը տիեզերքի մեկրոմոտելն է, մեր միտքը հեռուները սաւառներու կարիք չունի՝ տիեզերքը ճանչնալու համար: Ապրելը մեզ համար դարձել է սովորութիւն. ահա թէ ինչու դժուարանում ենք մեռնիլ: («Գրական թերթ», 2004, թիւ 38):

Վարուժան Նալբանդեան

Այս եւ «Ազդակ-գրական»ի յաջորդող վեց-եօթը էջերը մէկտեղուած են իբրեւ յարգանքի սրտաբուխ տուրք հայրենի այն հրապարակագիրներուն, փորձագրութեան վարպետներուն, թարգմանիչներուն, բանաստեղծներուն ու գրագետներուն, որոնք 2011ին դարձան հողին, ոմանք իրենց հասուն տարիքին, եւ ուրիշներ՝ անժամանակ:

Հոս ներկայացուածները, անշուշտ, անհետացած արժանաւորներուն ամենը չեն: Դժբախտաբար, մենք հայրենի մամուլին բոլոր անդամները տեսնելու պատեհութիւն չունինք ու եթէ ուրիշ դեմքեր հոս չեն երեւիր, մեր թերացումը բացառաբար այդ պատճառին պէտք է վերագրել:

Հայաստանի ամենէն ուժեղ հրապարակագիրներէն մէկը կը համարուէր Արմեն Յովհաննիսեան եւ փորձագրութեան ամենէն վաստակաւոր ներկայացուցիչը՝ Կարպիս Սուրենեան, որոնք նշանակալի վաստակի տէր են նաեւ թարգմանչական գրականութեան մարզին մէջ: Յովհաննիսեան երեք հատորներու մէջ տեղադրուած Ալեքսանդր Սուլժենիցինի 1930 էջ հաշուող «Գուլակ Արշիպիլագ»ը թարգմանեց ու Սուրենեան Տոսթոեւսկիի երկու ծաւալուն հատորներ ու ներկայացած ներկայացած Տոսթոեւսկիի գլուխ-գործոցներէն մէկը՝ «Քարամազով եղբայրներ»՝ 1230էն: Երկու լեզուներուն լաւատեղեակ արձակագիրներու ու բանաստեղծներու վկայութեամբ, երկու թարգմանութիւններն ալ ունին բնագիրներուն համազօր հնչեղութիւն մը: Չհաշուած անոնց կուտակած մտաւորական միւս գործերը, յիշեալ երկու գործերուն հայանցումը պիտի բաւէր յաւիտենապէս երախտապարտ մնալ իրենց:

Նուազ ցաւալի չէ միւս դեմքերուն կորուստը, որոնք ստեղծագործական թէ թարգմանական մարզին մէջ քիչ ներդրում չեն կատարած:

Որքան ալ փորձենք մխիթարել մենք մեզ, թէ՛ հայրենիքը Սփիւռք չէ, ու այնքան ատեն, որ Լուսաւորչի աստղին տակ կանգուն է մեր ժողովուրդը, հրապարակագիրներու, փորձագրութեան նուիրուած մտաւորականներու, բանաստեղծներու ու գրագետներու սովէն չենք տառապիր, բայց պիտի ընդունինք, որ անհետացող ամեն դեմք անփոխարինելի է՝ իբրեւ ձայն, աշխարհահայեացք, իբրեւ ոճ ու վաստակի իւրայատուկ կշիռ:

Աստուած մոռցնել չտայ, կ'ըսէ գիւղական մէկ փիլիսոփայութիւնը:

Ի մեծ բարեբախտութիւն հայ գրականութեան, անհետացողները Աստուծոյ չեն ձգած չմոռցուելու այդ պարտականութիւնը...



Արմեն Յովհաննիսյան

Կեանքի 76րդ տարում մահկանացուն կնքեց հրապարակախօս, թարգմանիչ, ՀՀ մշակույթի վաստակաւոր գործիչ Արմեն Յովհաննիսյանը, մէկը այն երախտաւորներից, ում ներկայութիւնը 20րդ դարի 2րդ կեսին մեր կեանքի, մեր մշակույթի ընթացքի մէջ անգնահատելի է:

Նրա կազմակերպչական եռանդն ու գործունէութիւնը մամուլում եւ հեռուստատեսութիւնում, գրական ու երաժշտական հաղորդումների ինքնատիպ նախագծերը, հրապարակախօսական կրքոտ յօդուածները, թարգմանական գործունէութիւնն անշնչելի հետք են թողել մեր հասարակական կեանքում եւ մշակույթում:

Արմեն Յովհաննիսյանը ծնուել է 1936 թ. Մարտի 10ին, Թաւրիզում (Իրան): 1946 թ. ընտանիքով ներգաղթել է Հայաստան: Աւարտել է ԵՊՀ բանասիրական ֆակուլտետի ժուռնալիստիկայի բաժինը: Աշխատել է «Ավանգարդ» թերթում, Հայաստանի հեռուստառատիոպետկոմում, հիմնել է «Ծիածան» ռատիոկայանը, ղեկավարել է ռատիոհեռուստատեսութեան լրատուական ծառայութեան երաժշտական բաժինը: Աշխատել է գրահրատարակչութեան ոլորտում: Վարպետութեան դասեր է վարել Ռուս-հայկական, «Գլաձոր» եւ Հայկական պետական մանկավարժական համալսարաններում:

Աւելի քան հինգ տասնամեակ նրա հրապարակախօսական յօդուածները առանձնացել են նիւթի եւ հարցադրումների լայն ընդգրկումով ու հրատապութեամբ, քաղաքացիական ակտիւ կեցուածքով, խիզախ դիրքորոշումով, մեր երկրի ու մշակույթի նկատմամբ անսահման սիրով ու նուիրումով: Տարբեր տարիներին այդ նիւթերը ամփոփուել են «Աղետ» (1990), «Հայաստան, երկիր դրախտավայր» (1993), «Խորհրդատուութիւններ 2-րդ էջի համար» (1993), «Ուրբաթախօսութիւն» (2001) եւ այլ ժողովածուներում: Առաւել ամբողջական դրանք ընդգրկուել են «Չանգակատուն բերող ճանապարհին» եռահատորեակում, որի երրորդ հատորը տպագրութեան ընթացքի մէջ է:

Ծանրակշիռ է նրա վաստակը գեղարուեստական թարգմանութեան ասպարեզում: 1960ականներից հայ ընթերցողը, շնորհիւ Արմեն Յովհաննիսյանի, ծանօթացել է ռուս գեղարուեստական արձակի ընտիր նմոյշներին՝ ընդհանուր հաշուով մօտ 8000 էջ թարգմանական գրականութիւն: Ալեքսանտր Պուշկին, Ֆեոդոր Դոստոեւսկի, Անտոն Չեխով, Ալեքսեյ Կուպրին, Միխայիլ Բուլգակով, Ալեքսանդր Սոլժենիցին, Վասիլի Շուկշին, Եւայլն, երկու տասնեակից աւելի հեղինակներ: Թարգմանութիւններում Յովհաննիսյանն ապրել է իր հերոսների կեանքով, կարողացել է նրանց հոգեւոր գանձերը անկորուստ փոխանցել հայ ընթերցողին:

Բարձր է գնահատուել նրա հրապարակախօսական եւ թարգմանական գործունէութիւնը: 1989 թ. արժանացել է Ժուռնալիստների միութեան «Ոսկէ գրիչ» մրցանակին: 1989ին՝ ՀԳՄ Եղիշէ Չարենցի անուան, ապա 2001 թ. Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի եւ ՀԳՄ համատեղ «Կանթեղ» թարգմանական մրցանակներին: 2004ին պարգեւատրուել է Ռուսաստանի Դաշնութեան Բարեկամութեան շքանշանով:

Մահը բազմաթիւ գործեր կիսատ թողեց, բազմաթիւ ծրագրեր չիրականացան: Նրա գրամեքենայի վրայ անաւարտ մնաց Վլ. Նաբոկովի «Լուիտա» վէպը: Սակայն տաղանդաւոր հրապարակախօսի ու թարգմանչի, անուանի հասարակական գործիչ ստեղծած ժառանգութիւնը նրա անունը վառ կը պահի հետագայ սերունդների յիշողութեան մէջ:

ԿԱՌԱՎԱՐԱԿԱՆ ՅԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Սովորականի պէս, տարեմուտի այս օրերին ամեն ոք, կամայ թէ ակամայ, մտորումների մէջ է ընկնում, ցանկութիւնների գիրկը, որոնք աւելի երազանք են, քան պարզ ցանկութիւն, բարի մտադրութիւններ են, քան իրական հիմքով անելիքներ: Եւ տարեմուտի, բուն Նոր Տարուայ շնորհաւորանքների մէջ այդ անուրջների որոշակի պատառիկները կան: Թող այս լինի, այսպէս, եւ ոչ այն ու այնպէս: Մարդ ասածը մարդ է հենց նրանով, որ անուրջներին ենթարկուելու, հպատակուելու կարողութիւնն ունի:

Բոլորին՝ առողջութիւն, աշխարհին՝ խաղաղութիւն - ամենատարածուած այս մաղթանքը երանգներ ունի, խորքեր, տարբերակումներ:

Ինչեւ... Անցնող տարուայ իրադարձութիւններից ելնելով՝ Աստուած մեզ ազատի ուկրաինական անբնական-անբնական, ներմուծովի պառակտում-խժոժութիւններից:

Անցնող տարուայ արհաւիրքներին տեղեակ՝ Աստուած մեզ ազատի բնական ու անբնական աղետներից, որոնք տասնեակ հազարաւոր մարդկանց դարձրին տնանկ, անապաստան, ունեցած-չունեցած, ակնթարթի մէջ կորցրած, այս ու այն կողմից օգնութիւն հայցող, աղերսական աչքերով անձանց: Աղետալի երկրաշարժ տեսած-ապրած երկիրն ու մարդիկ այդ ամենը մաշկի վրայ են զգացել, սեփական աչքերով տեսել ու զգացել: Իսկ ուրիշի վիշտ չի լինում:

Տէր մեր Աստուած, Խորէն Աբրահամեանի պէս մարդկանց այդքան վաղ ու աւաղ մի տար մեզկից, դառնում ենք աննահապետ, անղեկ-անառագաստ ժողովուրդ: Հազար ողորմի բնիկ իգորիցի, արմատական երեսնցի հանգուցեալին, որը մեր քաղաքի թանձր գոյներից էր:

Մենք նոր դարի ակունքներին ենք: Ի՞նչ է բերելու մեզ այս դարը, ի՞նչ է տանելու, ի՞նչ է պարգեւելու եւ ի՞նչ պատճառելու: Բարին թող լինի: Քանզի եւ ոչ մի գուշակ պատասխանը տալ չի կարող: Սակայն չմոլորուելու, ոտից գլուխ կաթուածահար չլինելու մղումը թելադրում է նաեւ անելիքներ, պարտականութիւններ: Բացբերանութեան, բաց բերանների մէջ միայն ուտելիք չէ, որ կ'ընկնի, ամենից քիչ՝ հենց ուտելիք:

Ի՞նչ ենք անում, ի՞նչ ենք անելու, որ երկիրը դառնայ մեր երազած հայոց ոստանը, ի՞նչ ենք անում եւ անելու, որ մենք՝ հայերս, դառնանք առաւել բարեացակամ, անքեն, անթոյն... Ի՞նչ ենք անելու, որ դարանած վտանգ-որոգայթները շրջանցեն, չքուեն մեր եզրերից, մեր առօրեայից, մեզ դարանած վտանգներն ինչպէս ենք չեզոքացնելու: Իւրաքանչիւրս՝ ես, դու, նա, բոլորս ու ամենքս: Տէր Ամենակարող, ուժ եւ կարողութիւն տուր մեզ՝ բազմամեղերիս...

Սա է կամ մօտաւորապէս սա է Տարեմուտի եւ Նոր Տարուայ սկզբին մարդկանց դրօշին դաջուածը, մտածողութեան մէջ փորագրուածը:

Հենց իւրաքանչիւրն իրեն զգաց ոչ թէ եւ ոչ միայն երկրի տէր, այլեւ երկրի ծառայ ու մշակ, երկիրը կը դառնայ արժանապատիւ մարդկանց բնակութեան վայր: Ոչ միայն հասցէ եւ աշխարհագրութիւն: Ոչ միայն նախնեաց հող, այլեւ ապագայ սերունդների բնակութեան շէն ու քաղաք:

Նաեւ՝ ամեն մասնագետ, ամեն գործաւոր իրենն է ակնկալում Նոր Տարուց:

Տէր Ամենակարող եւ Բարեգութ, գրական մեր ընտանիքին էլ պարգեւիր գրական առատ հունձք...

Ամեն:

ԱՐՄԷՆ ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ

ԵՐԿՈՒ ՃԱԿԱՏԱԳԻՐ, ԵՐԿՈՒ ԳՈՒՆԱՇԽԱՐՅ

ԱՐՏԻՍՏԻ ԵՐՋԱՆԿՈՒԹԻՒՆԸ

ԿԱՐԱԿՍ ՍՈՒՐԵՆԵԱՆ



Կարպիս Սուրենեան

Կարպիս Սուրենեան-գրողի, թարգմանչի կայացումը մշտաբար ընթացել է ապրած ժամանակին հակադիր, բայց կատարելապես վստահությամբ, անձեռնկախ նուիրումով: Նուիրում բառը թերևս ենթամաստային նշանակությամբ, քանի որ եթե արժեւորելու լինենք Կ. Սուրենեանի վաստակը, ապա նախ եւ առաջ բանիբուն գրողի մտածողութիւնը եւ մտածողական կերպընկալումը պետք է զուգակցաբար նշանակալից համարենք:

Գրականութիւնը իր համար ներկայանալու միակ միջոցն էր, իր «բնիկ որտեղացի» լինելու հանգամանքը հայի տեսակին ոչ պատահաբար նուիրագործումի ճիշդ, եւ ինչ որ գրում էր՝ իր փորձառութեան արգասիքն էր եւ միայն, ինչ որ թարգմանում էր՝ ազատագրումն էր իր մտայղացումների, որոնք ի գորու չէր գրել սովետամիութեան գերատեսչական ֆեոդալիզմի ոգեխեղման պայմաններում, բայց միշտ «ոգու ամբողջներ»ի դատարկութիւնը լցնելու ի գին:

Կարպիս Սուրենեանի հրապարակախօսական բնոյթի եւ շնչառութեան էստեպատումներում («Արեւորդիներ», «Երանութեան կղզին», «Ճիշտը կեանքն է», «Աբսուրդը»), ինչպէս նաեւ «Օրագիր» խորագրեալ ստուարածաւալ օրագրութիւններում ոչ միայն հայ հայրենիքի անցեալն ու ներկան է անհրաժեշտաբար մասնայատկում, այլեւ հոգեւոր պատմութիւնն ու անցեալի պատմականութիւնը, որոնք բաց եւ ուսանելի դասերի ինքնեղ օրինակներ են՝ հպարտ ու անկրտրում ապրած մտաւորական-գրողի ձեռամբ արարեալ: Եւ այս ամենի մեկնակետը մէկն էր. շփոթուածօրէն ապրած սեր հայոց լեզուի նկատմամբ, այն լեզուի, որն ինքը իւրայատկօրէն եւ «գոց գիտեր»: Իր իսկ բառերով՝ «ամենաթափանց զգացումների ու մտածումների անմիջական հայեացքով ու ընկալումներով» էր խորամուխ լինում ճակատագրով իրեն վերապահուած գրական-թարգմանական իրողութիւնների ոչ երեւակայական, տեսանելի քառում:

Կարպիս Սուրենեանի տեսանող հայեացքը, ապրած տարիների փորձառութիւնը ինքնին իրեն մղելու էր մաքրագործման, մտածողական մաքրագործման, քանի որ սուրենեանական խօսքի միջավայր ստեղծելուն էր միտուած նրա գործը՝ երկու ճակատագրի, երկու գունաշխարհի սահմանագծին: Մենք այդ սահմանագիծը հատել ենք իր մահուան գոյժով եւ վստահ ենք, որ այն ճանաչողաբար կը յարթահարենք, ինչպէս ինքը տարիներ անընդմեջ ինքնաբուխ եւ սահմանազանցօրէն, բնաւ չէրկիւղելով մեզ մոլորեցրել. վաստակելի իր ապրած կեանքը մեզ համար տակաւին ճանաչողաբար ուսումնասիրելի է:

ԱՐԹՈՒՐ ԱՆԴՐԱՆԻԿԵԱՆ

Ամիսներ առաջ, մի Կիրակի օր, յետմիջօրէին, մի քանի ընկերներով լսում էինք Երեւանի ռատիոյի հերթական հաղորդումը արտասահմանեան հայ երաժիշտների մասին: Այդ օրուայ հաղորդումը նուիրուած էր փարիզահայ դիրիժօր եւ կոմբոզիթօր Օհան Տուրեանին, որի անունը վերջերս յաճախակի յիշուում էր մեր մայրաքաղաքի երաժշտասերների շրջանում: Այն ժամանակ դեռ չգիտէինք, որ օտարազգի հեղինակաւոր երաժշտական քննադատներ հիացմունքի խօսքեր են ասել Օհան Տուրեանի մասին, կոչելով նրան «Երիտասարդ եւ խոշոր երաժիշտ»: Բայց դեռեւս այդ պահին հարկաւոր էլ չէր իմանալ այդ, որովհետեւ ինքը՝ Օհան Տուրեանը իր երրորդ պաստորալի երաժշտութեամբ անմիջապէս խօսեց մեր հոգուն: Խօսեց այնպիսի հարազատ մի լեզուով, որ հայրենակից մի նոր տաղանդի հանդէպ մեր այնքան բնական հետաքրքրութիւնը շուտով վերածուեց հաճելի զարմանքի եւ ոգեւորութեան:

Պարզ էր աներկբայօրէն, որ մի ճշմարիտ ու մնայուն արժեք է մարմնաւորում Օհան Տուրեան անունը, որ թէեւ ոչ շատ առաջ մեզ համար բոլորովին անծանօթ՝ այժմ արդէն մեր ականջում հնչում էր որպէս ուրոյն անուն: Նրա պաստորալը, որքան ինքնատիպ ու լիարժեք՝ որպէս սիմֆոնիք գործ, նոյնքան եւ ծանօթ ու հարազատ էր հնչում մանաւանդ իր հայեցի, կոմիտասեան լեզուով: Գլինկայի «Կամարինսկայայի» նուրբ, յստակ, մանաւանդ խորապէս ինքնուրոյն նրա կատարումը լաւագոյն մի վկայութիւն եղաւ դիրիժօրի անհատականութեան, որ թէեւ կազմաւորուած ու գնահատուած Փարիզում եւ այլուր, բայց մեզ համար դեռ խոստում էր՝ կատարողի եւ ունկնդրի անմիջական հանդիպմանը կարօտ:

Մի ուրիշ Կիրակի օր, ամիսներ յետոյ, առիթ ունեցանք անձամբ ծանօթանալու Օհան Տուրեանի հետ, որ Մոսկուայի համաշխարհային Ֆետիվալի օրերին մէկ համերգ տալով շտապել էր գալ հեռուից երազած իր հայրենի աշխարհը:

Թխադէմ, գունատ մի երիտասարդ, փոքրիկ սեւ մօրուքով, սեւ քոստիւմ հագին. նրան շրջապատել են մի խումբ երաժշտասերներ՝ մեծ մասամբ արուեստի մարդիկ եւ նա սիրալիր մի ժպիտով, յայտնապէս ուրախ՝ հայրենի արուեստի մարդկանց շրջանում գտնուելու համար գրուցում է մեղմիկ, ոգեյոյզ շեշտով: Ծանօթացանք: Բնականաբար, խօսեցի իր պաստորալից ստացած տպաւորութեանս մասին եւ տուեցի ինձ յուզող մի հարց. ինչպէ՞ս էր նա կարողացել զգալ հայ բնաշխարհի բոյրը եւ արտայայտել այն՝ հարազատօրէն ազգային երաժշտական լեզուով: Նա պատասխանեց.

- Ես պաշտում եմ Կոմիտասը:

Լակոնական ու պերճախօս պատասխան, որ տարիների մտերմութեան համազօր մի առիթ էր՝ ճանաչելու համար երաժշտին ու մարդուն:

Պարզ, համեստ, անմիջական մարդ է Օհան Տուրեանը: Միշտ ուշադիր ու ջերմ՝ մարդու հանդէպ իր վերաբերմունքով, աշխուժ, կատակող, նա միաժամանակ թողնում է զուսպ, սակաւախօս, նոյնիսկ մտացիր մարդու տպաւորութիւն, կարծես լսում է ո՛չ միայն իր խօսակցին, այլեւ՝ իր ներսում անդադար հնչող երաժշտութիւնը: Մի օր նա մոռացաւ իր խօսակցի ներկայութիւնը, մոռացաւ ընթրիքը, մոռացաւ, որ նստած է ճաշարանում, եւ խորասուզուեց նոր ձեռք բերած մի պարտիտուրայի մէջ՝ ամբողջովին կերպարանափոխուելով, դառնալով անհանգիստ, նեարդային, սովորականից աւելի գունատ, անընդհատ թեթեւակի սուլելով ու չափ տալով, դեմքի մերթ ցաւագին, մերթ գոհունակ արտա-

յայտութեամբ, չափազանց աշխուժ եւ անընդհատ փոփոխուող միմիկայով:

Մեր սիմֆոնիք նուագախումբի հետ իր առաջին հանդիպման ընթացքին Օհանը անհանգիստ էր, յուզուած: Մի պահ թուաց թէ... բայց ոչ, նրա ճկուն, կախարհող ձեռքերի առաջին շարժումից սկսած՝ ամբողջ փորձը, հակառակ ընդհատումներին ու կրկնութիւններին, իսկական գեղարուեստական վայելք եղաւ ներկայ գտնուողների համար: Նստած էի մեր ծերունագարդ դիրիժոր Արամ Տէր Յովհաննիսեանին կողքին: Անհամբեր էի լսելու նրա կարծիքը:

– Իսկականն է, – ասաց նա:– Իսկական երաժիշտ:

Փորձից յետոյ, երբ Օհանի հետ իջնում էինք Արովեանով, ես հարցրի նրա յուզմունքի պատճառը: Նա մեղմ ժպտաց:

– Գիտե՞ս, – ասաց, – առաջին անգամն է, որ հայ օրկեստր մը ունիմ առջեւ: Կը հասկնա՞ս ինչ բան է ասիկա ինձի համար: Մինչեւ հիմա ես օտար օրկեստրներ ղեկավարած եմ, օտար լեզուով խօսած եմ անոնց հետ: Զիմա բոլորը հայ տղաներ են, հայերէն կը խօսիմ հետերնին: Ասիկա շատ յուզիչ բան է: Կը հասկնա՞ս:

Եւ «յուզիչ բանը» շարունակուեց, երբ նա չուզեց անմիջապէս վերադառնալ հիւրանոց, ուզեց, որ մի քիչ թափառենք մեր գեղեցիկ, արեւոտ մայրաքաղաքի փողոցներով:

– Ես սիրահարուեցայ մեր Երեւանին վրայ, – ասում էր նա: – Ես շատ քաղաքներ տեսած եմ, մեր մայրաքաղաքը իւրայատուկ գեղեցկութիւն մը ունի: Մէկ շէնքը նման չէ միւսին, բայց բոլորը մէկ ամբողջութիւն մը կը կազմեն. բոլորն ալ մէկ մայրէ մը՝ մեր ազգային ճարտարապետութենէն ծնուած գաւակներն են: Սրտիս խորքէն կ'ըսեմ՝ կեցցեն մեր ճարտարապետները... Եւ այս ամբողջը երեսուն–քառասուն տարուան մե՞ջ կառուցուեր է: Տեսայ հին Երեւանի մէկ անկիւնը մարդուն հաւատալը չի գար... ճիշդ է, Փարիզ շատ գեղեցկութիւններ կան, բայց մերը չեն ատոնք: Զոս ամէն ինչ հարագատ կը զգամ: Գիտե՞ս որքան ժամանակ այս մեր արեւը երազեր եմ:

Այո, նրա ամէն մի խօսքից ու շարժումից երեւում էր, որ հոգին մեր հայրենիքի արեւով է լցուած: Նա մեծ խանդավառութեամբ աշխատում էր նուագախումբի հետ: Զանգիստ չունէր, ամբողջութեամբ փարուում էր իր գործով: Խանդավառ էին նաեւ նուագողները, որոնք անմիջապէս զգացին հայրենակից երիտասարդ դիրիժորի մեծ շնորհքը: Տուրեանը զարմանալի ընդունակութիւն ունի փորձերը թեթեւ, բայց խիստ արդիւնաւետ անցկացնելու: Տեխնիկական բարդութիւնները երբեք չեն կաշկանդում նրան, չեն շեղում նրա ուշադրութիւնը բուն երաժշտութիւնից, որովհետեւ նա արդէն լաւ է ուսումնասիրել կատարուող երկը: Եւ նա կարողանում է լարել նուագողին, ստանալ նրանից այն, ինչ ինքն է ցանկանում, հնչեցնել երաժշտական գործը այնպէս, ինչպէս այն հնչում է իր ներսում, եւ փորձի ժամանակ որքան զուարթ ու հաճոյաբարոյ է նա իր վարուելակերպով, նոյնքան եւ խիստ է ներքուստ՝ կատարելութեան իր ձգտման մէջ: Եւ, ինչպէս գրում է հոլանտացի յայտնի քննադատ Ժոս տը Զլէրքը, **«Երիտասարդ հայ դիրիժորը... երեք կամ չորս փորձի ընթացքում նուագախումբին պարտադրում է իր հեղինակութիւնը, իր անհատականութիւնը, իր երաժշտական գտարիւն արժեքն ու իր գիտութիւնը՝ այն աստիճան, որ մարդ ամբողջովին նորոգուած մի նուագախումբ լսելու տպաւորութիւն է ստանում»:**

Երաժշտասէր հասարակութիւնը մեծ հետաքրքրութեամբ սպասում էր համերգներին: Շատերը, յատկապէս երաժիշտներից եւ ուսանողներից, յաճախում էին փորձերին, չհամբերելով մինչեւ առաջին համերգը: Բոլորի ուշադրութեան կեդրոնում էր Օհան Տուրեանը, ինչպէս նաեւ մեր միւս հռչակաւոր փարիզաբնակ հայրենակիցը՝ երիտասարդ



Արամ Խաչատրեան եւ Օհան Տուրեան

սքանչելի դաշնակահար Ռաֆֆի Պետրոսեանը, որ իր նուրբ, պայծառ նուագով դեռ անցեալ տարի հմայել էր Երեւանի ունկնդիրներին:


Զասաւ առաջին համերգի երեկոն: Զայֆիլիարմոնիայի համերգային մեծ դահլիճը լեփ–լեցուն է: Նուագողները բեմի վրայ գրաւեցին իրենց տեղերը, եւ հիմա ամբողջ հսկայական դահլիճն սպասում է մէկ մարդու: Եւ ահա նա՝ փոքրամարմին երիտասարդը, որ պայթող ծափահարութիւնից կարծես ընկրկելով՝ դանդաղ ու գլխահակ քայլում է դէպի դիրիժորական պատուանդանը: Նա արտակարգօրէն յուզուած է, որովհետեւ Երոպայի շատ քաղաքներում փայլուն ելոյթներ ունենալուց յետոյ, այսօր, կեանքում առաջին անգամ, գլուխ է խոնարհում հայրենի հասարակութեան առաջ՝ իր հարագատ մայրաքաղաքի փառահեղ դահլիճի բեմից... Դադարում են ծափահարութիւնները, նա բարձրանում է պատուանդանի վրայ:

Իմ գործը չէ մասնագիտօրէն վերլուծել Օհան Տուրեանի կատարողական արուեստը: Ունկնդրի իմ ընկալումն եմ արտայայտում ես, եւ ունկնդրի համար՝ դիրիժոր Տուրեանը այն կատարող արուեստագետն է, որ չափազանց ինքնուրոյն եւ համոզիչ մեկնաբանելով երաժշտական գործը՝ իր ներքին տեսողութեամբ բացայայտում է արուեստի ճշմարտութիւնը: Նրա ձեռքի շարժումները պարզ են, կարծես նոյնիսկ սովորական, բայց նուագախումբի արտայայտչական միջոցները այնպէս են ներդաշնակում այդ շարժումներով, որ նրբերանգներն ալիք առ ալիք միահիւսում են մի ընդհանուր անթերի, անբիծ հնչողութեան մէջ, որը ցնցող մի ուժ է դառնում կուլմիւսացիոն պահերին:

Օհան Տուրեանը կարողացաւ ունկնդիրներին այնպէս վարակել Չայկովսկու սիմֆոնիայի խորունկ ողբերգականութեամբ, մարդկային տառապանքի մեծ տրամաթիզմով, որ սիմֆոնիայի վերջին հատնող ձայները մարուեցին դահլիճի քար լռութեան մէջ, եւ ընդարմացումը տեւեց մի պահ, մինչեւ հատուկէստ ծափեր ուշքի բերին հասարակութեանը, որ անմիջական իրականութեան վերադարձած՝ երկարատեւ օվացիայով մեծարեց դիրիժորէն: Պեթովէնի եօթերորդը նա հնչեցրեց իսկական պեթովէնեան շնչով, որպէս տառապանքի խորքերից բարձրացող տիտանի յաղթերգութիւն, որպէս մեծ լաւատեսութեան հիմն: Իսկ Չայկովսկու հինգերորդի կատարումը բառացիօրէն ցնցեց ունկնդիրներին. ոչ թէ այլ լեւ երաժշտութիւն, այլ մի ամբողջ մարդկային կեանքի խտացած եութիւնն էր կարծես (*հատուած*):

ԿԱՐՊԻՍ ՍՈՒՐԵՆԵԱՆ

1959



Լուրիֆիկ Դուրեան

ԼՈՒՐԻՖԻԿ ԴՈՒՐԵԱՆ

Արդի հայ քնարերգուքիւնը ծանր կորուստ կրեց՝ վախճանուեց գրական աւագ սերնդի երեւելի բանաստեղծներից մէկը՝ Լուրիֆիկ Դուրեանը, որը շուրջ երեք տասնամեակի հասնող բանաստեղծական ժողովածուներով, մասնաւորապէս՝ «Մաշտոց», «Ասք հողի» պոեմներով, «Լեռները չեն խոնարհուում», «Եռագոյն առագաստ», «Արել

խաչքար», «Եւ մանասա եւ նշխարք», «Քարէ արցունք» գրքերով, ինչպէս նաեւ բոլորովին վերջերս հրատարակած «Կեանք իմացեալ» յոբելեանական ընտրանիով մնայուն տեղն է հաստատել՝ ընդգծուած ազգային-հայրենասիրական թեմատիկայի, ինքնատիպ ձեռագրի եւ անշփոթելի արտայայտչամիջոցների շնորհիւ:

Լուրիֆիկ Դուրեանը փնտռուած հեղինակ էր նաեւ մեր երգահանների համար՝ նրա տեքստերով գրուել են բազմաթիւ սիրուած երգեր, որոնք ընդլայնել են նրա ճանաչման սահմանները: Նրա բանաստեղծութիւնները թարգմանուել

են աշխարհի բազմաթիւ լեզուներով, ինքը եւս ակտիւօրէն զբաղուում էր թարգմանութեամբ՝ թողնելով օրինակելի, բարձրարուեստ թարգմանութիւնների հրաշալի նմուշներ:

Լուրիֆիկ Դուրեանը ծնուել է 1933 թ. յունիսի 21ին Ռոստովի մարզի Միասնիկեանի շրջանի Չալթր հայաբնակ գիւղում: 1935 թուականին ընտանեօք տեղափոխուել է Յայաստան: Աւարտել է Մոսկուայի Գորկու անուան համաշխարհային գրականութեան ինստիտուտի բարձրագոյն դասընթացները: Երկար տարիներ պատասխանատու պաշտօններ է վարել Յայաստանի գրահրատարակչութեան ասպարեզում եւ բեղմնաւոր, շնորհակալ աշխատանք կատարել մեր հին եւ նոր գրականութեան արժէքաւոր գրքերի հրատարակման ասպարեզում:

Նա արժանացել է մի շարք մրցանակների, այդ թւում՝ Յովհ. Թումանեանի անուան գրական մրցանակի:

Իր սկզբունքայնութեան, մարդկային բարձր արժանիքների շնորհիւ Լուրիֆիկ Դուրեանը մեծ հեղինակութիւն էր վայելում գրական հասարակայնութեան շրջանում, սիրուած եւ ճանաչուած անուն էր թե՛ գրաքննադատների եւ թե՛ ընթերցողների կողմից: Եւ այդպիսին էլ կը մնայ մեր բոլորի յիշողութեան մէջ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՐՈՂՆԵՐԻ ՄԻՈՒԹԵԱՆ ՎԱՐՉՈՒԹԻՆ

ԱՆՁՆԱԿԱՆ

Եւ դու, որ հիմա ոչ թէ քեզ պեղում,
Այլ քո ձանձրոյթն ես յայտնում պեղուելու-
Առանց նեղուելու
Քեզ դնում ես միշտ
Ընթացքի մէջ նոր:
Եթէ որպէս հին, հպարտ քեզանով,
Յուցադրում ես մամոնտի կմախք
Եւ սեպագրուած սահման ու եզերք-
Հիմա ուզում ես
Քո երազները դու միահիւսել
Սկիզբ ցուցանող այն սլաքներիս,
Որ առեղծուածը, որ անքննելին
Բացայայտում են տքնութեամբ խստի...

Քո արիւնի մէջ
Դու ունենալով ամեն տարեթիւ-
Սկիզբ ես ուզում, անընդհատ սկիզբ:
Դու ցանկանում ես-
Պտոյտների մէջ քեզ անվերջ հսկի
Գոյութեան առանցք...
Դու ցանկանում ես լինել միշտ առատ
Եւ նուազումին լինել անընտել...
Դու ցանկանում ես արեւներ նետել
Տարածութեան մէջ այն հեռաձայնալ,
Որի մէջ դեռ նոր պիտի երեւան
Գոյութիւնները մոլորակախումբ:
Դու միշտ զգում ես, որ քո կրծքի տակ
Միայն նոր սիրտ է անվերջ բաբախում:
Եւ դու, որ հիմա ոչ թէ քեզ պեղում,
Այլ քո ձանձրոյթն ես յայտնում պեղուելու
Բիւր ապացոյցներ ունես հեղուելու
Որպէս նորութիւն...
Որպէս միայն նոր:
Դու չքացնելով վախը քեզանով
Քեզ ոչինչ ճամբիդ չունես սասանող:
Դու մարդ լինելով-
Միշտ դեպի մարդը կարող ես գնալ,
Դու միշտ այն բարդը կարող ես գնալ,
Որ ունակութիւն ունի պարզուելու,

Եւ այն գերագոյն խղճով մարզուելու,
Որ ընթացքի մէջ մարդաշատութեան
Դառնայ արգելքը մարդախեղումի...
Դու վերածուելով լոյսի տեղումի
Ականատեսը պիտի դառնաս դեռ
Այն հեղեղումի,
Որ պիտի տանի իր հետ վերջապէս
Խաւարումները կեանքի շեղումի:

Որպէս նորութիւն,
Որպէս միայն նոր-
Հազարամեակներ յետոյ կ'ընձեռնես
Վերասկիզբը քո նոր պեղումի:

26/10-77 թ

ՊԱՐՈՅՐ ՍԵՒԱԿԻՆ

Մենք այնքան շատ ենք քեզ հետ խօսում,
Դու այնքան շատ ես խօսում մեզ հետ.
Ապրողների մէջ չկայ հիմա
Քեզնից առաւել ապրող պոետ...
Դու ասում էիր միշտ թախիծով,
Թէ յիսուն տարի յետոյ միայն
Կը հասկանան քեզ ու կը կարդան.
Սխալուեցիր դու, այսօր, հիմա
Խօսքի շքերթն ես ամեն մի տան:
Թէ խնջոյք լինի, թէ հարսանիք,
Գիտեն՝ ով էլ որ արտասանի,
Գիտեն, որ պիտի արտասանի
Պարոյր Սեւակ:
Գիտեն, որ հիմա պիտի հեւայ
Քո տարածութիւնն անլռելի,
Դու սրբացածդ, դու սիրելի,
Մենք այնքան շատ ենք քեզ հետ խօսում,
Դու այնքան շատ ես խօսում մեզ հետ,
Ապրողների մէջ չկայ հիմա
Քեզնից առաւել ապրող պոետ:
Թէ հաւաքուում ենք, վիճում ենք թէ-

Դու ես լինում միշտ վիճողը թե՛,
 Եւ կարմրում է ճակատը քո
 Եթէ լինում ես յանկարծ դժգոհ:
 Բայց համոզելու քո մեծ շուքով
 Յանկարծ ժպտում ես լայնատարած
 Եւ մենք տեսնում ենք «Եղիցի լոյս»...
 Երանութիւնս է արդէն հոսում...
 Մենք այնքան շատ ենք քեզ հետ խօսում,
 Դու այնքան շատ ես խօսում մեզ հետ-
 Ապրողների մէջ չկայ հիմա
 Զեզկից առաւել ապրող պոետ:
 Թէ մենք կուուում ենք չարիքի դէմ,
 Թէ բարութիւն ենք մենք հաստատում,
 Դարձեալ վեհաշուք գալիս ես դու
 Եւ քո անհանգիստ խօսքի խորքով
 Ներկայութիւնս ես պարզելում քո-
 Միշտ շնորհակալ խոր յարգանքով
 Մենք այնքան շատ ենք քեզ հետ խօսում,
 Դու այնքան շատ ես խօսում մեզ հետ,
 Ապրողների մէջ չկայ հիմա
 Զեզկից առաւել ապրող պոետ:

18/1-78 թ.

ԵՒ ՊԱՐՈՒՄ ԷԻՆ

Երեք օր արդէն փրկել Շուշին ու,
 Կարծես դժոխքից փրկել մօրն իրենց,
 ԶԷՖ էին անում քաջերն հայկազուն,
 Եւ յաղթանակն էր
 Չենքի փոխարէն զօրեղ որոտում,
 Ու Շուշուայ անտակ ձորով խորախոր
 Էլ ոչ թէ ողբ, այլ
 Խնդրութեան ձայնն էր հեղեղուած յորդում...
 Երեք օր էր, որ տղերքը զինուոր,
 Բերդ-բերդ տղերքը ուս-ուսի տուած
 Պարում էին յաղթ,

պարում «Քոչարի»:
 Ու հեռացել էր, յաւետ հեռացել
 Շունչն ու ստուերը նզովեալ չարի:
 Պարում էին յաղթ.
 Սակայն որտեղի՞ց... ես էլ չիմացայ,
 Որտեղից եկաւ ու լցուեց իմ մէջ
 Մի յորդ ցանկութիւն,
 Թէ տղերքն այդ քաջ, փրկաեռ ու քաջ,
 Ինչ պապերից ու ինչ տեղից էին
 Ճառագած սերում:
 Ու պարում էին,
 Պարուրուած փառքի ու արդարութեան
 Մայիսապարգել շողք ու լոյսերում:
 Եւ պարզուե՛ց, պարզուե՛ց, որ կար, նաեւ կար,
 Տղերքի մէջ կար Վանի շառաւիղ
 Եւ ժառանգորդներ Սասնայ ու Մուշի...
 Թե՛ժավառում էր սրտերում նրանց
 Յաւերժաբորբոք վրեժը անմար,
 Վրեժը ցասման փրկարար ուժի:
 Խմբերգում էին նրանք կայծակոտ,
 Որ արդէն Շուշին սկիզբն է զօրեղ
 Յաղթանակների, պայքարների նոր,
 Որ կը գա՛յ, կը գա՛յ, շուտով կը գայ օր,
 Որ առաւել գոռ կը պարեն նրանք
 Իրենց պապերի ազատուած երկրում:
 Որ ունեն արդէն Աստըծոյ օրհնութեամբ
 Փրկագօր զէնքեր իրենց ձեռքերում:
 Ու պարում էին, որոտում էին
 նրանք կայծակոտ
 Եւ Շուշուայ անտակ ձորում խորախոր
 Էլ ոչ թէ ողբ, այլ
 Խնդրութեան ձայնն էր հեղեղուած յորդում...
 Արցախեան կապո՛յտ երկնքից ազատ
 Արեւն էր ժպտում, ինչպէս ժպտում է
 կարօտած մայրը
 Իր զինուոր որդուն, յաղթապանձ որդուն:

ԼՈՒԹՎԻԿ ԴՈՒՐԵԱՆ

ՆՐԱ ՀԱՄԱՐ ՄԱՅՐԸ ՀԱՅՐԵՆԻՔՆ ԷՐ, ՀԱՅԱՍՏԱՆ ԱՇԽԱՐՀԸ

Կեանքից հեռացաւ իմ ազնուագոյն ընկերը՝ բանաստեղծ Լուդվիգ Դուրեանը: Նա խորհրդաւոր բանաստեղծ էր, բնութիւնից օժտուած հանճարեղ անիմացութիւն: Ինքն իրեն չէր ճանաչում, իր արժէքը չգիտէր: Գուցէ արտաքուստ էր այդպէս: Հայի զաւակ էր, մանկութիւնից մօրը կորցրած իսկական հայ: Եւ նրա համար մայրը հայրենիքն էր, Հայաստանն աշխարհն իր մոլորակային ընդգրկումով:

Ճանաչում էի դպրոցական տարիներից, պիոներ պալատի գրական խմբակի կարճատեւ հանդիպումներից: Առաջին կուրսի ուսանող էի: Եկաւ համալսարան, խնդրեց գրական խմբակի մի աղջկանից վերցրած Չարենցի «Գիրք ճանապարհի»-ն վերադարձնել: Մերժեց, ասելով, որ նոյնիսկ խմբակի ղեկավար ընկեր Սուսաննայի պահանջով չեմ վերադարձրել, քանի որ այդ աղջիկը բանաստեղծ չէ եւ նրան այդ գիրքը հարկաւոր չէ: Այն ժամանակ Լուդվիգն ասաց, որ սիրում է այդ աղջկան եւ խնդրում է գիրքը վերադարձնել:

Որ այդպէս է, վաղն արի՛ ասացի եւ «սիրահարուած» Լուդվիգը ուրախ եւ հպարտ տարաւ գիրքը: Տարիներ յետոյ յիշում եւ ծիծաղում էինք մեր այդ անմեղ պատմութեան առիթով, քանի որ անգամ վերադարձուած գիրքը չմեղմեց քաղքենի աղջկայ սիրտը ու ինքն էլ անհետացաւ, գիրքն էլ: Բայց

այսպէս սկսուեց մեր բարեկամութիւնը... եղբայրութիւնը... հոգեհարազատութիւնը եւ խորացաւ մեր գրահրատարակչական համատեղ գործունեութեան ընթացքում:

Այսօր նա չկայ, Չկայ նաեւ իմ գրական աշխարհի աշխարհը: Կեանքը կանգ է առել ինչ-որ կետում: Ու յիշում եմ նրա դառնութիւնը, որ իրեն չգնահատեցին ո՛չ Խորհրդային Միութեան ժամանակ, ո՛չ ՀՀՇԻ, ո՛չ էլ հիմա: Բայց մեր բանում բախտը բերել էր՝ ընտանիքը, որը նրա յենարանն էր եւ տպագրուած գրքերը, որոնք նրան ոգեւորում-թելաւորում էին: Նա ստեղծել էր իր եզակի հոգեւոր գրականութիւնը՝ «Արշալոյսի ղօղանջներ»ից մինչեւ «Եռագոյն առագաստ»:


Նրա պոետիկան հայ քնարերգութեան մնայուն արժէքներից է, որով դաստիարակուելու են գալիք սերունդները:

... Սիրտս ցաւում է, լացը՝ բեկում է կոկորդիս մէջ. պիտի կարողանամ ինձ պինդ պահել նրա ընտանիքի անդամների ներկայութեամբ եւ յետոյ ասեմ բոլորին.

Պոետներին գնահատենք կենդանութեան ժամանակ, որոնք «Ապրում են դժուար, բայց մեռնում են հեշտ» (Պ. Սեւակ): Եթէ պոետներն ընդհանրապէս մեռնում են:

ՀԱՍԼԵՏ ԿԱՐՃԻԿԵԱՆ

ԷՂՈՒԱՐԴ ԱԼԱԳԵԱՆ



Էղուարդ Ալագեան

Կեանքի 83րդ տարում վախճանեց մեր գրական սերնդի աւագ ներկայացուցիչներից մէկը՝ բանաստեղծ, արձակագիր, թարգմանիչ, Հայաստանի մշակութի վաստակաւոր գործիչ ԷՂՈՒԱՐԴ ԱԼԱԳԵԱՆը սիրելի անուն թէ՛ մանուկ, թէ՛ մեծահասակ ընթերցողների համար:

Էղուարդ Ալագեանը ծնուել է 1927 թ. Օգոստոսի 19ին, Թբիլիսիում: Երկու տարի անց Ալագեանների ընտանիքը տեղափոխուել է Երեւան եւ բնակու-

թիւն հաստատել քաղաքի նշանաւոր ու հին թաղերից մէկում՝ Կոնդում: Այստեղ էլ անցել է գրողի մանկութիւնն ու պատանեկութիւնը, որն այնքան խոր ու անջնջելի հետք է թողել նրա ստեղծագործական կեանքում:

1952 թ. աւարտելով Երեւանի պետհամալսարանը, ուսումը շարունակել է Մոսկուայի Լեզուի ինստիտուտի ասպիրանտուրայում: Աշխատել է Պետհրատում, «Արեւիկ» հրատարակչութիւնում:

Առաջին գիրքը՝ «Անտառի տնակը» (1958 թ.) չափածոյ

հեքիաթ է, որին հետեւեցին «Ծիածան», «Կախարդական աշխարհ», «Մրգահանդէս» ժողովածուները:

Գրողը տարիներ շարունակ հաւաքել է հայկական ժողովրդական մանկական երգերը, դրանք հրատարակելով 1975ին՝ «Ոսկե հասկեր» խորագրով:

Ընթերցողների եւ գրաքննադատութեան կողմից ջերմ ընդունելութիւն գտան պատանիների, ինչպէս եւ մեծերի համար գրուած «Մենք ապրում ենք Կոնդում», «Մարդը մարդուն», «Կոնդի մարմանդ վերջալոյսը» գործերը: Նրա ստեղծագործութիւնների շարքում իրենց ուրոյն տեղն ունեն «Մի կեանքը քիչ է», «Ուրֆայի վերջին ահագանգը» պատմավեպերը: Վերջինս 1990 թ. արժանացել է ՀԳՄ Դ. Դեմիրճեանի անուան մրցանակին, իսկ «Աստուծոյ մարդը» ժողովածուն՝ «Հայ գրականութեան բարեկամներ» միութեան մրցանակին (1996 թ.):

Էղուարդ Ալագեանի ստեղծագործութիւններում առաջնային են երեւանեան թեմաները: 2001 թ. լոյս է տեսել «Արեւորդիներ. Երեւանի խաչմերուկներում» գիրքը, որն արժանացել է ՀԳՄ եւ Երեւանի քաղաքապետարանի առաջին մրցանակին: Այդ շարքից են «Երիվանի հայրերն ու այրերը», «Երեւանայ ծռերը» գրքերը:

Մեծ է Էղուարդ Ալագեանի աւանդ թարգմանութեան ոլորտում: Շնորհիւ նրա թարգմանութիւնների, հայ մանուկները ծանօթացել են Էդ. Լիրի, Վ. Կոչեւսկու, Ու. Ռաջաբի ստեղծագործութիւններին: Ալագեանի լաւագոյն թարգմանութիւններից են Ֆ. Պետրարկայի «Կանցոններ եւ սոնետները», Պ. Շելլիի «Ընտիր տողերը», Ռ. Ֆրայերմանի եւ Ջեյ Լոնտոնի պատմուածքներն ու վեպերը:

Էղուարդ Ալագեանի ստեղծագործութիւնները թարգմանուել են ռուսերէն, մոլտաւերէն, ուքրաւերէն եւ էսթոներէն:

Էդ. Ալագեանի գրական վաստակը դեռ երկար կ'ուղեկցի հայ ընթերցողին, մշտապէս վառ պահելով նրա յիշատակը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՐՈՂՆԵՐԻ ՄԻՈՒԹԻՒՆ

ՉԱՏԻԿ ԱՆՊԱՐԸ...

ՍԵՆ Չատիկի հոգում ծնուեց միւս երագը. ուզում էր տեսնել Անդրանիկ փաշային, կռուել նրա զօրքի մէջ: Կարապետը դէմ եղաւ ախր, փոքր ես, ո՞վ կ'ընդունի կամաւորների մէջ: Չարոն լաց եղաւ, բայց Չատիկն անդդուելի էր: Մի օր վեր կացաւ եւ առանց մի խօսք ասելու հեռացաւ տնից: Գնաց Փայաջուկ: Անդրանիկի զօրքն արդէն հեռացել էր գիւղից: Չատիկը որոշեց Հաւթվան գնալ, հայրենի գիւղը: Գնաց, գտաւ իրենց տունը՝ գետափին: Գետի ափին երեք բարդիներ կային, լաւ էր յիշում: Հիմա մէկն էր մնացել: Գտաւ տունը: Հին դուռը փակ էր մեծ կողպէքով: Յիշեց տատին: Ախր, հորից-մօրից յետոյ նա էր մնացել: Հիմա նա էլ չկայ:

Անշուկ մէկը մօտեցաւ նրան: Չճանաչեց: Մօտեցողը մի ծերունի էր, երկար մօրուքով, կաղ, ձեռնափայտից ամուր կառչած: Նայեց ծերուկը, ճանաչեց: «Աշոտ, դո՞ւ ես», - հարցրեց: Չատիկը յիշեց իր իսկական անունը: «Եկա՞ր, բալա, - տնքաց ծերունիին, չէ՞ս յիշում, ասենք, որտեղի՞ց, ձեր հարեւանն եմ: Խեղճ տատդ մեռաւ աչքը ճամբին, բալա»: Յետոյ դանդաղ, մօրուքի տակից դուրս քաշեց վզից կախուած մի կաշեփոկ: «Տատդ թողեց, բալա, ձեր տան բալնիքն է: Ասաց՝ որ գայ, կը տաս Աշոտին»: Վերցրեց, մօտեցաւ դրանը: Սարդոստայնը մոռացման պէս փակել էր ճանապարհը: Փորձեց բացել: Ծռռաց կողպէքը: Չատիկը ծերպ արեց: Տանիքը քանդուած՝ իջել էր ցած, իր տակ ջարդելով ամեն ինչ. սեղան, աթոռ, լայն թախտը: Նայեց՝ հողէ կտուրի եղեգները, բաց բերանի նման, ատամները ցից՝ ասես իրեն էին ծաղրում: Ամեն ինչ օտար թուաց իրեն՝ հողը, բակը, տունը, երկինքը: Յիշեց

Կարապետի խօսքերը: Նստեց դրան քարին եւ գլուխն առաւ ափերի մէջ: Չէ՞ որ պետք է կատարել առաջին երագանքը, յետոյ երկրորդը, գնալ Անդրանիկի բանակը: Գնաց առանց ետ նայելու: Բայց արդէն ճանապարհին լսեց, որ Անդրանիկ փաշան Դիլմանի մօտ գարդուփշուր է արել թուրքական բանակը, յետոյ անցել է Արաքսը, Հայաստան է գնացել:

Երբ վերադարձաւ Թաւրիզ՝ հաստատ որոշած, որ Հայաստան է գնալու, Կարապետը պառկած էր: Հիւանդացել էր: Չարոն ասաց, թէ շուկայում մնացել է յորդ անձրեւի տակ ու մրսել: Բայց Չատիկը չհաւատաց: Նա զգաց, երբ ներս մտաւ, երբ տեսաւ պառկած Կարապետին, որ կարօտից է: Չղջաց: Բայց ուշ էր: Հէնց նոյն օրը, ասես նրան սպասելիս լինէր, Կարապետը մահացաւ: Չատիկը մոռացաւ իր որոշումը՝ Հայաստան գնալու երագը: Մտածեց տունը պահելու մասին, Չարոյին մենակ չթողնելու մասին: Զառասուռից յետոյ վերցրեց Կարապետի նախշազարդ, արծաթէ գիւգիւմը, բաժակներով գօտին կապեց մէջքին: Ջուր լցրեց սափորի մէջ ու շուկայ գնաց: Այս անգամ Թաւրիզի մեծ, խառնաշփոթ շուկայում հնչեց Չատիկի կերկերուն ձայնը. «Բեմբուշլիմուկէ»:

Կարապետից յետոյ Չարոն երկար չապրեց: Տունը միանգամից դատարկուեց, ինչպէս տարիներ առաջ իրենց տունը՝ Հաւթանում:

Այդ յուսահատ օրերին էր, որ լաւ լուր լսեց. Պարսկաստանից հայերը գնում են Հայաստան: Չատիկի համար նորից կենդանացաւ իր առաջին երագը՝ Հայաստան: Որոշեց գնալ: Ծախեց Կարապետի տունը, եղած-չեղածը, խուրջիկի մի աչքում տեղաւորեց Կարապետի գիւգիւմը, միւսում՝ բաժակների գօտին, սափորը եւ սայլ նստեց: Գնացին մի քանի օր, մի

քանի գիշեր: Յայրենադարձող քարաւանը մեծ չէր: Յոյսն էր մեծ... Յոգնած ու տանջուած մարդիկ, երբ աչք բացեցին, տեսան՝ դիմացը մի պղտոր, յորդ գետ է հոսում: Արաքսն էր: Սայլապանը հրեց ննջող Չատիկին եւ մատով ցոյց տուեց դիմացի ափը. «Յրե՛ն Յայաստանը»: Սիրտը ծուլ եղաւ: Նրան թուաց, թէ դիմացի ափում իրեն են սպասում վաղուց մեռած իր հարազատները՝ հայրը, մայրը, տատը, Կարապետը, Չարոն...

Երեւան հասաւ: Յայրենի հողի վրայ ասես ուժ առած՝ նա դիմացաւ երկար ճամբին, չարչարանքին, փոշուն: Երեւանում ունեցած փողով Շիլաչի Մահլում տուն վարձեց՝ մի փոքր սենեակ, մէջը՝ սեղան, մի հին ֆուրածէ մահճակալ, շարդուած դռնակով կոմոդ: Ինչ անենք, այդքանն էլ բաւական է հայրենի հողի վրայ:

Միւս օրը խուրջինից հանեց նուիրական գիւզիւմը, սրբեց ճանապարհի փոշին, լուաց բաժակները, դարսեց տեղում, պղնձէ սափորը փայլեցրեց, շարքաթ պատրաստեց, որ նրան սովորեցրել էր Կարապետը, եւ առաւօտ կանուխ գնաց գործի: Յին շուկան, որ չգիտես ինչու, կոլխոզշուկայ էին ասում, ոչնչով չէր տարբերում Թաւրիզի շուկայից, միայն աւելի փոքր էր, կրպակները՝ կանաչ ներկած: Լիքը ժողովուրդ էր, եռուզեռ. մրգերի սարեր, ձմերուկի, դուրձմայի ու սեխի բլրակներ, էշերի գռռոց, խառնաշփոթ: Ամէն ինչ ասես նոյնը լինէր, միայն մի բան էր տարբեր՝ բոլորը հայերէն էին խօսում: Փորձեց կարդալ կանաչ կրպակների վրայի ցուցանկարները «Միս», «Կտորեղէն», «Յագուստ»: Ժպտաց, ամէն ինչ հայերէն է:

Ու նոր կեանքն սկսուեց այսպէս: Ամէն օր, առաւօտ վաղ շալակում էր իր հարազատ գիւզիւմը, որ խնամքով ծածկում էր լաթի կտորով, այստեղ էլ շոգ էր Թաւրիզի պէս, կապում էր բաժակների գօտին, վերցնում անբաժան սափորը, լցնում ջրով ու գնում էր շուկայ: Կոլխոզշուկայում նա արդէն հարազատ կերպար էր դարձել: Յաճոյքով էին խմում

նրա օշարակը: Բայց Չատիկն առաջուայ նման չէր ասում «լիմոնէ»:

- Չատիկ ախպար, մի բաժակ էլ, Չատիկ ախպար...

Այդ օրերին բոլոր հայրենադարձներին ախպար էին ասում:

- Յիմա, հիմա, - արձագանգում էր Չատիկ ախպարը, գօտիկից վերցնում էր բաժակը, արագ ցողում էր, կռանում մի քիչ եւ գիւզիւմի կտուցից բաժակի մէջ էր յորդում կլկլացող օշարակը՝ կարմիր գոյնի, սառը, պաղպաջուն:

Խմում էին շոգած երեւանցիները, սղալում բեղերը, տնքում.

- Օխա՛յ...

- Օխայդ անուշ, - արձագանգում էր Չատիկ ախպարը:

- Մէկ էլ, - կրկնում էր գոհ անցորդը, - Չատիկ ախպար:

Ախր, մենք բոլորս հայ ենք, ուրեմն՝ ախպար...

Պատահում էր, որ չարածի երեխաները, լսելով Չատիկ անունը, հեռուից ձայն էին տալիս.

- Չատի՛կ, Չատի՛կ, գատ արա, թելերդ ազատ արա:

Չէր նեղանում Չատիկ ախպարը: Նրանց նայելով, իր դառը մանկութիւնն էր յիշում: Յիշում էր իրենց գիւղը՝ հեռաւոր Պարսկաստանում, գետափի երեք բարդիները՝ հայրը, մայրը եւ որդին: Յիշում էր տատին, գիւղի փակուած դուռը՝ ծածկուած սարդոստայնով, ժանգոտ բանալին: Յետոյ յիշում էր Թաւրիզը, Կարապետին, որ իրեն հայրութիւն արեց, Չարոյին, որ մայր եղաւ իր համար: Նրանք էլ չկան: Յետոյ Արաքս գետը, Երեւանը... Չէ՛, չէր նեղանում Չատիկ ախպարը ո՛չ ոքից, ո՛չ մեծերից, ո՛չ երեխաներից, ո՛չ էլ Աստծուց: Չէ՛ որ հիմա իր տունն ունի, հայրենի տունը, չէ՛ որ շուրջը բոլորն էլ հայերէն են խօսում, չէ՛ որ բոլորը նրան ճանաչում են ու Չատիկ ախպար են ասում: Ախր, էլ ո՛ւմից, ինչի՞ց նեղանայ... («Գրական թերթ», 2002, թիւ 14- հատուած):

ԷՂՈՒԱՐԴ ԱՎԱԳԵԱՆ

ԽՕՍԸ ՅԻՇԱՏԱԿԻ

Դժուար է հրաժեշտի խօսք գրել Էդուարդ Աւագեանի մասին, մի մարդու, ում հետ երկար տարիներ աշխատել եմ «Խորհրդային գրող», «Արեւիկ» հրատարակչութիւններում, աղ ու հաց կիսել, կիսել ուրախ ու տխուր բազում օրեր: Մի գրողի, ում բոլոր գրքերը կարդացել եմ սիրով, յուզմունքով, երբեմն փորձել արժեւորել իմ գրախօսութիւններով: Յարտացել եմ, որ իմ աւագ գրչեղբայրը իր հարուստ փորձով, օգտակար խորհուրդներով ուսուցիչ է եղել ինձ եւ այսօր արդէն յայտնի բազմաթիւ գրողների համար, եղել շատերի առաջին գրքերի ճանապարհ բացողն ու կնքահայրը: Էդուարդ Աւագեանը մեր գրականութեան այն եզակի նուիրեալներից էր, ով տարիներ շարունակ անխոնջ ու անաղմուկ ստեղծագործելով՝ ընթերցողի սեղանին դրեց մանկական բանաստեղծութիւնների, բանահիւսական նիւթերի ինքնատիպ մշակումների, վէպերի ու վիպակների, դասական պարզութեան ու խորութեան հասած պատմութեան տասնեակ հատորներ: Գրեց ու արարեց ու թէւ արժանացաւ իր գրչակիցների ու գրաքննադատների բարձր գնահատանքին, սակայն մնաց պարզ ու հասարակ, անյաւակնոտ, երբեք անուանի գրողի կեցուածք չընդունեց, չձգտեց փառքի ու մեծարանքի...


Էդուարդը աչք բացելով Թբիլիսի քաղաքում, ապրեց ու հասակ առաւ Երեւանում՝ դառնալով նրա ո՛չ միայն արժանաւոր որդին, այլեւ տաղանդաւոր կենսագիրներից մէկը: Աւագեանի «Մենք ապրում ենք Կոնդում» եռահատոր վէպը իրաւացիօրէն դարձաւ ինչպէս հայրենի, այնպէս էլ սփիւռ-

քահայ ընթերցողների սիրելի գրքերից: Երեւանեան թեման Էդուարդի համար անցողիկ չէր. դրա հաստատումը եղան մեր մայրաքաղաքի հին ու նոր ժամանակների նշանաւոր իրադարձութիւններին ու մարդկանց նուիրուած «Արեւորդիներ», «Երիվանի հայրերն ու այրերը», «Երեւանայ ծռեր», «Երեւանեան խճանկար» գրքերը: Յայ ժողովրդի մաքառումներով լի պատմութեան էջերը նորովի ընթերցելու, ներկայի ու գալիքի համար դասեր քաղելու մտահոգութեամբ գրուեցին անուանի արձակագրի «Մի կեանքը քիչ է» (երկհատոր), «Ուրֆայի վերջին ահագանգը», «Գայլ Վահանը» վէպերն ու վիպակները, որոնց հայրենասէր հերոսները անշուշտ հոգեւոր հայրեր ու շահակիրներ եղան, շունչ ու ոգի հաղորդեցին արցախեան ազատագրական պայքարի մերօրեայ հերոսներին...

Յարուստ գրական ժառանգութիւն թողեց մեզ Էդուարդ Աւագեանը: Նրա ձեռագրերի մի մասը դեռեւս սպասում է իր լոյս աշխարհ գալու օրուան: Ես համոզուած եմ, որ դեռ նոր է գալու Էդուարդ Աւագեանի գրական վաստակի արժանի գնահատութեան ժամանակը: Իսկ խօսքս ուզում եմ աւարտել իմ սիրելի գրչեղբոր «Աստծոյ մարդը» հրաշալի վիպակի հերոսին ուղղուած բառերով, որոնք ես փոքր-ինչ վերափոխուած հասցեագրում եմ հենց իրեն՝ Էդուարդ Աւագեանին, «Զնի՛ր, Աստծոյ մարդ, խաղաղ քուն մտիր հայրենի հողում, քանզի դու ողջ կեանքում ազնուօրէն ծառայեցիր քո երկրին ու ժողովրդին, գրիչդ նուիրելով մարդու եւ մարդկային փառաբանմանը»: Այո՛, Էդուարդ Աւագեանը շատ էր նման իր վիպակի հերոսին: Թող հողը թեթեւ լինի նրա շիրմին...

ԼԻՊԱՐԻՏ ՍԱՐԳՍԵԱՆ

ՌԱՖԱՅԵԼ ՆԱՅԱՊԵՏԵԱՆ



Ռաֆայել Նահապետեան

Ժամանակակից հայ արձակը կորցրեց 70 ականների գրական սերնդի լաւագոյն ներկայացուցիչներից մէկին՝ Ռաֆայել Նահապետեանին, հեղինակ, որի ստեղծագործութիւնները սպասուած ու սիրելի էին գրական հասարակայնութեան, ընթերցող լայն շրջանակների կողմից:

Ռաֆայել Նահապետեանը ծնուել է 1945 թուականի Յունիսի ծիւղի, Երեւանում: 1965 թ. աւարտել է Երեւանի ելեկտրամեքանիկական տեխնիկումը, ապա աշխատել է որպէս աւագ լաբորանտ ելեկտրամեքանիկայի համամիութենական գիտահետազո-

տական ինստիտուտի հայկական մասնաճիւղում: 1971 թ. աւարտել է Երեւանի պետական համալսարանի բանասիրական ֆակուլտետը: 1971-73 թթ. ծառայել է խորհրդային բանակում: 1974-83 թթ. աշխատել է ՀՀ հեռուստատեսութեան եւ ռատիոհաղորդումների պետական կոմիտեում, որպէս գրական հաղորդումների գլխաւոր խմբագրութեան խմբագիր, ապա՝ աւագ խմբագիր: Տպագրուել է 1970 թուականից: Պատմուածքների առաջին՝ «Չրաշէկ նժոյգներ» խորագիրը կրող ժողովածուն լոյս է տեսել 1983 թ. ազգարարելով ինքնուրոյն ոճ ու ձեռագիր ունեցող հեղինակի մուտքը մեծ արձակ: Նրա յաջորդ՝ «Չրաձգարանի մեծ մրցանակը», «Մեղեդի երեւակայական ջութակի համար», «Ազգաւի աղջիկը», «Եւ ծագեց խաւարը» եւ այլ գրքերում առաւել զտուեց եւ լուսաւոր երանգներ ստացաւ նրա գրողական նկարագիրը: Նահապետեանի ոճը ռոմանտիկ ու բանաստեղծական էր, երազանքը՝ մաքրամաքուր, փիլիսոփայութիւնը՝ մարդու էութեան ազնիւ շերտերի բացայայտումը:

Ռաֆայել Նահապետեանը հեղինակ է նաեւ ռատիոպիսեաների, հեռուստատեսային ներկայացումների: Նրա ստեղծագործութիւնները թարգմանուել են ռուսերէն, ուկրաիներէն, չեխերէն եւ այլ լեզուներով: Արժանացել է մի շարք գրական մրցանակների:

Ռաֆայել Նահապետեանը հեռացաւ, մեզ թողնելով իր հրաշալի ստեղծագործութիւնները, որոնցում առկայ լոյսը, լաւատեսութիւնն ու կեանքի սերը դեռ երկար են ուղեկցելու մեզ, պայծառ պահելով նրա սիրելի յիշատակը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՐՈՂՆԵՐԻ ՄԻՈՒԹԵԱՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

ՏՈՒՆԴԱՐՁԻ ՃԱՆԱՊԱՐՅԻՆ (հատուած)

Արքայադուստրը, որ մինչ այդ կարօտ թագաւորութեան արքայազնին չէր նկատում, քանի որ, համաձայն հեքիաթների, պիտի հովուի հետ ամուսնանար, անմիջապէս սիրահարում է նրան, նստում յաղթողի պատուին ուղարկուած թելաւոր նժոյգն ու մեկնում է նրա հետ: Իսկ հովուը, ի վերջոյ շարժուելով, ելնում է տեղից ու կաղին տալով գնում է իր ոչխարանոցը եւ ճանապարհին ողբում է, անկեղծօրէն ցաւակցում ինքն իրեն, որ հեքիաթներին չէր հաւատում ու աննման, բացառիկ մի կեանքով ապրելու ահա այդպիսի փայլուն հնարաւորութիւն ձեռքից բաց թողեց:

Սօտաւորապէս այսպիսի մի հեքիաթ մանուկ օրերին պատմել էր ինչ-որ մէկը (հիմա նա համոզում էր իրեն, որ ոչ մի կերպ չի կարողանում յիշել, թէ ով էր պատմել): Յետագայում շատ բաներ փոխել էր, որոշ մանրամասներ դէն նետել ու անվերապահօրէն հաւատալով իր ստեղծածին (հաւատալ ու սպասել հրաշքների եւ դրանցով ապրել, միմիայն դրանցով) կամաց-կամաց մեծացել էր՝ հրաշքի ու հեքիաթային հրավառութեան սպասումով: Չնայած տարիներ անց, ժամանակ առ ժամանակ, այն կասկածն էր ունեցել, թէ հրաշքի սպասման իր այդ հաւատը շինծու է, հնարովի մի բան, որով քողարկում է իրական կեանքով ապրելու եւ այդ կեանքի թելադրած որոշա-

կի սահմաններում տեղաւորուելու անընդունակութիւնը: «Այնպէս որ, սխալը սկզբից է եղել, - մտածում էր նա, - հէնց այս պատճառով էլ ոչ մի հրաշք չէր, չկատարուեց»: Սակայն պայծառ ու յստակ հազուագիւտ պահերի, երբ ինքն իր հետ կատարեալ անկեղծ էր ու տիեզերական անսահմաբջջային ողջ համակարգով զգում էր, որ ողջ կեանքում սրտատրոփ ու համոզուած սպասելով հրաշքների, որոնք այդպէս էլ չէրան, ինքը, ճիշտ է, ձեռքից բաց է թողել իրական կեանքի հմայքներով ապրելու հնարաւորութիւնը, սակայն այդ սպասումը՝ սրբազան սարսուռով յագեցած, այնպիսի արտասովոր պահեր ու ապրումներ է շնայլօրէն պարգեւել իրեն, որ բացարձակապէս ոչ մի նշանակութիւն չունի՝ իր սովորական, շարքային կեանքում հրաշքներ եղել են, թէ՛ ոչ: «Կարելորդ սրբազան սարսուռով յագեցած ահա այդ պահերն էին, - մտածում էր նա եւ այնքան խիտ էին ու տարողունակ, որ արդէն իսկ հրաշք էին»:

Չեղինակը հրաժարում է այս մտքերին իր գնահատականը տալ: Համոզուած լինելով, որ դա արդէն ընթերցողների գործն է՝ ճշմարիտ ընթերցողների, որովհետեւ որոշ դժուարութիւններ անհրաժեշտ է միասին յաղթահարել: Իւրայիններով:

ՌԱՖԱՅԵԼ ՆԱՅԱՊԵՏԵԱՆ

ՌԱՖԱՅԵԼ ՆԱՅԱՊԵՏԵԱՆ ԱՆՈՒՆ-ԱԶԳԱՆՈՒԱՆ ՀՈՎԱՆՈՒ ՆԵՐՔՈՅ

Երբ հարազատ մարդու անակնկալ մահուան լուրը հասնում է քեզ, առաջին արձագանգը է լինում շուարելը՝ ո՞նց թէ: Ռաֆոն չկայ: Ինձ համար Ռաֆօ, որովհետեւ համալսարանական ընկերներ էինք: Ինձ համար նաեւ Ռաֆայել Նահապետեան էր, ծանրակշիռ անուր-ազգանուն, նուրբ զգայնութիւնների, գեղագիտօրէն սքանչելի պատմուածքների հեղինակ: Նա մեր կուս եկաւ լուռ-լռակեաց, ինքնամիտ, ոչ մէկիս հետ գրեթէ չփոխուող: Յետոյ պիտի իմանայինք, որ նրա մէջ կան նաեւ հողմերի պէս ծաւալուող մղում-տարերքեր, Բագոսի հետ երդուեալ ընկերակցութիւն, որին զարմանալի հրաշքով դիմանում էր նրա վտիտ մարմինը: Բայց նա գրող էր: Ամէն ինչից առաջ եւ յետոյ: Ուրախ ժամանցի ոչ մի հրաւեր չէր մերժի: Մի անգամ, երբ արդէն ապրում էր Մեծա-

մորում, ընկերներով հրաւիրեցինք նրան երկօրեայ զուարճութեան՝ Սեւանի ափին: Հրաժարուեց: Հրաժարումն անսպասելի էր: Ինչքան պնդեցինք՝ մնաց անդրդուելի: «Ես մի քանի կանաչ թուփ ունեմ մարգերումս, - ասաց, - ամէն օր խնամում եմ, առանց ինձ չեն մնայ»:

Հիմա, այս ծանր պահին, ուզում եմ մի միսթարիչ խոստովանութիւն անել յիշատակիդ, սիրելի՛ ընկերս. եթէ մարգերիդ թփերը չեն ապրի առանց քեզ, ապա իմացիր՝ քո միւս խնամեալները, որ քո գրքերն են, կ'ապրեն քեզ հետ երկար, շատ երկար՝ Ռաֆայել Նահապետեան անուն-ազգանուն անկորնչելի հովանու ներքոյ:

ՂՈՒԿԱՍ ՍԻՐՈՒՆԵԱՆ


ՎԱՐՈՒԺԱՆ ՆԱԼԲԱՆԴԵԱՆ

Կեանքի 81րդ տարում իր մահկանացուն կնքեց արձակագիր, դրամատուրգ, թարգմանիչ, 1971 թ. ԶԳՄ անդամ ՎԱՐՈՒԺԱՆ ՆԱԼԲԱՆԴԵԱՆը:

Վ. Նալբանդեանը ծնունդ է 1929 թ. Դեկտեմբերի 14ին, Գահիրեում (Եգիպտոս): Նախնական կրթությունը ստացել է ֆրանսիական գիշերօթիկում, իսկ 1942-1947ին սովորել է Գալուստեան ազգային վարժարանում: 1947ին ներգաղթել է Զայաստան: 1952ին աւարտել է Երեւանի Խ. Աբովեանի անունի մանկավարժական ինստիտուտի հոգեբանության եւ տրամաբանության ֆակուլտետը: Աւարտելուց յետոյ ուսուցչություն է արել, այնուհետեւ աշխատել է տարբեր հիմնարկություններում: Առաջին ժողովածուն՝ «**Յրաչիկը եւ ձկան իւղը**» տպագրել է 1961 թ.: Զեղինակը 20ից աւելի արձակ ժողովածուների (պատմուածք, վիպակ, հեքիաթ, էսսե) թատերգությունների: Կարելի է առանձնացնել «**Անծանօթ աղջիկը**», «**Կրկ-սային երազանքներ**», «**Դարպասը երրորդ յարկում**», «**Կայեն**», «**Ռադամես**», «**Տրդատ Յրդ**», «**Բիբլիական թատերապատում**», «**Յրաժարեալները**», «**Խայտաբղետ խոհագ-**

րութիւն» եւ այլ գրքեր:

Վ. Նալբանդեանը հրաշալի թարգմանությունների հեղինակ է. Բնագրից թարգմանել է Սարտրի, Կամիուի, Իոնեսկոյի, Անուի, Դիւրասի, Ադամովի եւ այլոց ստեղծագործությունները: Իր հերթին, նրա ստեղծագործություններն են թարգմանուել բազմաթիւ լեզուներով:



Վարուժան Նալբանդեանը ինքնատիպ էր ո՛չ միայն իր մտածողութեամբ, որով առանձնանում էր նրա գրականությունը, այլեւ՝ իր կենցաղով ու կենսակերպով: Նրա կեանքի փիլիսոփայական ելակետը Էկզիստենցիալիզմն էր եւ ֆանտաստիկ ռեալիզմը, որոնց կանոններով էլ ապրում ու ստեղծագործում էր: Ընթերցողների եւ նրան ճանաչողների յիշողութեան մէջ նա այդպիսին էլ կը մնայ որպէս մէկը, որն ազատուած էր ամեն տեսակի պայմանականություններից:

ԶԳՄ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

ՄԵՐ ԶԱՐՑԱԹԵՐԹԻԿԸ.

ԻՆՉՊԵՐՍ ԵՆՔ ՄԵՆՔ ԳՐՈՒՄ

Մի ժամանակ գրառումներ անում էի, յետոյ դադարեցրի: Այն, ինչը չեմ մտաբերելու, համարում եմ, որ արժանի չէր ո՛չ յիշուելու, ո՛չ էլ գրուելու:

Միշտ էլ մտովի նախապատրաստում եմ մի նոր աշխատանք: Ներշնչանքն իմ հաւատարիմ սպասուհին է: Գրամեքենայիս առջեւ նստում եմ, երբ միտքը բաւականին հասուն է՝ կոմպոտ դառնալու եւ բանկայի մէջ փակուելու համար: Գրելուս տեւողութիւնը չեմ պլանաւորում:

Իմ կերպարները փաստացի նախատիպերից վերացարկուած են, ապա նորից կոնկրետանում են գեղագիտորէն: Ինձ համար անձը նշանակութիւն չունի, քանի որ միշտ փոխարինելի է: Կարելոյը սովորութեամբ կարծրատիպ դարձած երեւոյթն է, որն իր կրկնողութեամբ կայուն է, յամառ ու վտանգաւոր: Ներկայ իրականութիւնից ես օգտուում եմ, ինչպէս գնորդը՝ շուկայից:

Լաւագոյն խթանիչներից է ընթերցողի հաւանութեանն արժանանալու վիճակը, երբ ժամանակաւորապէս յայտնաբերում ես մի հոգեքոյր կամ հոգեղբայր, մի բան, որ կարող է լինել նաեւ շինծու: Գրողական գրաստի համար խթանիչ է պրոֆեսիոնալ մակարդակի գրախօսութիւնը, որը նաեւ ճշգրտում է իւրայատկութիւնները եւ առնչութիւնները գրական հոսանքների հետ, թերութիւնների հանդէպ բարեմիտ քննադատութեամբ: Դրամը նրա համար է, որ չլինելու դէպքում հաղորդակից լինես չքաւորների հոգեվիճակին: Փառքը խօսքերի լափիզող հնչեղութիւն է, երեխաների, կանանց, ամբոխին մատուցուած թոզ, որ փչում են կազմակերպուած, բրեժնեւափայլ շքանշանների

համանմանութեամբ: Ինչպէս որ մենակութեան մէջ խորհրդածելիս լինես, որ քո ննջեցեալ սիրուհին քեզ այլեւս չի դաւաճանելու, յետմահու փառքը քո ուրուականի համար նոյնքան աննըշան ու անհեթեթ պիտի լինի, երբ միայնակ ու լքուած՝ հատուցելիս լինի իր մեղքերի դիմաց:

Իմ գրական ուսուցիչները մահացել են, եւ ես նրանց հետ միակողմանի եմ բանավիճում, քանի որ նրանք չեն կարող ինձ պատասխանել: Նրանց փաստաբանները, մեծամասամբ գաւառամիտ, հնազանդ են պաշտամունքի իրենց ռեֆլեքսին եւ հաշուի չեն առնում, որ համաշխարհային գրական մշակոյթը գնահատելով հանդերձ, վաղուց է, ինչ պսակագերծ են արել իրենց դասականներին:

Ամփոփելու համար ասեմ, որ գեղարուեստական գրականութիւնը դոնքիշտութիւն է, նոյնքան սևանկ, որքան քաղաքակրթութեան միւս յաւակնոտ դրսեւորումները: Գրականութեան օգուտը համազօր է կախաղանի օղակին, որ սեղմում է հարցական նշանի նման եւ քեզ ութ րոպէ ժամանակ է ընծեռում խորհելու՝ մինչեւ համլետեան լռութեանը համարժէք ամօրեայ քառու իր ժխտով կը խլացնի ընթերցողի գանգատուփ պարունակութիւնը: Գրողական փոքրիշատէ նպատակայարմար աշխատանքի փոխարէն ես պիտի նախընտրեի լինել շրջմուխկ, դերվիշ, արկածախնդիր: Այդ էլ, երեւի, բաժին ընկնի իմ յաջորդ վերամարմնաւորմանը: Մինչ այդ՝ քաղաքակրթութիւնը լաւագոյն դէպքում կիսաճմարտութիւններ է պարտադրում նաեւ գեղարուեստական գրականութեանը, որին չի փրկի մանկամիտ Զենրիկ Միլերեան կղկղագրութիւնը (թող ներող լինի հարցաթերթիկը կազմած Կ. Ա.-ն):

ՎԱՐՈՒԺԱՆ ՆԱԼԲԱՆԴԵԱՆ

Վարուժան Նալբանդեան, հաւատում էիր վերամարմնաւորմանը: Զո ահռելի իմացութեամբ, ուրույն տրամաբանութեամբ եւ հանրագիտարանային փաստարկներով ապացուցում էիր դրա ճշմարտացիութիւնը: Զեզ համարում էիր ժերար դէ Ներվալի վերամարմնաւորումը 20րդ դարում: Իսկ ինչպիսի՞ն կը լինես յաջորդ կարմայում...

Ասում էիր հազարամեակի սկիզբ է, նաեւ դարասկիզբ, ժամանակները փոխուում են: Մարդիկ խենթացած են, բոլորովին չեն տարբերում թացը չորից: Այդպէս էլ չհասկացան քեզ, չհասկացան, որ նման չես, ուրիշ ես: Զեզ դա պետք չէր: Սարտրեան Էկզիստենցիալիզմով յագեցած՝ այդպէս էլ մնացիր Իոնեսկոյի, Ադամովի, Կամույի ասբուրդի մէջ: Սարտրը հրաժարուեց Նոպելեան մրցանակից, դու էլ չձգտեցիր անցողիկ փառքի ու դափնիների:

Այսօր առաւել, երբ ոգու սով է, մարդիկ իբր թէ ձգտում են ազատութեան: Ինչպէս միշտ, մարդկանց գնահատում են իրենց հագուկապով, խորամանկ խօսելածեւով կամ պարտադրուած ապրելակերպով: Սակայն դու ի սկզբանէ ազատագրուած էիր այդ ամենից: Իւրայատուկ էիր ամեն ինչում, դրա համար էլ անդին էիր, չհաղորդակցուած:

Իսկ ես, որ շարունակում եմ հիանալ քո թարգմանությունների, թատերգությունների, փիլիսոփայական մտքերի, ընդհանրապէս քո արածի ընդգրկումներով, չեմ կարող չարժեւորել քո վաստակը ժամանակի մէջ եւ ասում եմ. չգիտեմ, ինչպիսին կը լինի քո յաջորդ վերամարմնաւորումը, բայց եթէ նոյնիսկ միայն ժան-Փօլ Սարտր թարգմանած լինէիր, հերիք էր, որ մնայիր մեր մշակոյթի անդաստանում:

ԱՆՆԱ ՅԱԿՈՒԲԵԱՆ



Շ ա տ կարճ ժամանակ մը ետք, ընթերցողին ձեռքը կը հասնի Յակոբ Օշականի «Գիրքերուն քովն ի վեր» անուն հատորը, ուր վերլուծումի ենթարկուած են շուրջ քսանամեակի մը (1910-1938) ընթացքին արեւմտահայ թէ սփիւքահայ տասնհինգ գրողներուն լոյս ընծա-

յած 15 գործերը:

Թափանցումի եւ արժեւորման այդ բացառիկ էջերուն կարգին, Օշական յետադարձ հայեացքներու եւ հեռահայեաց սաւառնումներու ատեն, Աստուածամօր, հայ կնոջ, հայոց հայրենիքին ու հերոսութեան մասին կատարած է այնպիսի հաստատումներ, որոնց դժուար է այսօր հանդիպիլ գիրքերուն մեր այսօրուան անդրադարձներուն մէջ:

Ստորեւ անոնցմէ մէկը, միւսները՝ իրենց հերթին,-

- Մայր սո՛ւրբ սքանչելի լուսո՛յն, որ զաստուածն ամենայն յաւիտեանց յորովայնի քո՛ւմ կրեցեր, եւ ցնծութիւն աշխարհի ծընար ըզբանն աստղա՛ծ. աղաչե՛մք:

Մայրս սուրբ բարեխօսեա՛:

- Աղաչեա վասն մեր գառ ի քե՛ն զմարմնացեալն աստղած, որ խոնարհեցաւ ի հայրական ծոցո՛յ. էա՛ն մարմին ըստ մարդկային բընութեանս՝ առնել խաղաղութիւն յերկինս եւ յերկրի՛. աղաչե՛մք:

- Աղաչեա վասն մեր սրբուհի՛. զմիածին քո գորդին. եւ վասն հոգւոցն հանգո՛ւցելոց՝ ընդունիլ յարքայութիւնն երկնից, եւ տալ մասն եւ բաժին ընդ սուրբս ամենա՛յն. աղա՛:

Այսպէս շարականներու վարդապետական բոլոր չորութիւններէն ու մտամարզական յաճախ հետեւեակ, երբեմն շատ բարձր խաղերէն դուրս, մենք կը հանդիպինք հրաշալի արուեստով եւ ամենանուրբ հիւսքով երգերու: Ասոնք առաւելապէս կը ներկայանան մեզի **Մեծացուցէ**ներու ձեւին տակ:

Բոլոր **Մեծացուցէ**ները գրեթէ քիչ բացառութեամբ, ամենէն անուշ ծաղիկներն են հայ մտքին: «Մայր **Սուրբ սքանչելի լուսոյն**» աղօթքը իր մեծապէս տպաւորիչ եղանակովը ու ամենախորունկ մարդկայնութեամբը դիւցազներգութեան մը հմայքը կը թողու իմ վրաս: Անահիտն է, որ կ'օրհնուի անոր մէջ. «Աղբիւրներուն ջուր» կը պաղատին, «առատ պտղաբերութիւն» կ'աղերսեն հայ վանականները Ամենօրհնեալ Տիրուհիէն: Ոչ մէկ եկեղեցի այդքան խանդաղատանք կրցած է դնել իր պաշտամունքին մէջ հանդէպ Աստուածամօր: Հայ վանականները արեւի, լոյսի ու կնոջ երգը երգած են ամենաճոխ ու բարձրօրէն մաքուր, յաճախ շատ յանդուգն սաւառնումներու մէջ:

Կնոջ երգերը, չարաբաստօրէն արգիլուած հայ վանականին, իրենց այդ ձեւին մէջ, երկնային մօր լոյսովը թրթռուն՝ պիտի մնան հայ գրականութեան լաւագոյն ու ամենէն աւելի զգացում պարունակող քերթուածները:

Յ. ՕՇԱԿԱՆ

ԼՈՅՍ ՏԵՍԱՆ

ԼՈՅՍ ՏԵՍԱՆ

ՅԱԿՈԲ ՊԱԼԵԱՆ

Ամերիկա, Ամերիկա... «Երազ եւ խորտակման լքումներ»

(Վեպ)

Փարիզ-2011

ԺԱԳ Ս. ՅԱԿՈԲԵԱՆ

Յաւերժօրէն Քոյր...

(Հոգեբանական վեպ)

Փասատինա, 2011

ՄԵՍՐՈՊ ՀԱՅՈՒՆԻ

Հ. Յակոբոս վրդ. Տաշեան

գրախօսողն ու գրաքննադատը

- ուսումնասիրութիւններ -

Այնճար-2011

ԷՏՈՒԸՐՏ ԱԼՊԻ

Ո՞վ է վախցողը վիրճինիա Վուլֆէն

ԹԱՏԵՐԱԽԱՂ ԵՐԵՔ ԱՐԱՐ

Հայացուց՝

ՎԱՐՈՒԺԱՆ ԽՏԸՇԵԱՆ

Խմբագիր՝ ՍԵՂԱ ԳՐԻԳՈՐԵԱՆ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ՝

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ՝ ՀԱՄԱԶԳԱՅԻՆԻ «ՎԱՅԷ ՍԷԹԵԱՆ» ՀՐԱՏԱՐԱԿՉԱՏԱՆ

NIGOGHOS SARAFIAN

THE BOIS DE VINCENNES

Translated from Western Armenian

by CHRISTOPHER ATAMIAN

With an Introduction

by MARC NICHANIAN

ՓԹԻԹ

Մանկապատանեկան պարբերաթերթ, պատկերազարդ

Խմբագրական կազմ՝

ՎԵՐԺԻՆ ԵՒ ԿԱՐՕ ԱԲՐԱՀԱՄԵԱՆ

Պէյրուզ, 2012, 32 էջ